ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԱԿՈԲԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԻ

ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆՔԻ ԵՒ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ ԻՇԽԱՆԱՏՈՀՄԵՐԸ ԵՒ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԵՐԸ Թ-ԺԳ ԴԱՐԵՐՈՒՄ (ՊԱՏՄԱ-ԱՂԲԻՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ)

**Է. 00.02 «Համաշխարհային պատմութիւն»
մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երեւան 2014

Ատենախօսութեան թեման հաստատուել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գիտական խորհրդում

Պաշտօնական ընդդիմախօսներ՝ Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ
Ժիրայր Շառլի Տէտէեան

Պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր
Հայրապետ Գէորգիի Մարգարեան

Պատմական գիտութիւնների դոկտոր
Ազատ Արտաշի Բոզոյեան

Առաջատար կազմակերպութիւն՝ ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ

Պաշտպանութիւնը կայանալու է 2014 թ. Սեպտեմբերի 16-ին, ժամը 15.00, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմութիւն» մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցէն՝ 0019, Երեւան, Մարշալ Բաղրամեանի պող., 24/4:

Ատենախօսութեանը կարելի է ծանօթանալ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքուած է 2014 թ. Օգոստոսի 15 ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ
Ռ. Պ. Ղազարեան

Ուսումնասիրութեան առարկան եւ ընդհանուր բնութագիրը: Հին եւ միջնադարեան հայ եւ օտար մատենագրական երկերի, թերեւս, գլխաւոր առանձնայատկութիւնն է այն, որ դրանց հեղինակները հասարակութիւնների ու ժողովուրդների պատմութիւնը ներկայացնում են գերազանցապէս տիրակալների եւ տիրապետող դասի կենցաղավարութեան նկարագրութեան ձեւով: Նոր դարաշրջանի պատմագիտութիւնն իր առջեւ, բնականաբար, դնում է հին հասարակութիւնները, պետութիւններն ու էթնոսները շատ աւելի լայն ընդգրկումով պատկերացնելու եւ հետազօտելու խնդիր, սակայն ոչ պակաս գիտական կարեւորութիւն է վերագրում հէնց տիրապետող դասակարգերի, այդ թւում՝ իշխանական եւ արքայական տոհմերի համակողմանի ուսումնասիրութեանը: Ակնյայտ է, որ ամեն մի ժամանակաշրջանի ներքին ու արտաքին քաղաքական «մակընթացութիւններն ու տեղատւութիւնները» համարժէք արտացոլում են գտել բոլոր հասարակութիւնների (տուեալ դէպքում՝ նաեւ Հայաստանի ու հարեւան այսրկովկասեան երկրների)՝ նախ եւ առաջ իշխող վերնախաւի, աշխարհիկ եւ հոգեւոր աւագանու ներկայացուցիչների կեանքում ու ճակատագրում: Միւս կողմից՝ առաւել մեծ չափով հէնց վերջիններիս կենսավիճակով, սեփական շահերի ու տնտեսական խնդիրների ընկալումով, ազգային-մշակութային ու գաղափարախօսական մղումներով եւ կոնկրետ գործնական արարքներով է պայմանաւորուած եղել տուեալ հասարակութեան, պետութեան ու ժողովրդի ճակատագիրը իւրաքանչիւր պատմաշրջանում: Ինչպէս գրում է խնդիրը յատուկ ուսումնասիրութեան առարկայ դարձրած Հ. Մարգարեանը՝ «Պատմութեան շրջադարձային պահերին հայ աւատատէրերի այդ շերտն է առաջին հերթին կողմնորոշուել եւ մշակել (ազգային եկեղեցու ղեկավարութեան մասնակցութեամբ) հայոց քաղաքական ուղեգիծը»: Մեր աշխատանքը եւս վերաբերում է միջնադարեան Հայաստանի մի հատուածի եւ հարեւան Աղուանք երկրի աւատատիրական դասը կազմող իշխանատոհմերի պատմութեան համալիր քննութեանը՝ այն առանձնայատկութեամբ, որ դրան ուղեկցում է աղբիւրագիտական նիւթի համալիր պատմա-բանասիրական վերլուծութիւնը:

Թեմայի արդիականութիւնը եւ ուսումնասիրութեան նպատակն ու խնդիրները: 428 թ. Իրանի արքայից արքայ Վռամ Գուրն իր հրամանագրով վերացրեց Արշակունեաց թագաւորութիւնը դեռ 385 (կամ 387) թ. Հռոմէական կայսրութեան ու Սասանեան Պարսկաստանի միջեւ բաժանուած՝ հազարամեայ անկախ պետականութիւն ունեցող Մեծ Հայքի արեւելեան հատուածում, եւ մարզպանութեան վերածուած երկրից կտրելով նրա հիւսիս-արեւելեան Ուտիք նահանգը՝ ընդգրկեց այն իր տէրութեան միւս նորաստեղծ մարզպանութեան կազմում, որն ստացել էր «Առան» անունը (տարբ.՝ «Աղուանք», «Ալբանիա», «Ռան» եւն): Նրա որդի Յազկերտ Բ-ն իր 450-451 թթ. հակաքրիստոնէական հալածանքների շրջանում նոյն մարզպանութեան մէջ մտցրեց նաեւ Ուտիքի հարեւան Արցախ նահանգը: Առան – Ռան անունը վերցուել էր Վռամի հրամանագրով այդ մարզպանութեան մի մասը դարձած Բուն Աղուանքի թագաւորութեան (անտիկ Ալբանիայի՝ Կապաղակ մայրաքաղաքով) անուանումից, որը ձեւաւորուել էր Ք. ա. Ա դ. սկզբներին՝ տարածուելով Կուր գետի ստորին հոսանքից հիւսիս, մինչեւ Կովկասեան լեռնաշղթան՝ դէպի Կասպից ծով իջնող նրա Դերբենդի լեռնաբազուկով (այդ թագաւորութեան նոր՝ Արշակունեաց արքայատոհմը գոյատեւեց նաեւ մարզպանութեան կազմում եւ գահազրկուեց Կաւատի 523 թ. հրովարտակով): Ե դ. առաջին կէսի այս վարչական փոփոխութիւններից յետոյ Արցախ եւ Ուտիք հայկական նահանգների ու Կուրի ձախափնեայ Բուն Աղուանից երկրի (ուր լեզգիալեզու աղուանական ցեղերի էթնոհամախմբման գործընթացը կանգ առաւ մետաէթնիկ ընդհանրութեան փուլի վրայ՝ չաւարտուելով միասնական էթնոսի կազմաւորմամբ) ճակատագրերը մի քանի դար ընթացան միեւնոյն հունով, եւ այդ նոյնականութիւնը որոշ չափով պահպանուեց նաեւ ուշ

միջնադարում ու նոր ժամանակներում: Առան-Աղուանք մարզպանութեան մէջ, որի քրիստոնեայ բնակչութեան վրայ տարածւում էր «հաւասարների մէջ առաջինի» կարգավիճակ ունեցող Հայոց կաթողիկոսութեան նուիրապետութեանը ենթակայ, բայց առանձին հոգեւոր կառոյց՝ Աղուանից եկեղեցու իրաւազօրութիւնը, հասարակական ու մշակութային զարգացումներն ընթանում էին համախմբման միտումներով: Բայց Մաշտոցի եւ աղուան վարդապետ Բենիամինի ջանքերով ստեղծուած գիրն ու գրաւոր մշակոյթը համեմատաբար սահմանափակ զարգացում ապրեցին, եւ յատկապէս Զ դարում Աղուանքի վարչական ու հոգեւոր կենտրոնների՝ Կուրի էթնիկապէս հայկական աջափնեակ (նորակառոյց Պարտաւ մայրաքաղաք) տեղափոխուելուց յետոյ, երկրի քրիստոնեայ հասարակութեան զարգացումն ընթացաւ գերազանցապէս հայկական գրաւոր մշակոյթի հիմնաբազայի վրայ: Խալիփայութեան տիրապետութեան տակ յայտնուած Աղուանքում մահմեդականութեան տարածման դարաշրջանում բունաղուանական մետաէթնիկ ընդհանրութեան քրիստոնեայ մնացած մասը վերջապէս համախմբուեց իբրեւ «ուդիներ» ինքնանուամբ միասնական էթնոս, իսկ մահմեդականացած հատուածի գերակշիռ մասն՝ իբրեւ «լեզգիներ» ինքնանուամբ էթնոս-ժողովուրդ (պահպանուեցին նաեւ մի քանի փոքր մահմեդական եւ լեզգիալեզու ժողովուրդներ): Քրիստոնեայ զանգուածի արեւմտեան հատուածում (Հերէթ) նաեւ ընթացաւ վրացիացումը, իսկ արեւելեան մահմեդական հատուածում (Շիրան)՝ պարսկացումը, որը ԺԹ դարում աւարտուեց «թաթեր» ինքնանուամբ էթնոսի ձեւաւորմամբ (բայց եւ՝ որոշ մասի թիւրքացմամբ-ադրբեջանացմամբ): Հնարաւոր է արձանագրել նաեւ բունաղուանական զանգուածի ինչ-որ մասի հայացումը, հիմնականում՝ էթնոհամախմբուած ուդիների գործառամարզից (արեալից) արեւելք («հայ թաթեր» եւն): Միասնական «երկրում» ինտենսիւ էին նաեւ ժողովրդագրական տեղաշարժերը՝ արցախ-ուտիքցի հայերի յաճախակի տեղափոխութիւնը Կուրից հիւսիս եւ ուդիների անցումն աջափնեակ (առաւելապէս՝ նախալեռնային ու դաշտաբերանի շրջաններ՝ Գիւլիստան, Սարովի գիւղախումբ եւն):

Նորաստեղծ մարզպանութեան վրայ տարածուած «Աղուանք» երկրանունը, որը հայերէնի յոգնակի **Ք**-ի շնորհիւ հաւասարապէս նշանակում էր ե՛ւ երկիրը, ե՛ւ բնակիչներին, արդէն Ե դարի վերջերին լիովին ընդունուեց նաեւ Կուրի աջափնեակի հայութեան կողմից իբրեւ «սեփական» երկրի անուանում: Միջնադարեան աղբիւրներն, իրենց դարաշրջանի աշխարհընկալման չափանիշներով, հազուադէպ են յատուկ արձանագրում կոնկրետ տարածքի բնակչութեան էթնիկ պատկանելութիւնը (այն բացառութիւններով, որ շատ կարեւոր են արդի ազգագրագէտների համար)՝ բաւարարուելով երկրանուան, այս դէպքում՝ «Աղուանք»-ի նշմամբ: Զուգահեռաբար՝ նաեւ Բուն Աղուանքի վրայ էր տարածւում «Արեւելք» («Արեւելից») անուանումը (ի վերջոյ դասականացուած՝ իբրեւ «Հայոց Արեւելից կողմանք»), որը սկզբնապէս վերաբերում էր լոկ Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան Արցախ-Ուտիք նահանգներին: Նման իւրայատուկ եզրութաբանութիւնը որոշ շփոթութիւններ առաջ բերեց յատկապէս նոր ժամանակներում, սակայն ունէր նոյն արդիւնը (էֆեկտը) դեռ միջնադարում: Դա իր յայտնի «բացասական» արտայայտութիւնը գտաւ Ժ դ. արցախցի հայ պատմիչ Մովսէս Դասխուրանցու մօտ (կոչուած նաեւ՝ Կաղանկատուացի), ով ելնելով աւատական մասնատուածութեան խորացման պայմաններում իր երկրամասի հայ աշխարհիկ ու եկեղեցական վերնախաւի մեծապէս կենտրոնախոյս շահերից՝ փորձեց բառացիօրէն «ստեղծել» իր «Աղուանից» կամ «Արեւելեայց» երկրի առանձին պատմութիւնը, որի ակունքն ու կենտրոնը նա թիւրընկալմամբ կամ յատուկ անտեսելով վաղմիջնադարեան աւանդոյթը՝ համարում էր հայ աջափնեակը: Իր դարաշրջանում, որը նաեւ մեր խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի (Թ-ԺԳ դդ.) սկիզբն է, այդ միտումները գրեթէ հասան էթնիկ միասնականութեանը սպառնացող չափերի

(հայ ազգի էթնոմասնատման եղանակով դուստր հայալեզու էթնոսի ձեւաւորման իրական վտանգով), թէեւ դա յաջողուեց յաղթահարել արդէն ԺԱ դարի ընթացքում:

1860 թ. Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի հրապարակումից յետոյ մասնագէտները համարեցին, որ հետեւելով նորայայտ տեղացի հեղինակի պատկերացումներին՝ հարկ է սրբագրել անտիկ եւ վաղմիջնադարեան աւանդոյթի վրայ յենուած նախկին մօտեցումները, ըստ որոնց մինչեւ Սասանեանների կողմից 428 թ. Հայոց թագաւորութեան վերացումը էթնիկ Ալբանիան տեղորոշւում էր լոկ Կուրից հիւսիս: Ի դ. առաջին կէսի գիտնականների մօտ ձեւաւորուեց այն մտայնութիւնը, թէ Կուրի աջափնեակը նախապէս բնակեցուած է եղել աղուանական ցեղերով, որոնք երկար ապրելով Հայոց պետութեան մէջ՝ ինչ-որ պահի հայացել են (մինչեւ Ե դարը կամ աւելի ուշ՝ վաղ միջնադարում): Սակայն Ի դ. երկրորդ կէսի բազմաթիւ հայագիտական-կովկասագիտական աշխատանքներում հանգամանալից ցոյց տրուեց, որ իրականում տեղի է ունեցել ոչ թէ աջափնեայ կովկասալեզու բնակչութեան ուծացում հայ էթնոսի մէջ, այլ ընդամենը՝ վարչական փոփոխութիւնների հետեւանքով «Աղուանք» անուան տեղափոխում նաեւ աջափնեակի վրայ: Հարեւան ադրբեջանական պատմագրութիւնը զուտ քաղաքական պատճառներով ամեն գնով ձգտել է ոչ միայն կառչած մնալ հին տեսակէտին, այլեւ գիտական հանրութեանը փաթաթել այն «գիւտը», իբրեւ թէ Արցախ – Ուտիքի բնակչութիւնն «ուծացել-հայացել» է շատ աւելի ուշ՝ միայն ԺԹ դ. սկզբին (Գաճասարի կաթողիկոսութեան վերացումից յետոյ): Արցախեան ազատագրական պայքարից եւ քաղաքական փոփոխութիւններից յետոյ այդ հակագիտական միտումները, որ իրաւացիօրէն ընդհանրացուել են «բունիաթովականութիւն» դիպուկ եզրոյթի տակ, էլ աւելի են խորացել՝ հասնելով պատմա-աղբիւրագիտական նիւթի անսքող խեղաթիւրման (աղբիւրների հրատարակում՝ հակառակ պատկեր ներկայացնող դրուագների դուրս նետումով, բնագրերի զաւեշտալի փոփոխումներ, եզրութաբանութեան աղճատում, հիմնազուրկ պնդումների տարափներ): Գրականութեան մէջ մատնանշուած է նաեւ «բունիաթովականութեան» նպատակադրումը՝ հայերին եւ Ադրբեջանի հանրապետութեան միւս ազգութիւններին «զրկել» հայրենի երկրում բնակուելու պատմական մոտիւացիայից եւ նրանց մէջ ներարկել եկուորի ու «տնուորի» հոգեբանութիւն: Պիտի նաեւ արձանագրել, որ Ադրբեջանի պետական քարոզչամեքենայի ճնշումների եւ ուղղակի հալածանքների հանդիման՝ տեղաբնիկ հայութիւնը ցուցաբերել է ֆենոմենալ հաւատարմութիւն իր ազգային էութեանը (ի տարբերութիւն յատկապէս՝ մահմեդական ազգութիւնների, որ մեծ չափով դարձան քարոզչական պատերազմի զոհն ու հասան կիսաուծացած վիճակի), իսկ հայ մասնագէտները (Յ. Անասեան, Ա. Մնացականեան, Բ. Ուլուբաբեան եւ ուրիշներ) դրսեւորել են իրենց իբրեւ հայրենի երկրի բոլոր դարաշրջանների պատմութեան ու մշակոյթի պաշտպանութեան մարտիկներ (կարելի է ասել՝ պատմական հայրենիքի սահմանապահներ)՝ ըստ արժանւոյն կասեցնելով բունիաթովական խեղաթիւրումների արմատաւորումը համաշխարհային պատմագիտութեան մէջ:

Այնուամենայնիւ, ներկայումս էլ չափազանց արդիական են մնում Կովկասեան Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանք երկրամասի անկողմնակալ ու խորացուած հետազօտութիւնները: Կարելի է վստահ լինել, որ դա մեր օրերի հայագիտութեան եւ կովկասագիտութեան կարեւոր բնագաւառներից է, որի ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է կատարել թէ՛ լայնութեամբ (նորայայտ մատենագրական, վիմագրական եւ հնագիտական նիւթերի ընդգրկումով ու արժեւորումով), եւ թէ՛ խորութեամբ (այսինքն՝ այդ նիւթերի հետազօտութեան մակարդակը մշտապէս պահելով դասական եւ ժամանակակից գիտութեան տեսական մշակումների ճշմարիտ բարձրութեան վրայ): Նշուած հանգամանքների լոյսի ներքոյ զարգացած միջնադարի կամ աւատական մասնատուածու-

թեան դարաշրջանի Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերի եւ արքայատոհմերի ուսումնասիրութիւնը, նրանց ծագման, կառուցուածքի, էթնիկ պատկանելութեան ճշգրիտ վերհանումն ու զարգացման ուղղութիւնների գիտական քննութիւնը, որոնք կազմում են այս ատենախօսութեան նպատակների ու խնդիրների լայն շրջանակը, կարելի է գնահատել իբրեւ արդի հայագիտութեան եւ կովկասագիտութեան առաջնահերթութիւններ: Աշխատանքի կարեւոր նպատակն է նաեւ յատուկ քննական անդրադարձերով սրբագրել ու ճշտել գրականութեան մէջ թափանցած այն տեսակէտները, որ արդիւնք են աղբիւրների վրիպեալ եւ թերի ընկալման կամ մեկնաբանման:

Ժամանակագրական ընդգրկումը: Պարզ է, որ նշուած խնդիրների ամբողջական լուսաբանութիւնը հնարաւոր չէ առանց՝ գոնէ իբրեւ յետնախորք՝ նախորդող ժամանակահատուածի պատմական իրողութիւնների լիարժէք վերհանման: Այդ պատճառով աշխատանքի ժամանակագրական սահմաններն իջնում են մինչեւ անտիկ եւ վաղ միջնադարի դարաշրջանները, թէկուզ եւ՝ պահանջուող ծաւալի մէջ հնարաւոր է կատարեալ մանրակրկիտութիւն ապահովել հէնց սոյն ատենախօսութեան վերնագրում արձանագրուած ժամանակի՝ Թ-ԺԳ դարերի, այսինքն՝ զարգացած աւատատիրական յարաբերութիւնների դարաշրջանի իրողութիւնների համար: Սա երկարատեւ, բարդ ու տարաբնոյթ հարցադրումներ պարունակող ժամանակաշրջան է (մէկուկէս հազարամեակ), բայց միայն այդ բոլոր՝ պատմա-քաղաքական, բանասիրական-լեզուաբանական, պատմա-աշխարհագրական, ազգագրական, մատենագրական, վիմագրագիտական, տոհմաբանական եւ անգամ անձնաբանական (պրոսոպոգրաֆիկ) հարցադրումների հնարաւորինս սպառիչ գիտական քննութիւնն ու լուծումներն են ապահովում ճշգրիտ պատկերացում Թ-ԺԳ դդ. Հայոց Արեւելից կողմանց եւ հարեւան աւատատոհմերի մասին:

Թեմայի մշակուածութիւնը եւ աշխատանքի գիտական նորութիւնը: Խնդրոյ առարկայ բնագաւառը վաղուց գրաւել է նոր ժամանակների գիտութեան ուշադրութիւնը: Դեռեւս ԺԹ դարի վերջերին՝ 1893-1895 թթ., նրան վերաբերող մշակումներն իր երկու աշխատութիւններում («Աղուանից երկիր եւ դրացիք», «Արցախ») ամբողջացրել էր Մ. եպ. Բարխուդարեանցը, իսկ 1914 թ. նրա ներկայացրած պատկերի ճշգրտմանը լրջօրէն ձեռնարկեց Կ. եպ. Տէր-Մկրտչեանը («Դօփեանք եւ Մելիք-Շահնազարեանք»): Մի քանի տասնամեակ անց իրենց հիմնարար աշխատանքները հրապարակեցին Ն. Ադոնցը («Բագրատունեաց փառքը») եւ Գ. Յովսէփեանը («Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ»): Այնուհետեւ խնդրոյ առարկայ իշխանատոհմերին վերաբերող հարցադրումներն էապէս ճշտուեցին Ս. Բարխուդարեանի «Արցախի, Շաքիի եւ Փառիսոսի իշխանութիւնները IX-X դարերում» ընդարձակ յօդուածում, ցաւօք՝ լոյս տեսած յետմահու (2011 թ. լոյս տեսաւ նաեւ նրա հանգամանալից մենագրութիւնը՝ «Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений»): Դրան յաջորդեց 1975 թ. Բ. Ուլուբաբեանի՝ «Խաչենի իշխանությունը X-XVI դարերում» հիմնարար մենագրութիւնը, որն աղբիւրագիտական աւելի համակարգուած նիւթերի, մասնաւորապէս՝ ամբողջական վիմագրական դիւանների եւ յիշատակարանների ժողովածոների մատուցած նիւթի հիման վրայ բազմաթիւ ճշգրտումներ մտցրեց նախորդող պատկերացումների մէջ (1997 թ. դրանցում խիստ կարեւոր ուղղումներ կատարեց Գ. Կիրակոսեանն իր «Հայաստանը Լանկ-Թամուրի եւ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում» մենագրութեան մէջ): Գրեթէ նոյն ժամանակ խնդրոյ առարկայ իշխանատոհմերի մանրակրկիտ տոհմաբանական աղիւսակներ պատրաստեց եւրոպացի պատմաբան Կ. Թումանովը («Manuel de généalogie et de chronologie pour l’histoire de la Caucasie chrétienne /Arménie-Géorgie-Albanie/»), իսկ վերջերս (2012-ին) համեմատաբար աւելի ճշտուած աղիւսակներ հրատարակեց Արմէն-Քլոդ Մութաֆեանը («L'Arménie du Levant /XIe-XIVe

siècle/»), ով արդէն որոշ չափով օգտագործել է նաեւ մեր վերջին տարիների մշակումները: Իհարկէ, զուգահեռաբար կարեւոր էին նաեւ հարեւան իշխանատոհմերին ու արքայատոհմերին (Լոռու եւ Տաւուշի Բագրատունիներ, Զաքարեաններ, Վահրամեաններ, Օրբէլեաններ եւն) նուիրուած աշխատութիւնները՝ Կ. Ղաֆադարեանի, Գր. Գրիգորեանի, Ռ. Մաթեւոսեանի, Հ. Մկրտումեանի, Ա. Շահնազարեանի, Հ. Մարգարեանի եւ այլ մասնագէտների հեղինակութեամբ:

Վերջին տասնամեակի ընթացքում Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանքի էթնո-քաղաքական պատմութեանն ու պատմական աշխարհագրութեանը վերաբերող հետազօտութիւններին զուգահեռ մեր ուշադրութիւնը մեծապէս սեւեռուել է մատենագրական աղբիւրների գիտա-քննական բնագրերի կազմման եւ վիմագիր նորայայտ նիւթերի վերծանութեան ու հրատարակման վրայ: Այդ աշխատանքներն առնչուել են ե՛ւ հայ դասական մատենագրութեան երկերին (Տիրակացու «Ժամանակագրութիւն»-ը, Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» երկը, Յովհան Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ը, Է դ. անանուն հեղինակի «Աշխարհացոյց»-ը եւն), ե՛ւ վաւերագրերին ու կանոնական փաստաթղթերին («Գահնամակ», «Զօրանամակ», Աբրահամ Աղբաթանեցու, Եղիա Արճիշեցու եւ այլ «Թղթեր», եկեղեցաժողովների հաստատած կանոնախմբեր, այդ թւում՝ Աղուանից Վաչագան Բարեպաշտի հրաւիրած Աղուէնի ժողովի կանոնները), ե՛ւ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում բառացի արտագրութեամբ պահպանուած եւ արցախեան ծագում ունեցող մեծ ու փոքր ծաւալով բազմաթիւ երկերի գիտական բնագրերի կազմմանը («Վաչագանի վէպ», Անանուն Կաղանկատուացու «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն», «684 թուականի պատմութիւն» եւն), ե՛ւ նորայայտ կամ նորովի ու ճշգրիտ ընթերցուած վիմագրերին: Այդ բնագրերի բանասիրական վերլուծութիւնը, հեղինակների ու գրութեան ժամանակի պարզումը, ձեռագրածառերի կազմումը եւ նորայայտ նիւթերի ընթացիկ պատմա-մշակութային ծանօթագրումներն, անշուշտ, կարող են դասուել մերօրեայ պատմագրութեան գիտական նորոյթների շարքին: Բայց միաժամանակ՝ աղբիւրագիտական այդ էապէս նոր ծաւալը թոյլ տուեց ամբողջապէս նորովի ընկալել ու գնահատել գրականութեան մէջ արծարծուող շատ իրողութիւններ, այդ թւում՝ Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերի ու արքայատոհմերի հետազօտութեան բնագաւառում: Դա անհրաժեշտութիւն առաջացրեց ձեռնարկել ամբողջական ճշգրտումների խնդրին՝ լրացնելով ու սրբագրելով մեր գիտելիքները բազմաթիւ տեղերում:

Ատենախօսութեան մէջ ամփոփուած համալիր քննութեան շնորհիւ այսօր կարող ենք խօսել այն մասին, որ աւատական մասնատուածութեան շրջանում թագաւորական կարգավիճակ են ձեռք բերել ոչ միայն Շաքիի եւ Փառիսոսի, այլեւ Գորոզուի եւ Խաչէնի իշխանութիւնները: Ներկայումս, թերեւս, կարելի է վերջնապէս յաղթահարուած համարել Շաքիի Բագրատունեաց արքայատոհմի եւ Կուրի աջափնեակի Առանշահիկների ազգակցական կապի մասին՝ հնուց եկող վրիպեալ մօտեցումները: Կարելի է պարզաբանուած համարել «Աղուանից իշխան» հաստատութեան ստեղծման պահի (610-ական թթ.), «Առանշահիկներ» եւ «Միհրանեաններ» կոչուած իշխանատոհմերի իրական (հայկական) ծագման, Ներքին ու Վերին Խաչէնի բաժանումը Հասան Կրօնաւորեալի նոյնանուն որդիների (Խօխանաբերդցի եւ Հաթերքցի Վախտանգների) հետ կապելու, Դօփեան տոհմի հիմքում վերջիններիս միւս եղբայր Գրիգոր Ա Ծարեցուն (Դօփի ամուսին Հասան Ա-ի հօրը) տեսնելու, Գանձասարի կառուցող Հասան Ջալալի կին Մամքան իշխանուհու՝ Դսեղի Մամիկոնեաններից սերելու խնդիրները եւ այլն:

Աշխատանքի տեսական-մեթոդական հիմքը: Ատենախօսութեան մէջ կատարուած մշակումներն առանձնանում են նրանով, որ լինելով, ըստ էութեան, պատմա-աղբիւրա-

գիտական, պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական բնոյթի՝ դրանք այնուամենայնիւ յեւուում են մատենագրական ամենաբազմակողմանի հետազօտութեան, այսինքն՝ ծագող պատմական, ազգագրական ու բանասիրական խնդիրների առաւել մանրակրկիտ քննութեան վրայ, որը բնորոշ է հայ դասական պատմագիտութեանը եւ աղբիւրագիտութեանը (Ն. Բիւզանդացի, Ն. Ակինեան, Ն. Ադոնց, Պ. Անանեան եւ այլոք): Կարելի է համարել, որ հէնց դա է մեր գիտական աշխատանքի գլխաւոր մեթոդաբանական հիմքը: Նման մօտեցումով հնարաւոր է դառնում նաեւ բուն պատմա-քաղաքական, պատմա-աշխարհագրական եւ աղբիւրագիտական այլեւայլ կնճիռների՝ բազմաբնոյթ աղբիւրների սպառիչ ընդգրկման ու դաշտային որոնումների արդիւնքների վրայ յենուած առաւել մանրամասն վերհանումը՝ այդպիսով յաւակնելով ներկայացնելու նախկին ու նոր եզրայանգումների բոլոր հիմքերի վերաբերեալ ամբողջական տեղեկատու: Բացի այդ՝ յաղթահարւում է հայագիտութեան մէջ, թերեւս, աւանդական դարձած այն մօտեցումը, երբ Մեծ Հայքի Արցախ – Ուտիք աշխարհների կամ նրանց հարեւան Բուն Աղուանքի խնդիրները քննւում էին առաւելապէս ընդհանուր ձեւով՝ առանց գուցէ եւ տեղային նշանակութեան մանրամասների մէջ մինչեւ վերջ խորանալու: Քանի որ մեր հարցադրումներն էապէս առնչւում են նաեւ էթնիկական խնդիրներին, նշենք, որ դրանց քննութեան համար մեզ հիմք են ծառայել էթնոսների եւ էթնիկ գործընթացների մասին խորհրդային շրջանի ազգագրութեան մէջ մանրակրկիտ մշակուած տեսութեան դրոյթները (Յու. Բրոմլեյ, Ս. Տոկարեւ, Ն. Չեբոքսարով, Ս. Հարութիւնով եւ ուրիշներ):

Աշխատանքի կիրառական նշանակութիւնը: Ատենախօսութեան մէջ ներկայացուած նոր մօտեցումները եւ ճշգրտումները պէտք է նպաստեն խնդրոյ առարկայ բնագաւառում հետագայ մշակումների ընդլայնմանը եւ խորացմանը: Դրանց հիման վրայ կարող են կազմուել գիտա-մեթոդական եւ ուսումնական նոր ձեռնարկներ: Ատենախօսութեան բնագրին ուղեկցող՝ մեր պատրաստած քարտէզները, տոհմածառերը եւ գրչանկարները (յաւելուած-ներդիրներում) կարելի է օգտագործել յարակից բնագաւառներում (քարտէզագրութիւն, պատմական աշխարհագրութիւն, լեզուաբանութիւն եւն):

Աշխատանքի փորձաքննութիւնը: Ատենախօսութեան մէջ առկայ բոլոր մշակումները եւ պնդումները պարբերաբար ներկայացուել են գիտական հանրութեանը՝ հայրենի եւ արտասահմանեան գիտական մամուլում կամ ժողովածուներում (այդ թւում՝ «Մատենագիրք Հայոց» մատենաշարում) հրապարակուած աշխատութիւններում եւ հանրապետական ու միջազգային բազմաթիւ գիտաժողովներում (Երեւան, Մոսկուա, Սանկտ Պետերբուրգ, Աշգաբադ, Թբիլիսի, Ստեփանակերտ, Փարիզ, Քեմբրիջ) ընթերցուած զեկուցումներում: Դրանք արտացոլուել են մեր հրատարակած երկու մենագրութիւններում (1987 եւ 2009 թ.), մի քանի տասնեակ գիտական յօդուածներում եւ գիտա-քննական բնագրերի առաջաբաններում: Հրապարակումից առաջ մեր աշխատանքները, որպէս կանոն, քննարկուել են ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Քրիստոնեայ Արեւելքի բաժնի նիստերում (այդպէս նաեւ՝ սոյն ատենախօսութիւնը):

Ատենախօսութեան կառուցուածքը: Ներկայացուած աշխատանքը բաղկացած է Առաջաբանից, հինգ գլուխներից (իրենց բաժիններով ու ենթաբաժիններով), Ամփոփումից (Եզրակացութիւններ), Օգտագործուած գրականութեան ցանկից (համառօտագրութիւնների ցանկով) եւ վեց Յաւելուածներից. դրանցից երկուսը քարտէզներ են (անտիկ Աղուանքը եւ Արցախ – Ուտիքն ըստ «Աշխարհացոյց»-ի), երրորդը Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից» երկի ձեռագրածառն է, յաջորդ երկուսը տոհմածառեր են (Խաչէն – Փառիսոսի, Շաքիի եւ Գորոզուի իշխանատոհմերի), իսկ վերջինը Գտչավանքի շինարարական արձանագրութեան գրչանկարն է:

Գլուխ Ի. «Բուն Աղուանքի արքայատոհմերը եւ Արցախ – Ուտիքի իշխանատոհմերը անտիկ դարաշրջանում եւ վաղ միջնադարում»: Գլխի առաջին բաժինը կոչւում է. **«Բուն Աղուանքը եւ նրա արքայատոհմը անտիկ շրջանում»**: Այստեղ քննարկումն սկսւում է Ք. ա. Դ դ. իրողութիւններից՝ անտիկ աղբիւրներում Կովկասեան աղուան[1] – ալբանների մասին ամենավաղ յիշատակութիւնից, որը կապուած է Ալեքսանդր Մակեդոնացու արեւելեան արշաւանքի հետ: Ք. յ. Բ դ. պատմիչ Արրիանոսի հաղորդմամբ՝ Դարեհ Գ-ի եւ Ալեքսանդրի միջեւ Ք. ա. 331 թ. տեղի ունեցած Գաւգամելայի ճակատամարտին պարսից տարացեղ բանակի կազմում մասնակցում էր նաեւ աղուանների զօրաջոկատը (կադուսների եւ սակեսինների ցեղային ջոկատների հետ եւ մեդացիների առաջնորդ Ատրոպատէսի հրամանատարութեան տակ): Արրիանոսի նշում է, որ իր աղբիւրը Ք. ա. Դ-Գ դդ. հեղինակ եւ Մակեդոնացու ուղեկից Արիստոբուլոսն էր: Այդ վաղ շրջանում աղուաններին յիշատակել են նաեւ Ք. ա. Գ դ. հեղինակներ Պատրոկլէսը (ով Սելեւկեանների հրամանով հետազօտել էր Կասպից ծովի ափերը) եւ նրանից օգտուած աշխարհագետ Էրատոսթենէսը, որոնք արձանագրել են աղուանների բնակուելը ծովափին՝ կադուս-կատիշներից հիւսիս: Ընդ որում, Ստրաբոնի, Պլինիոս Աւագի եւ այլ աղբիւրների տեղեկութիւնները համադրելով՝ պէտք է ուղղել գրիչների վրիպումը եւ Պատրոկլէսի աղուանական ափին վերագրել հէնց 5000 ստադիոն ձգուածութիւն (իսկ 300-400՝ կադուսական ափին), որը նոյնանում է աւելի ուշ ծագած Աղուանից թագաւորութեան Կասպիական ափագծին՝ Կուրից մինչեւ Դերբենդի անցքը: Աւելի վաղ, Հերոդոտոսը (Ք. ա. Ե դ.) Կասպիցի արեւմտեան ափին, Կովկասեան լեռների շրջանում գիտէր լոկ բարբարոսական ցեղերի՝ մաս կազմած Աքեմենեանների տէրութեան: Ըստ նոր ուսումնասիրութիւնների՝ այս երկրամասը եղել է Աքեմենեանների ստեղծած 20-21 սատրապութիւններից 18-րդի կազմում, որը գրաւում էր Կովկասեան լեռներից հարաւ մինչեւ Վիրահայոց լեռներ եւ ապա Կուրի գետագիծն ընկած տարածքը: Այդ սատրապութեան 3 ցեղերից վերջինն «ալարոդներն» էին՝ այլուստ անծանօթ անունով, որի տակ պիտի ընկալել հետագայի Բուն Աղուանք երկրի բնակչութեանը՝ Ալազան գետի միջին հոսանքից մինչեւ Կասպից ծով: Նրա **ռոդ** բաղադրիչը, գուցէ, կարող է դիտարկուել որպէս իրանական լեզուների «գետ», «ջուր» նշանակութեամբ «ռոդ/ռուդ» բառը (rōδ) եւ կապուել Կուրի հետ, իսկ **ալա՝** չպարզաբանուած նշանակութեամբ բաղադրիչը կարելի է գնահատել իբրեւ հետագայ «**Ալբա**նիա», «**Աղուա**նք», «**Առա**ն», «**Հեր**էթ» անունների՝ նոյնպէս դեռ լրիւ չպարզաբանուած նշանակութեամբ իմաստային հիմքերի հետ կապ ունեցող: Հերոդոտոսի մի վկայութեան հիման վրայ (Դերբենդով սկիւթների Ք. ա. Է դ. մեծ ներխուժման մասին) հաւանական է մտածել, որ 18-րդ սատրապութեան տարածքը դեռ Մարական տէրութեան մաս է եղել:

Պարզաբանուած է, որ Կուրի՝ որպէս Հայաստանի եւ աղուանական ցեղերի միջեւ սահմանի մասին, կարելի է խօսել՝ սկսած հայ էթնոսի կազմաւորման աւարտական փուլից (Ք. ա. Է դ. առաջին կէս): Ք. ա. Բ դ. սկզբի համար Ստրաբոնը նկարագրում է Սելեւկեաններից անկախացած Հայոց արքաներ Արտաշէսի ու Զարեհի «նուաճումները», բայց դրանք թուարկելիս ոչինչ չի ասում աղուանների կամ Կուրի աջ ափի մասին, ուստի այդ շրջանը (հետագայ Ուտիք – Արցախը) հայ վերջին Երուանդունիներից բնականոն ձեւով էր ժառանգուել Արտաշէսի պետութեան մէջ: Ք. ա. Ե-Ա դարերի էթնիկ

---

[1] Մասնագիտական գրականութեան մէջ շրջանառու անուանաձեւերից՝ *աղուան*, *աղվան*, *ալբան*, *ալբանացի*, *աղվանացի*, յարմար ենք գտնում կիրառել հայ մատենագրութեանը հարազատ առաջին տարբերակը, որը նոր ուղղագրութեան անցնելիս ըստ հնչման վերածուել է «աղ**վ**ան»-ի, բայց կարող է նաեւ կիրառուել իր աւանդական գրութեամբ (ու հնչումով)՝ զերծ պահելով մեզ ինչ-ինչ շփոթներից:

պատկերն առարկայօրէն արտացոլում է հնագիտական նիւթը. Կուրից մինչեւ Կովկասեան լեռների հիւսիս-արեւելեան փեշերը տարածուած «Յալոյլութեփէի հնագիտական մշակոյթը» կապուած է Ք. ա. Ե – Ք. յ. առաջին դդ. աղուանական ցեղերի կենսագործունեութեան հետ, իսկ նրան զուգահեռ Կուրից հարաւ ի յայտ եկող՝ այսպէս կոչուած «Կարասային թաղումների մշակոյթը» նոյնանում է մնացեալ Հայաստանի հնագիտական նիւթի հետ, ուստի եւ վկայում հէնց հայ էթնոսի՝ մինչեւ Կուր տարածուած լինելը:

Աղուանից 26 ցեղերից միացեալ թագաւորութեան ծագման մասին Ստրաբոնի տեղեկութեան ուշադիր վերլուծութիւնը («հիմա բոլոր [ալբաններ]ի վրայ մէկն է թագաւորում, իսկ սրանից առաջ ամեն մի առանձին լեզու [ունեցող ցեղ] առանձին էր թագաւորում, լեզուներն էլ 26-ն էին՝ միմեանց միջեւ յաճախակի առնչութիւններ չլինելու պատճառով») ցոյց է տալիս, որ այդ իրադարձութիւնը պիտի թուագրել Ք. ա. Ա դ. 60-ական թթ. Պոմպէոսի արշաւանքներին անմիջապէս նախորդած ժամանակով, այսինքն՝ դարի սկզբներով: Ե՛ւ ժամանակային միջակայք, ե՛ւ պատճառ մատնանշող ու իւրայատուկ տրամաբանական կառուցուածքով («հիմա … իսկ սրանից առաջ [νυνι ... πρότερον δε] … պատճառով») այդ վկայութիւնն, անշուշտ, վերագրելի է Պոմպէոսի ուղեկիցներին, ովքեր իրենց առջեւ ոչ թէ աղուանական ցեղերի խումբ էին տեսել, այլ արդէն միասնական պետութիւն: Բայց շատ անց էլ Ստրաբոնը շարադրել է այն հէնց նոյնատիպ կառուցուածքով («**հիմա** … սրանից առաջ»), ինչից բխում է, որ մէկ արքան 26 ցեղերին միաւորել է հռոմէա-աղուանական բախումներից ոչ շատ առաջ, կարելի է ասել՝ Պոմպէոսի ուղեկիցների «աչքի առջեւ», ովքեր գրեթէ հասան Կասպից ծովափ եւ ում շատ լաւ էր ծանօթ նախորդ, բաժան-բաժան լեզուներով ու արքայիկներով վիճակն՝ իր ակնառու եւ մինչեւ Ստրաբոն շարունակական (ցեղերի իրարից կտրուածութեան) գլխաւոր հիմքով:

Ատենախօսութեան մէջ ներկայացուած է Աղուանից թագաւորութեան վիճակը Ք. ա. Ա – Ք. յ. Գ դարերում: Անտիկ աղբիւրները նկարագրում են նրա աշխարհագրական դիրքը, բնական պայմանները եւ սահմանները (հարաւում մշտապէս՝ Կուր գետը), թուարկում քաղաքները (Պտղոմէոսի մօտ՝ 29, որոնց մեծ մասի համադրումները ճշտւում են մի դիտարկման շնորհիւ) եւ մէկ տասնեակի չափ գետերը, գրում բնակիչների հաւատալիքների մասին: Նրանք բազմիցս յիշատակում են Աղուանից թագաւորների գործերը, սակայն տալիս են միայն երկուսի անունը՝ Պոմպէոսի ժամանակակից Օրոյսի (նաեւ՝ նրա եղբայր Կոտիսի) եւ Անտոնիոսի ժամանակակից Զոբերի: Առկայ տուեալներից երեւում է, որ գոնէ մինչեւ Ք. յ. Գ դ. կէսերը արքայական տոհմը փոփոխութիւն չի կրել՝ մնալով, ըստ ամենայնի՝ «բուն աղուանական»: Գ դ. կէսերին գրաւելով Հայաստանը եւ յարակից երկրները՝ Սասանեաններն առաջինում Արշակունիների փոխարէն գահ էին բարձրացրել իրենց աւագ արքայազուններին, ուստի հին արքայատոհմի փոփոխութիւնը հաւանական է թւում նաեւ Աղուանքի դէպքում: Գ դ. առաջին կէսում անտիկ Աղուանից թագաւորութիւնը նաեւ տարածքային փոփոխութիւն կրեց արեւելքում. այդ պահի աղբիւրները Կասպից ծովի ափամերձ գօտում յիշատակւում են արդէն Մասքթաց թագաւորութիւնը կամ (եւ) Բաղասական երկիրը, որն իր արքայական շրջանում տարածւում էր Կուրի ստորին հոսանքից մինչեւ Չող-Դերբենդի անցքը՝ ներառելով Մասքութք երկրամասը: Ընդ որում՝ որեւէ աղբիւր այլեւս չի խօսում այդ տարածքի՝ «Աղուանք» լինելու մասին, եւ դա կարեւոր ցուցիչ է էթնիկ պատմութեան համար. եթէ մինչեւ Գ դար աղուանական 26 ցեղերից միասնական էթնոսի ձեւաւորումն աւարտին հասած լինէր, ապա վարչա-քաղաքական սահմանի փոփոխութիւնը չէր դառնայ ամբողջից կտրուած բնակչութեան ինքնանուան (էնդոէթնոնիմի) կորստի պատճառ: Ուստի անտիկ հեղինակների «ալբան»-«աղուան» եզրոյթը Գ դ. կտրուածքով դեռ վերաբերում էր ոչ թէ կազմաւորուած էթնոսի, այլ «Ալբանիա» անունը կրող երկրի ու թագաւորու-

թեան հիմնական (կովկասալեզու) բնակչութեան հաւաքական-էթնոպոտեստար, մետաէթնիկ ընդհանրութեանը. այն համախմբման որոշ աստիճանի էր հասել եւ ունէր օտար աղբիւրների արձանագրած կայուն այլանուանում-արտանուն (էքզոէթնոնիմ), սակայն ներսում շարունակում էր բաժանուած մնալ լեզգիական լեզուներով խօսող առանձին ցեղային էթնոսների՝ իւրաքանչիւրն իր կայուն էթնիկ ինքնագիտակցութեամբ:

Ա գլխի երկրորդ բաժինը կոչւում է. **«Բուն Աղուանքի Արշակունեաց թագաւորութիւնը (Գ դարի վերջ – Զ դարի սկիզբ»**: Վաղ միջնադարեան Աղուանից պետութեան մասին մանրամասն տեղեկութիւններ է պահպանել Զ դ. ամենասկզբին Արցախում գրուած «Վաչագանի վէպ»-ը, որն իր «Պատմութիւն Աղուանից»-ում՝ այլ նիւթերի նման գրեթէ բառացի արտագրել է Ժ դ. վերջի արցախցի պատմիչ Մովսէս Դասխուրանցին (կոչուած նաեւ՝ «Կաղանկատուացի»): Նրա երկի Ա.ժդ գլուխն աւարտւում է տոհմաբանական կարեւոր ցուցումով՝ «Քանզի ի Քաջն Վաչագանայ մինչեւ ի Վաչէ թագաւորք էին Աղուանից թուով ինն՝ ըստ կարգի. որոց տասներորդ՝ բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորն Վաչագան», որը շարունակւում է յաջորդ գլխի վերջում. «Եւ թիւ անուանցն չէ յայտ մինչեւ ցՔաջն Վաչագան, որ էր *ի մեծ ազգէն Արշակունեաց:* Եւ որ ըստ կարգի կացին թագաւորք տանս Աղուանից, անուանք են այսոքիկ. Վաչագան Քաջ, Վաչէ, Ուռնայր, Յաւչագան, Մերհաւան, Սատոյ, Ասայ, Եսվաղէն, Վաչէ, ապա Բարեպաշտն Վաչագան»: «Վէպ»-ում որպէս «Արշակունեաց» յիշուած՝ Աղուանից այս արքայատոհմի առանձին ներկայացուցիչների մասին այլ աղբիւրների վկայութիւնները սուղ են: Փաւստոսը եւ Խորենացին գիտեն 371 թ. Ձիրաւի ճակատամարտին Վաչէ Քաջի յաջորդ Ուռնայրի զօրաջոկատի մասնակցութեան մասին Շապուհ Բ-ի բանակի կազմում (Ամմիանոսը 359 թ. Ամիդը պաշարած զօրքի մէջ նշում է Աղուանից արքային՝ չտալով անունը): Կորիւնը եւ Խորենացին յիշում են Մաշտոցի ժամանակակից Եսվաղէնին (Արսվաղէն):

«Վէպ»-ի տեղեկութիւնները լրացնում են Մասքթաց Սանեսան թագաւորի կամ «հիւսիսականաց» արշաւանքի մասին Փաւստոսից եւ Խորենացուց յայտնի պատկերը, որին նախորդել էր Գրիգորիս եպիսկոպոսի (Լուսաւորչի թոռան) նահատակութեան դիպուածը մասքութերի կենտրոնատեղի Վատնեան դաշտում (ներկայ Խաչմասի շրջանում): Բ. Յարութիւնեանի ճշտմամբ՝ Գրիգորիսի նահատակութիւնը թուագրւում է Տրդատ Գ-ի վախճանին յաջորդող պահով՝ 330-331 թթ., իսկ Սանեսանի արշաւանքը Հայաստան եւ սպանուելը Օշականի ճակատամարտում՝ 331-332 թթ.: Մասնագէտներից ոմանք, հետեւելով Գանձակեցուց եկող մի վրիպեալ համադրման՝ մասքութ Սանեսանին նոյնացնում են Տրդատի ազգակից (=հայ Արշակունի) Սանատրուկի հետ: Բայց վերջինս ուրոյն անձ էր (Բ. Յարութիւնեան), ում Տրդատը կեանքի վերջում հիւսիս-արեւելեան կողմերի կուսակալ («գործակալ») էր նշանակել Փայտակարան քաղաքում (Երասխի բերանից ոչ հեռու, ներկայ Պուշկինօ-Բելեասուվարի մօտ): Արքայի մահից յետոյ ապստամբելով՝ նա փորձեց պարսիկ եւ աղուան հարեւանների սատարմամբ խլել Հայոց գահն օրինական ժառանգորդ Խոսրով Կոտակից, բայց նրանից ու դաշնակից հռոմէացիներից պարտուելով՝ փախաւ Շապուհ Բ-ի մօտ, ում հրահրումով էլ քիչ անց սկսուեց «հիւսիսականաց» (=Մասքթաց Սանեսան թագաւորի) արշաւանքը Հայաստան:

Վաչէ Ա-ի օրօք Գրիգորիսի սանների նահատակութեան մասին «Վէպ»-ի պատմածի իւրայատուկ մանրամասների հիման վրայ (Ցրիի անցնելն Իրանին, մոգութեան վերադառնալու պահանջը, ասորի աբեղաներին յիշելը) հնարաւոր է համարել, որ իրադարձութիւնները կապուած են Շապուհ Բ-ի ձեռնարկների հետ Մծբինի 40-ամեայ հաշտութեան աւարտին՝ 337/338 թ.: Այդ պահին արեւմտեան ճակատի ռազմական գործողութիւններին զուգընթաց նաեւ խոշոր կրօնական հալածանքներ սկսուեցին ասորաբնակ Միջագետքում եւ Սասանեան տէրութեան միւս քրիստոնեաբնակ շրջաններում: Ըստ

այդմ՝ Ա.ժե գլխի Արշակունիների ցանկում Վաչագան Քաջին յաջորդող Վաչէ Ա-ի ժամանակը կապւում է 338 թ. հետ, իսկ արքայատոհմի հիմնադրի գահակալելու հանգամանքը համադրւում 298 թ. Մծբինի հաշտութեան ժամանակի ու պարագայի հետ (որի շնորհիւ Իրանի տիրապետութիւնը թոթափած երկրներից էր նաեւ Մեծ Հայքն իր վերստին գահակալած Արշակունի արքայով): «Վէպ»-ի տուեալները յուշում են, որ Գ դ. Սասանեաններին ենթարկուելուց յետոյ Աղուանից արքաների պատմութեան մէջ նոյնպիսի խզում է եղել, ինչպէս Հայքում (ուր գահակալեցին Սասանեան երկու աւագ արքայազններ՝ Որմիզդ-Արտաշիրը, ում հռոմէացի կենսագիրը կոչում է Արտաւազդ, եւ Նարսեհը), բայց 297-298 թթ. Նարսեհի պարտուելուց յետոյ ինչպէ՛ս Հայաստանում, այնպէ՛ս էլ Աղուանքում գահին դրուեց Արշակունի արքայ: Եթէ 298 թ. հետ կապւում է Վաչագան Ա-ի գահակալումը, ապա 338-ի հետ հարկ է կապել Վաչէ Քաջի իշխանութեան աւարտը՝ իբրեւ արդիւնք Շապուհ Բ-ի կողմից երկրի ռազմակալման եւ մեծ հալածանքների սկզբի (իսկ պայմանականօրէն կիսելով նրանց ժամանակը, իբրեւ վարկած՝ ընդունելի է, որ Վաչագան Ա-ն ու Վաչէ Ա-ն իշխել են շուրջ 20-ական տարի՝ 298-318 եւ 318-338 թթ.): 338 թիւը նաեւ ընդունելի է իբրեւ Վաչէի յաջորդ Ուռնայրի թագաւորութեան սկիզբ: Նա, ըստ Փաւստոսի՝ ոչ միայն եղել էր Ձիրաւում, այլեւ պարտուելուց ու Հայոց սպարապետ Մուշեղի կողմից խնայուելուց յետոյ ինչ-որ ժամանակ անց օգնել էր նրան՝ լուր տալով Շապուհի յարձակման ծրագրի մասին, որը թոյլ է տալիս իր իշխանութեան աւարտը հասցնել մինչեւ 372/373 թ. (այդպէս ստացւում է մօտ 35 տարի՝ 338-373 թթ.):

Այս ժամանակագրութեամբ՝ Դ դ. սկզբներին Աղուանքը քրիստոնէացրած արքան եղել է Վաչագան Ա-ն (թէեւ ուշ աւանդոյթն ինչ-որ սխալի արդիւնքում երկրի դարձը վերագրել է Ուռնայրին): «Վէպ»-ի մի տեղիի (Ա.իգ գլխի վերջնամասում) քննութիւնը ցոյց է տալիս, որ բնօրինակում, հաւանաբար, յիշուած է եղել ոչ թէ երկի գլխաւոր հերոսը, այլ նրա անուանակից վաղ նախնին՝ իրական լուսաւորիչ Վաչագան Քաջը: Ատենախօսութեան մէջ ցոյց է տրուած, որ Բուն Աղուանքում քրիստոնէութեան պաշտօնական ընդունման տարեթիւ պիտի համարուի 315 թ.: Նոր աշխատանքներում պարզաբանուած է (Մ.-Լ. Շօմոն եւ այլոք), որ Հայոց պաշտօնական դարձը տեղի է ունեցել Գրիգոր Լուսաւորչի՝ Կեսարիայի եկեղեցաժողովում ձեռնադրուելուց (314 թ. Սեպտեմբերին՝ 313 թ. Միլանի էդիկտից յետոյ, որով Կոստանդիանոսն ու Լիկինիոսը քրիստոնէութիւնը հռչակեցին ընդունելի կրօն) մի քանի տարի առաջ՝ 311 թ. Ապրիլի 30-ին Գալերիոս կայսեր հրապարակած (մահից 5 օր առաջ) «Հանդուրժողութեան մասին» Սարդիկէի հրովարտակից 2 ամիս անց (Գրիգորի՝ «Ելն ի վիրապէ», որը 311-ին ընկնում էր Յունիսի 24-ին), ինչին, ըստ Եւսեբիոս Կեսարացու՝ 311-312 թթ. ձմռանը հետեւեց կայսերակից Մաքսիմինոս Դայայի «ամոթալի» պատերազմը Հռոմի «բարեկամ եւ դաշնակից» քրիստոնեայ հայերի (իմա՛ Հայաստանի) դէմ: Հայոց, Վրաց եւ Աղուանից դարձի մասին մանրամասն պատմող՝ Ագաթանգեղոսի երկի վաղագոյն տարբերակ «Գրիգորի վարք»-ի (որը մեզ է հասել Դ դարի «Գիրք Գրիգորիսի» յունարէն երկի հիման վրայ Ե դ. առաջին կէսում հայերէն շարադրուած բնագրից կատարուած յունարէն, ասորերէն, արաբերէն եւ քարշունի թարգմանութիւններով) վկայութիւնների համաձայն՝ ընդունելով Վիրապից ելած Գրիգորի հաւատքը, Տրդատն իր մօտ է հրաւիրել իր կրտսեր դաշնակից Վրաց, Աղուանից եւ Լազերի թագաւորներին: Նրանք միասին Գրիգորին ձեռնադրուելու են ճանապարհել Կեսարիա (16 գերագահ «սատրապների» ու 3000 զօրականների ուղեկցութեամբ) եւ ապա դիմաւորել նրան արքայական Բագաւան ամառանոցում (Հռոմէացիների երկրից վերադարձին շքախումբը Բարձր Հայքից մեծ շրջան կատարեց՝ Տարօնի Աշտիշատ քաղաքի մօտ հիմնադրելով Ս. Կարապետ եկեղեցին, ուր դրեցին Կեսարիայից ստացած Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինէսի՝ մեր եկեղեցու համար գլխաւոր մասունքները): 30 օրեայ պահքից յետոյ Լուսաւորիչը 370000 հայերից բացի Ա-

րածանի գետում մկրտեց նաեւ Աղուանից, Վրաց եւ Լազիկա-Եգերքի արքաներին, ապա եպիսկոպոսներ ուղարկեց ինչպէ՛ս Հայոց գաւառներ, այնպէ՛ս էլ նշուած երկրներ. Վիրք գնաց Իրինարքոսը, Եգերք՝ Սոփրոնիոսը, իսկ Աղուանքի եպիսկոպոս ձեռնադրուեց ու մեկնեց «բարեպաշտ այր Թովման՝ Սատաղ փոքր քաղաքից [Εἰς δὲ Ἀλβανίαν Θωμᾶν ὅσιον ἄνδρα. ἐκ τῆς Σαταλέων τῆς μικρᾶς πόλεος]» (Գիւտի Թղթում նա կոչուած է՝ «այր մի երանելի՝ ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն ի Հռովմ քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ»): Այս հիմամբ՝ Լուսաւորչի ձեռնադրումը թուագրւում է 314 թ. աշնանով, իսկ Աղուանից (նաեւ՝ Վրաց եւ Եգերքի) դարձը – Վաչագանի մկրտութիւնն Արածանիում՝ 315 թ. գարնան աւարտին՝ հաշուի առնելով Կեսարիայից Բագաւան հասած հանդիսաւոր թափորի ուղեւորութեան տեւողութիւնը:

Ե դ. սկզբներին Մաշտոցը Հայոց եւ Վրաց գրերից յետոյ ստեղծեց նաեւ աղուաներէն գիրը. դա Հայաստանի բիւզանդահպատակ հատուածում էր, ուր նրան հանդիպեց «ազգաւ աղուան» երէց Բենիամինը: Ըստ Կորիւնի՝ Կայսրութիւնից Մաշտոցի վերադարձի պահին Հայոց արքան Արտաշէսն էր: Ամենայարմար պահը, որին վերագրելի է Մաշտոցի եւ Սահակի քաղաքական ու լուսաւորական ջանքերի ակտիւացումը հիւսիսում եւ արեւմուտքում, հէնց Մեծ Հայքում Արշակունիների թագաւորութեան վերականգնմանն ուղղուած եռանդուն գործունէութեան ժամանակն է (ըստ Խորենացու), ուստի հաւանական է Մաշտոցի այցելութիւնը Վիրք, ապա անմիջապէս՝ կայսերահպատակ շրջաններ (եւ այնտեղ Աղուանից գրի ստեղծումը), թուագրել Արտաշէս Գ-ի թագաւորութեան (422/423-428 թթ.) սկզբով ու դրա նախօրեակով, այսինքն՝ 420/421-423 թթ. (Հ. Աճառեան): Երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ընթացքում, որն աւանդաբար թուագրել են արեւմտեան ուղեւորութիւնից ոչ շատ անց, Մաշտոցն ունեցաւ 4 գլխաւոր կանգառ՝ Բուն Աղուանքում (ուր թագաւորում էր Եսվաղէնը, իսկ եպիսկոպոսն էր Երեմիան) ու Բաղասականում (Կուրի ձախափնեակ), երկրորդը՝ նրանց հարաւից սահմանակից Գարդմանաձոր գաւառում (աջափնեակ), երրորդը՝ բուն Վիրքում (ուր թագաւորում էր Արձիւղ-Արչիլը՝ նախորդ այցելութեան պահի Բակուրի փոխարէն), իսկ չորրորդը՝ վերջինիս հարաւից սահմանակից Տաշիր գաւառում: Այդ երկար ճանապարհից վերադարձին Մաշտոցին դիմաւորում էր միայն Սահակը (առանց Հայոց թագաւորի): Դա բաւարար է՝ համարելու, որ վարդապետի երկրորդ հիւսիսային ուղեւորութիւնը թուագրելի է Սասանեաների կողմից 428 թ. Մեծ Հայքի թագաւորութիւնը վերացնելուց յետոյ ընկած ժամանակով (նաեւ՝ մինչեւ 431 թ. Եփեսոսի տիեզերաժողովը): Ըստ ամենայնի՝ երկրորդ ուղեւորութեան արդիւնքում էր, որ պետական աջակցութիւնից արդէն զրկուած հայերէնը պահպանեց իր «պետական» լեզուի կարգավիճակը Ուտիքում ու Գուգարքում եւ մնաց որպէս ժամասացութեան երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում: Թերեւս, մինչ այդ Բենիամինը փորձել էր նոր գիրը ներդնել իր երկրում, բայց անյաջողութիւն էր կրել ու տեղափոխուել Սիւնիք՝ ծառայութեան անցնելով եպիսկոպոս Անանիայի մօտ եւ, հաւանաբար, զբաղուելով թարգմանութիւններով. 428-430 թթ. միջեւ արդէն Մաշտոցը նրան հրաւիրեց Կապաղակ, ուր միասին աւարտին հասցրեցին աղուաներէնի ներդրման առաքելութիւնը: Կորիւնն այդ պահին չի տալիս Բենիամինի անունը, բայց փոխարէնը նշում է, որ տեղի աւագանին Մաշտոցի հետ անմիջապէս ձեռնամուխ եղաւ աղուաներէն Ս. Գրքի քարոզին, ուրեմն այն արդէն թարգմանուած էր, եւ ենթադրաբար՝ հէնց Բենիամինի կողմից: Աղուաներէն գիրը, գոնէ Հայոց եւ Վրաց գրերի համեմատութեամբ՝ մեծ բարձունքների չհասաւ: Թէպէտ նրա գործառութեան մասին մեր գիտելիքները գնալով հարստանում են, յատկապէս՝ քառորդ դար առաջ Սինայում աղուաներէն-վրացերէն կրկնագրի յայտնաբերմամբ ու հրապարակմամբ, որի շնորհիւ, բացի նախկինում յայտնի մէկ տասնյակի չափ փոքրածաւալ վիմագրերից, արդէն մեր ձեռքի տակ են նաեւ աղուաներէն «Ճաշոցի» մեծ կտորներ: Ցրիի «գործակալ» խոճկո-

րիկի մասին «Վէպ»-ի տուեալները յուշում են, որ նրա հայր Եսվաղէն արքայի կեանքի եւ իշխանութեան վերջին տարիները պէտք է հասցնել մինչեւ 440-ական թթ.: Ըստ այդմ՝ Եսվաղէնը փաստօրէն իշխել է մինչեւ Վարդանանց պատերազմը եւ թագը փոխանցել որդուն՝ Վաչէ Բ յայտնի ապստամբին: Ուստի հաւանական է ենթադրել, որ 420-ական թթ. վերջերին Կապաղակում Մաշտոցին հիւրընկալելիս նրա իշխանութիւնը, թերեւս, պիտի նոր սկսուած լինէր (որպէսզի տեւէր շուրջ քառորդ դար): Այդ դէպքում Եսվաղէնի եւ Ուռնայրից միջեւ «Վէպ»-ում թուարկուած 4 արքաները կարող էին իշխած լինել մօտ կէս դար: Կարելի է պայմանականօրէն ընդունել, որ Ուռնայրի յաջորդ Յաւչագանը եւ Մերհաւանը գահակալել են Դ դ. վերջին քառորդում, իսկ Սատոյ եւ Ասայ արքաները (վերջերս յայտնաբերուել է Ասայի անթուակիր կնիքը)՝ Ե դ. առաջին քառորդում:

«Վէպ»-ը գիտի նաեւ Վաչէ Բ-ից յետոյ «առանց թագաւորի կացեալ» 30-ամեայ միջակայքի մասին (իրականում՝ մօտ 25 տարի), որից յետոյ 485 թ. (Վահան Մամիկոնեանի եւ Վախթանգ Գորգասալի ապստամբութեան յաղթանակից յետոյ) Սասանեան Վաղարշ արքան Աղուանից գահին հաստատեց նրա եղբօրորդի Վաչագան Բ Բարեպաշտին: Նրա եւ իր արքայատոհմի վախճանն աղբիւրները չեն արձանագրել, իսկ գրականութեան մէջ դա վերագրուել է կլորացուած 510 թ., բայց Աղուէնի եկեղեցական ժողովի տուեալների հիման վրայ այդ ժամանակն անհրաժեշտ է տանել գոնէ մինչեւ 510-ական թթ. կէսերը: Այդ դէպքում հնարաւոր է Վաչագան Բարեպաշտի իշխանութեան աւարտը կապել Սասանեան Կաւատ Ա արքայի այն վարչական ռեֆորմի հետ, որով վերացուեց թագաւորական իշխանութիւնը նաեւ Վիրք-Քարթլիում եւ որը թուագրում են (Գուրգէն Իբերացուն գահընկեց անելու մասին Պրոկոպիոսի վկայութեան հիմամբ) մօտ 523 թ.: Դրա հաւանականութիւնը լրացուցիչ հաստատւում է դրամագիտական տուեալով. 1993 թ. յայտնաբերուել են Կաւատի 35-րդ տարում (=522/523 թ.) թողարկուած երկու միատեսակ դրամներ, որոնց միացագրում (մոնոգրամ) ընթերցւում է՝ *’l’n*, այսինքն՝ ALAN կամ ARAN: Առաջին անգամ 523-ին այդպիսի միացագրի ի յայտ գալը իրանագէտները կապում են հէնց Վիրքից բացի նաեւ Աղուանից թագաւորութիւնը վերացնելու եւ երկու երկրներում մաքուր մարզպանական վարչակարգ հաստատելու հետ: Այդպէս՝ Բուն Աղուանքի անտիկ եւ վաղմիջնադարեան թագաւորութեան վերջին գահակալ Վաչագան Բ-ին կարելի է վերագրել 38 տարուայ իշխանութիւն՝ 485-523 թթ.:

Առաջին գլխի երրորդ բաժինը կոչւում է. **«Արցախը եւ Ուտիքը յունա-լատինական աղբիւրներում»**: Աշխարհացոյցեան Մեծ Հայքի 15 նահանգներից 10-րդի՝ Արցախի անուան առաջին յիշատակութիւնը պահպանել է Ստրաբոնը (դրափոխութեան ենթարկուած Օրխիստենէ – Ὀρχιστηνή < *Ὀρτσιχηνή ձեւով)՝ Հայաստան երկրի նկարագրութեան հատուածում (XI, XIV, 4): Ըստ ենթատեքստի՝ հայկական Փաւէնէ (Φαυηνή. ձեռագրերում՝ նաեւ Φαυνηνή, Φανηνή), Կօմիսենէ (Κωμισηνή) եւ Օրխիստենէ երկրամասերը («եպարխիա»՝ բառացի «գաւառ») յիշուած են Արաքսի եւ Կուրի գետկիցից Կուրի ափով դէպի հիւսիս-արեւմուտք տարածուող Արաքսենէ (իր արեւելեան հատուածով), Սակասենէ (աշխարհացոյցեան Շակաշէն գաւառ ու շրջակայք) եւ Գօգարենէ (աշխարհացոյցեան Գուգարք նահանգի արեւելեան կէս) գաւառներին յաջորդող շարքում: Փաւնենէ – Կօմիսենէ – Օրխիստենէ շարքն անհրաժեշտ է ընկալել նախորդից (Արաքսենէ – Սակասենէ – Գօգարենէ) հարաւ եւ հակառակ՝ հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ, որի շնորհիւ առաջին՝ Փաւնենէ եպարխիան վերականգնւում է իբրեւ *Փառնենէ* եւ համադրւում Մեծ Հայքի Փառնէս գաւառի («Աշխարհացոյց»-ի՝ Քուստ-ի Փառնէս, իրանական իզաֆետային ձեւից թարգմանութեամբ՝ «Փառնէսի քուստ», այսինքն՝ «Փառնէսի կողմն») ու իր շրջակայքի հետ (հետագայում՝ Փառիսոս), իսկ երկրորդը՝ Կօմիսենէն, համադրւում է նոյնահունչ Գեամիշ-Գոմէշ ամենաբարձր գագաթով Մռաւի լեռնա-

շղթայի շուրջն ընկած՝ կենտրոնական Արցախի գաւառների, եւ ըստ այդմ երրորդը՝ Օրխիստէնէն՝ այդ նահանգի՝ աւելի հարաւ ընկած գաւառների (Մեծ Իրանք եւ շրջակայք) հատուածի հետ: Կօմիսէնէի յստակ տեղորոշումը թոյլ է տալիս նկատել նրա համարժէքը միջնադարում՝ «Աշխարհացոյց»-ին եւ այլ աղբիւրներին ծանօթ Մեծ Կուանք (*var.* Մեծ Կողմանք) գաւառի համադրման տարբերակով: Համադիր քննութեամբ ցոյց է տրւում նաեւ, որ Օրխիստէնէի մէջ պէտք է պատկերացնել աշխարհացոյցեան Սոթք, Հարջլանք, Մեծ Իրանք եւ Պիանք գաւառները, իսկ Արաքսէնէի մէջ՝ գրեթէ ողջ հարաւային Արցախի (հետագայ Գորոգուի իշխանութեան), գումարած հետագայ Սիւնիքի հարաւային հատուածը՝ գոնէ Հաբանդի ընդգրկումով: Հարաւային այդ մարզը (=սահմանապահ կուսակալութիւնը) ինչ-որ ժամանակ կարող էր բացի *Արաքսէնէ* ու *Կոյթէնէ* անուանումներից կրել *Փոքր Սիւնիք* եւ *Հաբանդ* անունները, որոնցից առաջինն արձանագրել է Խորենացին, իսկ երկրորդն ի յայտ է գալիս աշխարհացոյցեան Սիւնիք եւ Արցախ նահանգներում նոյնանուն *Հաբանդ* գաւառների ձեւաւորման իրողութեան մէջ:

Ուտիք նահանգի անունը Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան գաւառների շարքում յիշատակում են յոյն եւ հռոմէացի շատ հեղինակներ. Պտղոմէոսը, Եւսեբիոս Կեսարացին, Կուադրատոսը եւ Ստեփանոս Բիւզանդացին նշում են յունարէն *Օտէնէ* (Ὠτηνή) տարբերակը, իսկ Պլինիոս Աւագը՝ լատիներէն *Օտենա* (Otena, Otene) ձեւը: Պտղոմէոսը եւ Ստեփանոսը (=Կուադրատոսը) այդ անուան կողքին յիշատակում են *Օբարէնէ* (Ὠβαρηνή, Ὠβαρηνοί) երկրանունը: Այն սովորաբար համարւում է *Գօսարէնէ – Գօգարէնէ* անուան վրիպակ, բայց իբրեւ վարկած՝ կարող է նաեւ ընկալուել իբրեւ Ստրաբոնի ճանաչած **Փառնէնէ* (>*Փառէնէ) երկրանուան գրչական վրիպման արդիւնք:

Անտիկ աղբիւրները որոշ լրացուցիչ տեղեկատուութիւն են յայտնում այս գաւառների մասին: Նրանք նշում են Արաքսէնէի եւ Սակասէնէի զարմանալի բերքառատութիւնը, ինչպէս նաեւ Օրխիստէնէում (կամ նաեւ՝ Փառնէնէում ու Կոմիսէնէում) ձիաբուծութեան զարգացած լինելը: Սակասէնէում Ք. ա. Է դարում սակերի հաստատման մասին Ստրաբոնի պահպանած վկայութիւնը («Սակերը նուաճեցին Հայաստանի լաւագոյն հողը, որը նրանց անունից կոչուեց Սակասէնէ») այն հազուագիւտ աղբիւրագիտական հիմքերից է, որոնք թոյլ են տալիս՝ Կուրի աջափնեակը Հայոց պետութեան սահմաններում ընկալելու ուշ բիւզանդական-Երուանդեան թագաւորութեան դարաշրջանում:

Առաջին գլխի վերջին՝ չորրորդ բաժինը կոչւում է **«Արցախի եւ Ուտիքի վաղ միջնադարեան սկզբնաղբիւրների նոր գնահատականներ»** եւ բաղկացած է երեք ենթաբաժնից: Դրանցից առաջինն է. **«Հայոց իշխանատոհմերի «Գահնամակ»-ը եւ «Զօրանամակ»-ը նոր լոյսի ներքոյ**: Նշուած անուններով մեզ են հասել Հայոց վաղ միջնադարի երկու փաստաթղթերի եզակի գրչագրական պատճէններ: Առաջինը պահպանուել է անյայտ մագաղաթեայ ժողովածոյ-ձեռագրից հանուած ու պահպանակի վերածուած թերթի վրայ (անցման երկաթագրով, երկու էջերի երկուական սիւնակների 25-ական տողերով), որը 1850 թ. յայտնաբերուեց Թիֆլիսի մի գրավաճառանոցում եւ 1858 թ. Մոսկուայում հրատարակուեց Մ. Էմինի կողմից (Խորենացու «Պատմութեան» թարգմանութեան յաւելուածում՝ կից տալով նաեւ ռուսերէնը): Երկրորդ փաստաթուղթը՝ «Զօրանամակ»-ը, յայտնաբերուեց 1842 թ. (եւ գծագիր-նմանահանութեամբ հրատարակուեց) Յ. եպ. Շահխաթունեանցի կողմից՝ Ս. Էջմիածնի մատենադարանի մի հին ձեռագրում, բոլորակ (օվալաձեւ) աղիւսակի պատկերի ձեւով, ըստ գիտնական-եպիսկոպոսի՝ կցուած Շիրակացու «Ժամանակագրութեանը» (բայց ըստ Հ. Բարթիկեանի՝ դա Փիլոն Տիրակացու ժամանակագրական երկն է): «Գահնամակ»-ը վաղ միջնադարի Հայոց արքունիքի համակարգում նախարարական տոհմերի զբաղեցրած առնուազն եօթ տասնեակ պատուաստիճան-գահերի ցուցակն է՝ ներկայացուած Սահակ Պարթեւի նամա-

կում, ուր նշուած է նաեւ, որ այն հաստատել է Սասանեան արքայից արքան: Նամակը տալիս է վաւերագրի անուանումը՝ «Գահնեմակ», որն ակնյայտօրէն իրանական ծագման է: Այն յիշատակում են նաեւ հայ մատենագիրները, սակայն ո՛չ ամենավաղ շրջանի (առաջինը Ուխտանէսն է, ապա՝ Մեսրոպ Վայոցձորեցին, որի ցուցակը թէպէտ կոչում են «Կեղծ գահնամակ», բայց հէնց նա է արձանագրել «Գորոզուայք» հարաւարցախեան իշխանատոհմի անունը, ինչը թոյլ տուեց նկատել նրան «Զօրանամակ»-ում եւ վերականգնումը կատարել «Գահնամակ»-ի պակասող վերջում. երրորդը Ստեփաննոս Օրբէլեանն է, ով յղում է Ղեւոնդին, որին Ն. Ադոնցը նոյնացնում է Ը դարի յայտնի պատմագրի հետ, թէպէտ մեզ հասած վերջինիս «Պատմաբանութեան» մէջ նման հաղորդում չկայ): Մեզ հասած «Զօրանամակ»-ը, որի անուանումը մատենագրութեան մէջ արձանագրուած չէ (ուստի այն մնում է պայմանական), ուղղանկիւն զարդաշրջանակի մէջ ներգծուած բոլորակ քառաբաժին աղիւսակ է, որի բաժինների (անուանուած՝ ըստ Հայոց թագաւորութեան չորս կուսակալ զօրավարութիւնների՝ «Արեւելեան Դուռն», «Հիւսիսային Դուռն», «Արեւմտեան Դուռն» եւ «Հարաւային Դուռն») ճառագայթաձեւ բացուող եռասիւնակ տողերում թուարկուած են 21-22-ական նախարարութիւններ (ընդամենը՝ 86)՝ իրենց թուահամարներով ու զօրականների քանակով: Բացի այդ, զարդաշրջանակի աջ կողադաշտի մէջ վերեւից ներքեւ կարճ տողերով տրուած է բնագրի աւարտն ու ամփոփումը («եւ զոմանս՝ ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք՝ ՁԴ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի, որ է Ոստանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի, եւ Մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն: Եւ ընդ ամենայնն թիւ զաւրացն Հայոց, որ է հարիւր եւ քսան հազարաց»): Այս ուրոյն ձեւաւորումը, թերեւս, ուղղակի կրկնել է այն վաղ հայերէն նախօրինակ-պատճէնի արտաքին պատկերը, որը գրերի գիւտից յետոյ պիտի թարգմանուած լինէր Արշակունեաց աւատական պետութեան զինուժի կառուցուածքը պաշտօնապէս սահմանող մի հրովարտակ-վաւերագրից: Վերջինիս լեզուն, ինչպէս երեւում է արտաքին ձեւաւորման ուշադիր վերլուծութիւնից («Հիւսիսային» եւ «Հարաւային» դռնանունների տեղերն աջից ձախ ուղղութեամբ շփոթուած են), ունեցել է սեմական՝ աջից ձախ գրութիւն, ուստի դա ասորերէնը կամ պահլաւերէնն էր:

«Զօրանամակ»-ը մեզ հասել է ամբողջական ձեւով, իսկ «Գահնամակ»-ը 20-ից աւելի անունների պակաս ունի վերջից (պակասում են նաեւ վերնագիրը եւ առաջին տառը), որի պատճառը զուտ տեխնիկական է. այդ փոքր նախարարութիւնների անուններն, անկասկած, եղել են մեզ հասած միակ թերթը պարունակած ձեռագրի յաջորդ թերթի սկզբում, եւ կորսուած անունների մեծ մասը վերականգնւում է «Զօրանամակ»-ից: Վերջինիս կազմման ժամանակը Տրդատ Գ-ի դարաշրջանին կամ Խոսրով Կոտակի իշխանութեան սկզբին վերագրելու տեսակէտը գերիշխողն է, իսկ «Գահնամակ»-ի ժամանակը լուրջ վէճեր է յարուցել: Սակայն նոր քննական բնագրի կազմման առիթով պատառիկի ուշադիր լեզուաբանական ընթերցումը եւ ճիշտ տողատումն ու կէտադրումը թոյլ տուեց նամակի ամսաթուի կողքին նկատել նաեւ տարեթիւը՝ Վռամի թագաւորութեան «Ե» տարին (=424 թ.). այսինքն՝ նամակը գրուել է 424 թ. Դեկտեմբերի 26-ին: Պարզ դարձաւ նաեւ, որ բնագրի սկզբում կորսուել է ոչ թէ «{Սա}հակայ» բառի **ՍԱ** տառախումբը (Ղ. Ալիշան, Ն. Ադոնց եւն), այլ լոկ **Ա** սկզբնատառը՝ «{Ա}հա կայ խնդիր արարեալ» արտայայտութեան մէջ, որը բաղկացած է «ահա» եղանակաւորիչից եւ «կամ» բայից՝ գործածուած որպէս օժանդակ բայ «առնեմ» բայի անցեալ դերբայի հետ: Այդ ստորոգեալը ցոյց է տալիս, որ բնագրի առաջին նախադասութեան գործող անձը ոչ թէ Սահակն է, այլ Հայոց վերջին «Արտաշէս թագաւոր»-ը («{Ա}հա կայ խնդիր արարեալ... յԱրտաշէսի թագաւորի»), իսկ «խնդիր արարեալ»-ն ունի ոչ թէ «որոնելու», այլ «հայցելու, հարցում կատարելու» իմաստը (ըստ այդմ՝ յաջորդող «եթէ»-ն էլ պահանջուող հար-

ցական է), ուստի «զոր ի Տիսպոնն» հատուածն անհրաժեշտ է ընկալել իբրեւ երկու բառով ընդմիջուած «ի դրան արքունի» կտորին լրացնող («կայ խնդիր արարեալ յԱրտաշէսի թագաւորի՝ ի դրան արքունի, զոր ի Տիսպոնն, խաւսեցեալ՝ եթե՞ ես զռամականն զնամա{կն}, զոր Արտաշրի ի դիւանին [կայր]՝ տեսի»): Ուրեմն՝ հերթական անգամ Տիզբոն ուղարկուած Սահակ Պարթեւից ակնկալել են հէնց այնտեղ՝ «Արտաշրի ի դիւանին» փնտրել («եթէ՞ ես ... տեսի») անհրաժեշտ փաստաթուղթը: Նա այն գտել է, եւ հաստատելով արքայից արքայի ու իր կնիքներով՝ ուղարկել Հայաստան Քաղոցի 17 թուակիր մի նամակ-նախաբանով («գիր արարի ես՝ Սահակ»)՝ այն մասին, թէ «Նորին բարերարութիւն» Հայոց թագաւորն (այլ ո՛չ թէ Պարսից արքան) ինչպէ՛ս նախկին ժամանակների օրինակով հաստատի («հրաման տացէ»՝ ապառնիով, այլ ո՛չ թէ յորդորական հրամայականով) «Հայոց ազատաց եւ տանուտէրանց» գահակարգութիւնը՝ «արդար եւ ճշմարիտ» ձեւով նրանց իր «դիւանի շահ[ր]համարի» մէջ «առնելով» (հաշուառելով):

Երկրորդ ենթաբաժինն է. **«Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի Զ-Է դարերի աղբիւրները»**: Ժ դարի պատմիչի օգտագործած նիւթերի ճշգրիտ վերհանումը թոյլ է տալիս ոչ միայն գործ ունենալ աւելի վաղ աղբիւրներից բառացի քաղուած բնագրերի հետ, այլեւ ընկալել իր՝ Դասխուրանցու յաւելումներն ու սեփական շարադրանքը: Նրա Ա.ժդ եւ ժզ-իգ գլուխներում արտագրուած՝ պայմանականօրէն «Վաչագանի վէպ» (ռուս.՝ “Повесть о Вачагане”) կոչուող աղբիւրը շարադրուել է Ե-Զ դդ. սահմանագծին (500-502 թթ. միջեւ), իրանա-բիւզանդական եռամեայ պատերազմից (502-504 թթ.) ու հիւսիսկովկասեան հոն-սաւիրների աւերիչ ներխուժումից (503-504 թթ.) առաջ: Պահպանուած առաջին գլխագիրը (Ա.ժզ)՝ «Կեանք եւ վարք եւ կարգաւորութիւնք Աղուանից, որ ի Վաչագանայ արքայէ եդան, եւ գիւտք նշխարաց սրբոց», թերեւս, եղել է ամբողջ երկի վերնագիրը (Կ. Դահիրամանեան), որը Ժ դ. պատմիչն է բաժանել գլուխների ու ստեղծել գլխագրեր: «Վէպ»-ը դասական ոճի միջնադարեան ջատագովական երկ է՝ վարքագրական վիպերգութիւն, որը չի տալիս դէպքերի ժամանակագրութիւն ըստ տարիների, այլ լոկ՝ հերոսի բարի գործերի շարադրանք տրամաբանական հերթականութեամբ: Հեղինակի խնդիրն էր՝ ոչ այնքան Վաչագանի ու իր արքայատոհմի կանոնաւոր պատմութիւնը շարադրելը, որքան ներկայացնելն այն «ծրագրային» գործերի, որ պիտի արուէին ու արուեցին բարեպաշտ տիրակալի կողմից՝ ի շահ Սասանեաններին ենթակայ Աղուանից թագաւորութեան (=մարզպանութեան) քրիստոնեայ հասարակութեան ու եկեղեցու: Ընդ որում՝ Վաչագան Բ Արշակունու վարած իւրօրինակ քաղաքական գիծը դրանց ամրապնդումը կապում էր ոչ թէ բունաղուանական իրողոյթների, այլ Կուրի՝ էթնիկապէս հայկական աջափնեակի պատմա-մշակութային աւանդների հետ, եւ «Վէպ»-ը (այդպէ՛ս նաեւ՝ ժամանակի հասարակական պահանջները կանոնակարգած Աղուէնի ժողովի «Սահմանադրութիւն»-ը) Աղուանից երկրում հաստատագրում էր Հայոց կանոնագրքերի դրոյթների գործառումը, վեհացնում Հայոց հայրապետներին, ամրապնդում Թադէոս առաքեալի, Ս. Գրիգորի, Հռիփսիմէ, Գայիանէ սրբուհիների եւ յատկապէս՝ Լուսաւորչի Գրիգորիս թոռան պաշտամունքի համակարգը (վերջինիս ենթարկելով բունաղուանական՝ կապաղակա-չողեան շրջանի Զաքարիա եւ Պանդալէոն սրբերի պաշտամունքը) եւ ողջ Աղուանից եկեղեցու համար սրբագործում հայկական աջափնեակի պաշտամունքային կենտրոնները (Ամարաս, Դիւտական, Սուհառ եւն):

Նման մեծ ծաւալով եւս երկու պատմական բնոյթի երկ, որ ներկայացնում էին Է դարի անցքերը, Դասխուրանցին բառացի արտագրել է իր Ա գրքի վերջում եւ Բ-ի մեծ մասում: Առաջինը, որ պայմանականօրէն անուանւում է «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն», տրուած է Բ.թ-ժդ եւ ժզ գլուխներում (դրանց միջեւ ԺԵ-ում Դասխուրանցին արտագրել է մի փոքրիկ «Ճառ»՝ «Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն» գլ-

խագրի տակ, որի հեղինակն է 596-629 թթ. աթոռակալած Աղուանից կաթողիկոս Վիրոն): Նշուած հատուածի գլխագրերի մեծ մասը եւս արդիւնք է Ժ դ. պատմիչի ստեղծագործութեան, սակայն Բ.թ գլխագիրը («Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, որ եղեւ աշխարհաց»), թերեւս, մտայղացուել է իբրեւ բուն երկի վերտառութիւն եւ պատկանում է Վիրոյի կենսագրի գրչին: Վերջինս Վիրոյին մօտ կանգնած անձ է եղել եւ մասնակցել է կաթողիկոսի մի շարք գործերին: Երկու տեղ շարադրանքը դառնում է առաջին դէմքով, եւ երեւում է, որ գրողը ծնունդով Ուտի Առանձնակ գաւառի Կաղանկատոյք գիւղից էր («հասեալ ի մասն ինչ առ ստորոտով լերինն, որ յանդիման գեաւղջն մեծի Կաղանկատուաց, որ է ի նմին յՈւտի գաւառի, յորմէ եւ ես»), ուստի նրան պայմանականօրէն կոչում ենք Անանուն Կաղանկատուացի (այդ անունով 2005 թ. լոյս է տեսել մեր գիտա-քննական բնագիրը): Երկն աւարտւում է 629 թ. դէպքերով («Յերկրորդ ամի Արտաշրի՝ որդւոյ Կաւատայ»), սակայն վերջին գլխում Շահվարազ պարսից զօրավարի հասցէին շռայլած բացասական խօսքերից պարզ է, որ հեղինակն, ըստ ամենայնի, գիտէր 630-ին նրա կարճատեւ ու անփառունակ արքայանալու մասին: Միւս կողմից՝ երկը չէր կարող գրուել 632 թ. յետոյ, քանի որ Կարինի եկեղեցաժողովում Հայոց Եզր կաթողիկոսի հետ միասին Հերակլ կայսեր պահանջով երկաբնակութեանը (նրա մեղմ տարբերակ միակամութեանը՝ մոնոթելիզմին) յարեց նաեւ Աղուանից եկեղեցին, որի կաթողիկոս Զաքարիային (629-644 թթ.) գովերգում է միաբնակութեան ջատագով հեղինակը (այսպիսով, շարադրման ժամանակը 630-632 թթ. միջակայքն է): Անանուն Կաղանկատուացին բարձրարուեստ ոճով կերտել է բազմաթիւ օտարազգի գործող անձանց կերպարներ՝ տալով բոլորի անունները՝ Խոսրով արքայ, Հերակլ կայսր (որի նկատմամբ վերաբերմունքը դրական չէ, եւ դա ըստ Ն. Մառի՝ ակնյայտ նշան է հեղինակի հակաքաղկեդոնական դիրքորոշման), թիւրքիւտների խաքան Ջեբուի որդի Շաթ եւն: Իսկ տեղական հերոսների ցանկը սպառւում է լոկ Վիրոյով եւ իր յաջորդ Զաքարիայով՝ մի եզակի դրուագում: Այս ցուցանիշով խիստ հակառակն է յաջորդ երկը, որը պայմանական անունն է «684 թ. պատմութիւն»:

Այն ընդօրինակուած է «Պատմութիւն Աղուանից»-ի Ա գրքի ԻԷ-Լ եւ Բ-ի ԺԸ-ԼԱ եւ ԼԳ-ԽԵ գլուխներում: Վերջինների միջեւ ընկած Բ.լբ գլխում Ժ դ. պատմիչը տեղադրել է սեփական շարադրանքը՝ յենուելով «Աղուանից կաթողիկոսների գաւազանագիրք» պայմանական անունը կրող՝ Ժ դ. սկզբին կազմուած երկի հաղորդումների վրայ եւ հիմնական մասերով դնելով այն իր աւարտական՝ Գ.իգ գլխի հիմքում (որոշ կտորներ էլ՝ տեղափոխելով նախորդող գլուխներ): «684 թ. պատմութեան» հատուածների գրեթէ բոլոր գլխագրերը եւս արդիւնք են Դասխուրանցու ստեղծագործութեան (բուն երկի վերնագիրը մեզ չի հասել): Որոշ հետազօտողների կարծիքով՝ այս երկին է յանգում նաեւ Բ.ժէ գլուխը, որը տալիս է հետագայում «Միհրանեաններ» կոչուած Վարազ Գրիգոր, Ջեւանշէր եւ Վարազ Տրդատ Գարդմանից իշխանների՝ իբրեւ թէ Սասանեաններից սերուած լինելու մասին տոհմաբանութիւնը: Իրականում այն հաւաստի քիչ բան է պարունակում, ունի ժամանակագրական խաթարուած պատկեր, լեզուով ու ոճով տարբեր է «684 թ. պատմութեան» կտորներից եւ, անկասկած, շարադրուած է հենց իր՝ բանաքաղ-պատմիչ Դասխուրանցու կողմից՝ Խաչէն – Փառիսոսի «Առանշահիկ» իշխանների տոհմաբանութիւնների մէջ թափանցած առասպելածին պատկերացումների հիմամբ:

«684 թ. պատմութեան» անանուն հեղինակը, ում շարադրանքը որոշ հատուածներում դառնում է առաջին դէմքով, բաւականին մօտ է կանգնած եղել իր՝ մեծ սիրով պատկերուած տեղական հերոսներին՝ Ջեւանշէր եւ Վարազ Տրդատ իշխաններին, հոգեւոր առաջնորդներին, յատկապէս՝ Մեծ Կուանքի (Մեծ Կողմանքի) Իսրայէլ եպիսկոպոսին (քահանայական անունով՝ Աբաս): Նա մասնակցել է նրանց շատ գործերին, այդ

թւում՝ Իսրայէլի ուղեւորութեանը Հոնաց աշխարհ՝ հիւսիսկովկասեան այդ թիւրքալեզու ժողովրդին քրիստոնէութեան բերելու առաքելութեամբ: Այդ վերջին պատմական իրադարձութեանն ենք պարտական «684 թ. պատմութեան» սկզբում Հոների մի խմբի՝ աւելի վաղ ժամանակներում (Մաշտոցի մահից յետոյ) հաւատքի գալու առասպելախառն պատմութեան առկայութեամբ (Դասխուրանցին այն բաժանել է չորս գլխի՝ Ա.հէ-լ, որոնց գլխագրերից երկուսը, գուցէ, է դարի բնագրին են յանգում): Մի տեղեկութիւնից երեւում է, որ այդ հատուածը պարզապէս Իսրայէլ-Աբաս քահանայի տեսիլն է: «684 թ. պատմութիւն»-ը պարունակում է Է դարի 30-80-ական թթ. Աղուանք երկրի (Սասանեան մարզպանութեան ընդգրկումով) մանրամասն եւ բարձրարուեստ ոճով շարադրուած պատմութիւնը: Նրանում առկայ են մի շարք պաշտօնական նամակներ եւ պատմական իրադարձութիւնների եզակի յիշատակումներ, որոնց վաւերականութիւնն այդ եզակիութեան պատճառով կասկածելի էր համարում Ն. Ադոնցը: Իրականում կարելի է կասկածել լոկ ինչ-ինչ չափազանցութիւնների առիթով, որոնք էլ արդիւնք են իր հերոսներին մեծարելու՝ միջնադարեան հեղինակի սովորական միտումի (Կ. Ղահրամանեան): Երկում ընդգրկուած է նաեւ Հայոց վաղ միջնադարեան չափածոյի եզակի նմուշ՝ Դաւթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջեւանշերի» բանաստեղծութիւնը՝ գրուած ակրոստիքոսով («ըստ աղփայփէտաց գլխակարգութեանց»): Այն պահպանուել է (մեր կարծիքով՝ հէնց շարադրուել է) մինչեւ Ճ տառի քառեակը: ԺԹ դ. սկզբում «Պատմութիւն Աղուանից»-ի հնագոյն *a* գրչագրից կատարուած մի ընդօրինակութեան մէջ (*Ար* ենթախմբի մայր պատառիկ) «Ողբք»-ին «շարունակութիւն» է աւելացուած (Մ-Ք քառեակներ): Անանուն հեղինակը, թերեւս, ծագում էր (ինչպէս եւ իր գլխաւոր հերոսներից՝ Իսրայէլ եպիսկոպոսը) կենտրոնական Արցախի Մեծ Կուանք գաւառից, քանի որ բոլոր մանրամասներով ծանօթութիւն է դրսեւորում հէնց նրա շրջակայ տեղանքներին: Դա՝ ի տարբերութիւն Գարդման գաւառի (այդպէս՝ նաեւ Արցախի եւ Ուտիքի ուրիշ գաւառների), չնայած այնտեղ էր գտնւում իր միւս գլխաւոր հերոսների՝ «Միհրանեան»-Գարդմանացի իշխանների բուն կենտրոնը: Երկն աւարտւում է 682 թ. վերջին կամ արդէն 683-ին տեղի ունեցած իրադարձութիւնների յիշատակմամբ (Իսրայէլի վերադարձը Հոնաց երկրից եւ նրա առաքելութեան շարունակման հետ կապուած նամակագրութիւնը): Շարադրանքը կատարուել է հաստատապէս աւելի վաղ, քան 685 թ. ամռանը տեղի ունեցած հիւսիսկովկասեան խազարների աւերիչ արշաւանքը, որին զոհ գնացին Հայոց եւ Վրաց իշխանները (686 թ. գրած իր «Ժամանակագրութեան» մէջ Փիլոն Տիրակացին յիշատակում է նրանց զոհուելու օրը՝ Օգոստոսի 16): Այստեղից էլ բխում է մեր երկի՝ մօտ 684-ին շարադրուած լինելու մասին ենթադրութիւնը եւ ըստ այդմ՝ պայմանական անունը:

Երրորդ եւ վերջին ենթաբաժինն է՝ **«Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոսի «Պատմութիւն»-ը**: Մաշտոց Եղիվարդեցին Հայոց կաթողիկոս դարձաւ (Գէորգ Գառնեցուց յետոյ) 897 թ. Յունիսին (մօտ 60 տարեկանում) եւ պաշտօնավարեց ընդամենը 7 ամիս՝ մինչեւ 898 թ. սկզբները: Նա նշանաւոր կազմողն է «Մաշտոց ծիսարան»-ի (վերջնականապէս աւարտուած՝ հէնց իր կաթողիկոսութեան ամիսներին), որն արդէն 1100-ից աւելի տարիներ օգտագործում են Հայ առաքելական եկեղեցու սպասաւորները: Ըստ իր աշակերտ Ստեփաննոս կրօնաւորի կողմից դեռ 893 թ. շարադրուած Վարքի եւ նրան լրացնող Ստեփաննոս Օրբէլեանի՝ Մաշտոցը ծնուել է 833 թ., Սիւնիքի Սոթք գաւառում՝ Եղիվարդեցի (Արագածոտնի) Գրիգոր երէցի ընտանիքում: Որպէս Սեւանի վանահայր, իր սրբակրօն վարքի եւ ծաւալած եկեղեցաշինական գործունէութեան շնորհիւ նա նշանաւոր դարձաւ ամբողջ երկրում՝ իր մասնակցութիւնը բերելով Թ դ. երկրորդ կէսի բազմաբնոյթ պատմական իրադարձութիւններին (Շիրակաւան եւն):

Բացի ծիսարանից՝ Մաշտոցը հեղինակել է նաեւ այլ երկեր (ի մի են բերուած՝ «Մատենագիրք Հայոց» հաւաքածոյի Թ դարի հատորում), այդ թւում՝ մեզ չհասած մի պատմական աշխատութիւն, որի մասին յիշատակում է Օրբէլեանը՝ Թանահատի վանքին նուիրուած մի պատմութիւնից յետոյ գրելով. «Եւ զայս ծանոյց մեզ Պատմութիւնն երանելոյն Մաշտոցի, որ ի Սեւան»: Իր նախորդ՝ ԼԲ գլխում («Վասն գալոյ Մրվանայ տաճիկ զօրավարին ի Սիւնիս. եւ փեսայանալոյ Բաբանայ պարսկի Սիւնեաց տեառն Վասակայ...») նա ներկայացնում է Թ դ. առաջին կէսի Սիւնիքին վերաբերող տեղեկութիւններ՝ սխալ հաշուարկի արդիւնքում սկսելով դա Հայոց 176 թուականից (որը, գուցէ եւ, հետագայ գրչական վրիպակ է՝ *փխն.* 276-ի = 827 թ.): Դրանց մի մասը գրեթէ բառացի համընկնում է Դասխուրանցու Գ գրքի ժամանակագրուած հաղորդումների հետ: Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ երկու պատմիչներն օգտուել են նոյն աղբիւրից, որը հէնց Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութիւն» է: Դա նախկինում չէր նկատուել այն պարզ պատճառով, որ Օրբէլեանի ուղիղ վկայութիւնը նրա շարադրանքի բովում յայտնուել էր յաջորդ գլխի («Վասն Թանահատի վանիցն...») միջնամասում, մի դրուագից յետոյ, որն առնուած չէ Դասխուրանցու կողմից (թէպէտ ոչինչ չի խանգարում՝ դրա գոնէ մեծ մասը եւս համարելու Մաշտոց Եղիվարդեցու կորսուած պատմական երկին յանգող):

Մեր վերականգնման տարբերակով՝ «Պատմութիւն Աղուանից»-ում Մաշտոցից քաղուած բնագիրն սկսւում է գլ. Գ.ժե-ի շարադրանքով, որը վերաբերում է Է դ. կէսերի իրողութիւններին եւ տալիս է Հայոց տոմարով երկու թուագրում: Իհարկէ, վստահ չենք, որ Եղիվարդեցու երկը եւս սկսուել է հէնց այդպէս՝ առանց ենթադրելի նախադրութեան եւ անմիջապէս ժամանակագրական համառօտ թուարկումներով: Փոխարէնը՝ Դասխուրանցու բնագրի ուշադիր ընթերցումը թոյլ է տալիս մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ նրա նախորդող գլուխներում չկան Մաշտոցի երկի աւելի վաղ կտորներից քաղուած հատուածներ: Իրօք, ԺԵ գլխի բովանդակութիւնը կտրուած է «Պատմութիւն Աղուանից»-ի՝ Է դարի իրողութիւններին վերաբերող մեծ հատուածներից (Բ գրքում), եւ դա բացատրւում է լոկ նրանով, որ այն ուղղակի կազմել է հետագայ գլուխներում արտագրուած ընդհանուր աղբիւրի սկզբնամասը (Գ.ժզ-ում ժամանակագրական թուարկումները շարունակւում են սահուն ձեւով՝ հասնելով արցախցի իշխաններ Սահլ Սմբատեանի, Եսայի Աբու Մուսէի եւ այլոց մեծագործութիւններին), որը Դասխուրանցին չի կտրել մնացեալից՝ «հեշտացնելով» նորօրեայ հետազօտողի գործը: Թերեւս՝ Մաշտոցն իր երկը հասցրել է մինչեւ իր հայրապետութեան տարին՝ Հայոց ՅԽԶ (897 թ. Ապրիլ – 898 թ. Ապրիլ), որի տակ Գ.իա գլխում պահպանուել է մի քանի իրադարձութիւնների յիշատակում: Յատկանշական է, որ դրանից յետոյ Դասխուրանցու յիշատակած յաջորդ թիւն արդէն Հայոց ՅԿԳ-ն է (914/915 թ.)՝ Սմբատ Ա արքայի նահատակութեան տարին: Յաջորդիւ՝ 982-988 թթ. միջակայքում ստեղծագործած պատմիչն ընդամենը մի-մի պարբերութեամբ նշում է լոկ նաեւ դելմիկ Սալարեանների իշխանութեան հաստատումը (940 թ.) եւ Ռուզիկների կողմից Պարտաւի կիսամեայ ռազմակալումը (944-945 թթ.)՝ այդպիսով սպառելով իր տեղեկատուութիւնը: Պարզ է, որ նա իր ձեռքի տակ այլեւս չունէր Մաշտոց Եղիվարդեցու պատմական երկի պէս մի անգնահատելի աղբիւր:

Գլուխ II. «Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերը Արաբական խալիփայութեան թուլացման շրջանում»: Գլխի առաջին բաժինը կոչւում է. **««Իշխան Աղուանից»-ի հաստատութեան ստեղծումը եւ «Առանշահիկ» ու «Միհրանեան» իշխանատոհմերի խնդիրը»**: Հայոց, Վրաց եւ Աղուանից իշխանների մասին աղբիւրները խօսում են սկսած Է դարից: Այդ հաստատութիւնները ձեւաւորուեցին հէնց այդ դարասկզբին, ենթադրաբար՝ 615/616 թ. «Պարսից ժողովի» համատեքստում, որին մասնակցող Աղուանից Վիրոյ կաթողիկոսն էր (596-629 թթ.), ըստ «Պատմութիւն

Աղուանից»-ի՝ Սասանեան Խոսրով Ապրուէզ արքայից «խնդրել» Աղուանից «իշխան»-ի տիտղոսը Վարազ Գրիգոր Գարդմանից իշխանի համար: Երբ 610 թ. Բիւզանդիայի կայսր Փոկասը սպանուեց Հերակլի կողմից (610-641 թթ.), Կայսրութեան համար այդ ճգնաժամային պահին արձանագրուեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի մի կարեւորագոյն փաստ. օգտուելով Բիւզանդիայի խառնակ վիճակից՝ Խոսրով Ապրուէզի բանակը գրաւեց նրա բոլոր արեւելեան պրովինցիաները (Փոքր Ասիայի մեծ մասը, 614-ին՝ Պաղեստինը, 617-ին՝ Եգիպտոսը), եւ տեղի ունեցաւ 385/387 եւ 591 թթ. բաժանումներով երկատուած Հայաստանի (Մեծ Հայքի) երկու մասերի վերամիաւորումը Սասանեանների տէրութեան կազմում, որն արդէն պարտաւոր էր մշակել իր տիրոյթների կառավարման ինչ-որ նոր համակարգ: Վերջերս «Աշխարհացոյցի» ամբողջական գիտա-քննական բնագրի կազմման առիթով մեր կատարած քննութիւնը ցոյց տուեց, որ հայ միջնադարի այդ բացառիկ աշխարհագրական երկի բուն գաղափարը եւս ուղղակի ներշնչուած է 610-ական թթ. առաջին կէսում վերամիաւորուած Մեծ Հայք աշխարհշահրում վարչական սպասելի բարեփոխման (ռեֆորմի), մասնաւորապէս՝ «Հայոց իշխանի» ինստիտուտի հաստատման հեռանկարից եւ իրողութիւնից:

Գրականութեան մէջ Զ-Թ դարերի Աղուանից երկրի պատմութիւնը սովորաբար դիտարկւում է Հայոց Արեւելից կողմանց երկու խոշոր իշխանական տոհմերի՝ «Առանշահիկների» եւ «Միհրանեանների» անհաշտ պայքարի յետնախորքի վրայ: Ընդսմին նրանց մասին տեղեկութիւնները, որպէս կանոն, քաղուել են միայն Մովսէս Դասխուրանցու շարադրած տոհմաբանական աւանդութիւնից, որի մէջ պատմականը վիպականից զատելու քննական փորձ առ այսօր չի կատարուել: «Պատմութիւն Աղուանից»-ում *Առանշահիկներ* (կամ՝ Եռանշահիկներ) անուան տակ հանդէս են գալիս Խորենացու յիշատակած՝ Հայկ նահապետից սերող Առան նահապետի ուշ սերունդները, որոնք մի քանի հատուածներում կոչուած են ուղղակի *Հայկազնեայք:* Ըստ մեզ հասած բնագրի՝ Մեծ Հայքում Պարթեւ Արշակունիների իշխանութիւնն աւանդաբար Ք. ա. Բ դարում հաստատած Վաղարշակ արքան (որի կերպարի տակ իրականում հանդէս է գալիս Տրդատ Ա-ն՝ Ք. յ. Ա դ.), Հայաստանի հիւսիս-արեւելեան «կողմնակալ բիւրաւոր» էր նշանակել Հայկից սերող եւ Սիսական-Սիւնիք նահանգը խորհրդանշող Սիսակի սերնդից Առանին, որից էլ ծագել են Ուտիք եւ Արցախ նահանգների տարածքի իր ժամանակի 4 իշխանատոհմերը՝ *Ուտէացւոց* (*Ա* խմբի ձձ՝ ***Աւ****տէացւոց*), *Գարդմանացւոց*, *Ծաւդէացւոց* (*Տխ* խմբի ձձ՝ ***Ծով****դէացւոց*) եւ *Գարգարացւոց* («Զօրանամակ»-ում կոչուած՝ *Գ[ո]ր[ո]գ-ճունի*, իսկ «Ներսէսեան գահնամակ»-ում՝ *Գորոգուայք*), ընդ որում Սիսակի «աղու» (=«քաղցր», «մեղմ») մականունից այդ տարածքն անուանուել է «Աղուանք»:

616 թ. «Պարսից ժողովում» հիմնուած «իշխան Աղուանից»-ի հաստատութիւնն անցաւ աջափնեայ Գարդմանացի հայկական իշխանատոհմի ձեռքը (հետագայում կոչուած՝ «Միհրանեաններ»), իսկ Թ դարում՝ կենտրոնական Արցախի – Խաչէնի «Առանշահիկներին», որոնք սերում էին վաղմիջնադարեան Ծաւդէացի հայկական իշխանատոհմից (աւանդական Առանի միւս յետնորդից): Վերջիններիս նոր անուանումը, թերեւս, ստեղծուել էր գրական հողի վրայ՝ Բուն Աղուանքի վերջին Արշակունեաց թագաւոր Վաչագան Բարեպաշտի պետութեան մոռացուած իրանական պաշտօնական անունը («Առանշահր») խորենացիական Հայկեան Առան նախահօր անուան հետ համադրելով:

Երրորդ գլխի երկրորդ բաժինը կոչւում է. **«Խաչէնի Առանշահիկների եւ Շաքիի Բագրատունիների հզօրացումը Թ դարում»**: Արաբներն է դ. աւարտին իրենց ստեղծած «Արմինիյա» կուսակալութեան (ոստիկանութեան) մէջ գրեթէ անփոփոխ պահպանեցին Սասանեանների վարչա-աշխարհագրական անուանակարգը (նոմենկլատուրան), եւ Արցախն ու Ուտիքը շարունակում էին համարուել Արմինիյայի Առան-Աղուանք հա-

տուածի (հայկական աղբիւրներում՝ «երկիր», «աշխարհ») մաս, որի քրիստոնեայ բնակչութեան համար շարունակում էին գործել «իշխան Աղուանից»-ի եւ Աղուանից կաթողիկոսութեան առանձին հաստատութիւնները: Սակայն Խալիփայութեան թուլացման դարաշրջանում Հայոց Արեւելից կողմերում ձեւաւորուած խոշոր աւատական իշխանութիւնները Թ դ. վերջին մաս կազմեցին ոչ թէ Բուն Աղուանքի թագաւորութեան (Շաքի մայրաքաղաքով), այլ Մեծ Հայքի Բագրատունեաց պետութեան: Դրանցից առաւել նշանաւոր դարձան Խաչէնը՝ Արցախի կենտրոնում, Գորոզուն (ուշ միջնադարում կոչուած՝ Դիզակ)՝ Արցախի հարաւում, եւ Փառիսոսը (աւելի վաղ կոչուած՝ Գարդման, երբեմն նաեւ՝ Սեւորդիք)՝ Արցախ եւ Ուտիք նահանգների հիւսիս-արեւմուտքում: Խաչէնի իշխանատոհմը, ըստ առկայ աղբիւրների համադրութեան՝ սերում էր վաղ միջնադարեան «Ծաւդէացի» կոչուած իշխանութիւնից, սակայն, ինչպէս բազմիցս վկայուած է Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում, արդէն որդեգրել էր ուրիշ ինքնանուանում՝ «Առանշահիկ» (*var*. Եռանշահիկ): Յիշենք, որ ըստ Խորենացու պատկերացումների՝ Գարդմանացի, Ծաւդէացի, Գարգարացի եւ Ուտէացի իշխանական տոհմերի աւանդական նախահայր Առանն ինքը ծագում էր Սիւնեաց նախահայր Սիսակից:

837 թ. Սահլ Սմբատեան խաչէնցի իշխանը, ով արաբական աղբիւրներում կոչուած է Սահլ իբն Սինբաթ, իսկ Միքայէլ Ասորու «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութեան մէջ՝ Սահակ Հայկազուն, իր տիրոյթներում ձերբակալեց Ատրպատականի ապստամբ աղանդաւորների առաջնորդ Բաբեկին, որի դիմաց Խալիփայութիւնից արժանացաւ մեծ պարգեւների ու շնորհների, եւ բացի այդ բուն Խաչէնի իր տիրոյթներին միացրեց հարեւան Սիւնիք նահանգի Սոթք գաւառի տարածքը Սեւանայ լճի հարաւ-արեւելեան ափերին ու Տրտու գետի վերնահովտում, Դադիվանքի ձորահովտից (աղբիւրի եզրոյթով՝ «խորաձորից») արեւմուտք, որն, ըստ ամենայնի, որոշ հիմքերով վիճելի տարածք էր Սիւնիքի եւ Արցախի հայ աւատատէրերի միջեւ: Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) բառերով՝ Սահլն ստացել էր նաեւ Հայոց, Վրաց եւ Աղուանից աշխարհների, այսինքն՝ ամբողջ Արմինիյա կուսակալութեան իշխանաց իշխանի պաշտօնը: Այն փոխանցիկ էր, քանի որ Դասխուրանցու պահպանած հէնց յաջորդ տեղեկութեան համաձայն՝ արդէն 1-2 տարուց տրուեց «տերանց տէր» կոչուած ոմն Յովհաննէսի (նա յիշուած է նաեւ Մեծարանից Ս. Յակոբավանքի հնագոյն խաչքարի պատուանդանի վիմագրում՝ 853 թ.): Իսկ Յուսուփ արաբ ոստիկանի 851 թ. արշաւանքի ժամանակ, ըստ Դրասխանակերտցու յայտնի վկայութեան, նոյն պաշտօնն ունէր կենտրոնական Հայաստանի Բագրատունիներից Աշոտ Մսակերի որդի Բագարատը: Ն. Ադոնցի կարծիքով (արմատաւորուած՝ գրականութեան մէջ)՝ «տերանց տէր» Յովհաննէսն իբրեւ թէ եղել է Սահլի որդին եւ Բաբեկին գերելու պահին արաբ հեղինակների կողմից կոչուել է Մուաիա: Սակայն արաբները Մուաիա էին կոչում Սահլի այն միակ որդուն, ում 855 թ. գերեվարել էր Բուղան, այսինքն՝ յայտնի Ատրներսեհին: Փորձելով լրացուցիչ տուեալներ նշմարել Յովհաննէս Բագրատունի անունը եւս կրած Համամ Բարեպաշտ Արեւելցու անմիջական նախորդների, այսինքն՝ ըստ «Քարթլիս ցխովրեբա»-ի՝ Տարօնից Ը դ. երկրորդ կէսում Շաքի տեղափոխուած Բագրատունի եղբայրների սերունդների մասին, հնարաւոր է թւում նորովի վերլուծել Յովհաննէսի խնդիրը, ով բաւական լուրջ պատմական դէմք է եղել եւ արդէն 830-ական թթ. վերջին՝ հասուն տարիքի զօրական (ուստի՝ ծնուած գոնէ Թ դ. սկզբին): Աղբիւրները ոչինչ չեն հաղորդում բուն Աղուանքի (Շաքիի իշխանութեան) տարածքում Բուղայի հալածանքների մասին, թերեւս՝ հէնց Յովհաննէսի ջանքերի շնորհիւ, որն ըստ այդմ լիովին կարող էր լինել 894-ին թագաւորական պատուի արժանացած (անշուշտ՝ հասուն տարիքում) Համամ-Յովհաննէս Բագրատունի «Աղուանից» կամ «Արեւելից» իշխանի պապը: Այսպիսով, Խալիփայութեան տիրապետութեան համեմատական թուլացման շրջանում Աղուանք-Առան «երկրում»

(Կուրի՝ էթնիկապէս հայկական աջափնեակով եւ առաւելապէս բունաղուանական ձախափնեակով) նկատելի հզօրութեան են հասել երկու ոչ ազգակից աւատական իշխանութիւններ՝ Խաչէնը (իր «Առանշահիկ» իշխանատոհմով) եւ Շաքին (Ալազանի հովտում, իր Բագրատունի իշխանատոհմով), որոնք Թ դարում փոխնիփոխ էին հասնում «իշխան Աղուանից»-ի կարգավիճակին:

Գլխի երրորդ բաժինը կոչւում է. **«Կենտրոնական Արցախի (Խաչէնի) գաւառաբաժանումը վաղ եւ զարգացած միջնադարում»**: Աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական, այսինքն՝ խաչէնեան չորս գաւառներից երկուսը՝ Մեծ Իրանքը եւ Մեծ Կուանքը բազմիցս յիշատակուած են տարաբնոյթ աղբիւրներում, սակայն միւս երկուսի՝ Պիանքի եւ Հարջլանքի յիշատակութիւնները սահմանափակւում են բացառապէս Է դարի «Աշխարհացոյց»-ի զոյգ գաւառացանկերով (Բուն Աղուանք երկրին Ե դ. առաջին կէսում միացուած ուտիք-արցախեան 20 եւ Մեծ Հայքի արցախեան 12 գաւառների թուարկումներում: Մեր բազմաթիւ համադրումների շնորհիւ Հարջլանքն, ըստ ամենայնի, անհրաժեշտ է տեղորոշել Տրտուի Թութխու վտակի աւազանում, յարակից ինչ-ինչ տարածքների հետ միասին: Նրանից հիւսիս, Տրտուի ձախ ափին ընկած ընդարձակ շրջանը (Լեւագետի ստորին հոսանքի «խորաձորից» ու Եանշաղից մինչեւ Հաթերք եւ Ականաբերդ), հաւանաբար՝ կարելի է վերագրել Մեծ Կուանք գաւառին (ինչպէս որ արել են շատ ուսումնասիրողներ), միայն թէ՝ նշելով, որ դրա համար առայժմ, ըստ էութեան, չունենք աղբիւրների ուղիղ վկայութիւններ: Կենտրոնական Արցախի Մեծ Իրանք եւ Մեծ Կուանք գաւառների միջեւ իբրեւ սահման հանդէս է գալիս Տրտու գետի միջին հոսանքը: Ինչ վերաբերում է Տրտուի վերնահովտին (Լեւագետի հովտով), որը զարգացած միջնադարում առաւելապէս հանդէս էր գալիս իբրեւ Ծար երկիր կամ գաւառ (իր իշխանանիստ բնակավայրի անունից), ապա պատմագրութեան մէջ, սկսած Ղ. Ալիշանից եւ Մ. Բարխուդարեանցից, ցաւօք, արմատաւորուել է մի փոխանցիկ սխալ, ըստ որի նշուած շրջանում տեղորոշել են աշխարհացոյցեան Արցախի Վայկունիք գաւառը, նրանից առելելք էլ՝ Բերձորը: Բայց Մովսէս Դասխուրանցին (=Մաշտոց Եղիվարդեցին) ներկայացնում է այդ երկու գաւառները Եսայի Աբու Մուսէին ենթակայ, այսինքն՝ Գորոզուի մաս կազմած ութ հարաւային գաւառների ցուցակում («Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական[-ի Կոտակ], Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»), ուստի բացառւում է Վայկունիքի կապը Տրտուի աւազանի հետ. այն տեղորոշւում է Հակարի գետի Շալուայ ձախ օժանդակի հովտում, իսկ նոյն հովտով աւելի հարաւ էլ՝ Բերձորը:

Երրորդ գլխի չորրորդ եւ վերջին բաժինն է. **«Մահմեդական ամիրայութիւնների ձեւաւորումը Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց առանձին հատուածներում»**: Արաբական խալիփայութիւնն սկսեց թուլութեան նշաններ ցոյց տալ Աբբասեան արքայատոհմի իշխանութեան գալուց (Ը դարի կէս) որոշ ժամանակ անց: Աբբասեանների կարեւոր նորամուծութիւններից մէկն իրենց անծայրածիր տէրութեան ոչ արաբ խոշոր աւատատէր-հողատէրերի իրաւունքների պաշտօնական ճանաչումն էր եւ նրանց զանգուածային ընդգրկումը պետական կառավարման գործում: Դրա հիման վրայ Թ դ. սկզբներից ժառանգական դարձաւ բարձրագոյն աւատատիրական վերնախաւից նշանակուող՝ մարզերի կառավարիչ-ոստիկան-ամիրաների պաշտօնը: Սակայն հէնց դրա պատճառով արքունիքը նպաստեց տեղական աւատատէրերի հզօրացմանը եւ տարբեր մարզերում կիսանկախ ամիրայութիւնների առաջացմանը: Խալիփայութեան տարածքային ծաւալմանը զուգընթաց նուաճուած երկրներում յայտնւում էին արաբական ցեղային բնակչութեան մեծ զանգուածներ, որոնց զգալի մասը բնաւորւում էր տեղում: Վերաբնակիչները հողատարածքներ էին զբաղեցնում այն քաղաքային խոշոր բնակավայրերի շուրջը, որոնք վերածուել էին տէրութեան տեղական վարչական կենտրոնների:

Այդպէս ձեւաւորւում էր ազգակիցների ու դաւանակիցների հաւատարիմ ուժ, որի վրայ յենւում էին նուաճուած երկրներում խալիփայի նշանակած բարձր պաշտօնեաները՝ ոստիկաններն ու զօրապետերը, եւ որը յուսալի յենարան էր դառնում նաեւ Թ դարից սկսած մեծ ինքնագլխութիւն ձեռք բերող տեղական խոշոր աւատատէր-կուսակալների համար, որոնց ժառանգական դարձած տիրոյթները վերածւում էին կիսանկախ պետական կազմաւորումների՝ ամիրայութիւնների: Նշուած եղանակով Թ դ. վերջերին Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանքի տարածքներում կազմաւորուեցին եւ որոշակի հզօրութեան հասան երեք՝ Շամախիի, Գանձակի եւ Դերբենդի ամիրայութիւնները:

Շամախիի կամ Շիրւանի արաբական ամիրայութիւնը ձեւաւորուեց վաղ միջնադարեան Ճիղբքի բունաղուանական փոքրիկ թագաւորութեան հիմնաբազայի վրայ (Շամախի եւ Ցրի-Սաղիան քաղաքների շուրջը) եւ շուտով տարածուեց դէպի Կասպիականի ողջ ծովափը՝ Կուրի գետաբերանից մինչեւ Դերբենդի ամիրայութեան սահմանը Սամուր գետի ընթացքով: Անտիկ շրջանում եւ վաղ միջնադարում այս տարածքը բնակեցնում էին բուն աղուանական եւ իրանական ցեղեր ու ժողովուրդներ, մասնաւորապէս՝ ժամանակին հզօր թագաւորութիւն ստեղծած մասքութները: Խալիփայութեան կենտրոնական իշխանութեան թուլացման ժամանակաշրջանում Թ դ. երկրորդ կէսին Շամախիի ամիրայ Խայսամ իբն Խալիդ իբն Յազիդն (արաբական Շայբանի ցեղից) իրեն անկախ հռչակեց եւ հիմք դրեց Շիրւանի մահմեդական ամիրայութեան (որը մի քանի դար շարունակ կարեւոր դեր խաղաց Արեւելեան Այսրկովկասի քաղաքական եւ մշակութային կեանքում): Այդ մասին հաղորդում է ծագումով դերբենդցի արաբալեզու հեղինակ Մամմուս ալ-Լակզին (ԺԱ դ. վերջ – ԺԲ դ. սկիզբ) իր «Շիրւանի եւ Բաբ ալ-Աբվաբի պատմութեան» մէջ, որը յաճախ կոչւում է «Թարիխ ալ-Բաբ» (պահպանուել է ԺԷ դ. օսմանցի պատմագիր Մունեջջիմ-բաշիի «Պատմական գրադարան» ժողովածոյում):

Շիրւանի հարաւային հարեւան Գանձակի ամիրայութիւնը ձեւաւորուեց Կուրի աջափնեայ հարթավայրային տարածքներում, կենտրոնը՝ աշխարհացոյցեան Ուտիք նահանգի հիւսիս-արեւմտեան Շակաշէն գաւառում: Սկսած Ը դ. երկրորդ կէսից՝ արաբ ոստիկանների նստոցը գտնւում էր Աղուանք-Առանի նախկին մարզպանանիստ Պարտաւ քաղաքում, սակայն Թ դ. կէսերին, երբ վերջինս որոշ չափով թուլացել էր, նրանք հիմնադրեցին նոր վարչական կենտրոն՝ Գանձակ կամ Ջանզա անունով: Մովսէս Դասխուրանցու (=Մաշտոց Եղիվարդեցու) մի վկայութեան համաձայն՝ դա տեղի էր ունեցել Հայոց 295 թուին (=29.04.846 – 28.04.847 թ.), կամ, ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի ձեռագրերի Բ խմբի (հնագոյն՝ ԺԳ դարի *a* գրչագրում թուականի հատուածը, ցաւօք, բացակայում է) միւս ենթախմբի՝ 297-ին (=848/849 թ.). բոլոր դէպքերում դա նախորդում էր Հայոց 300 թուականին (851-852 թ.) եւ Բուղայի արշաւանքին (853-855 թթ.), որոնց մասին խօսւում է երկի յաջորդող պարբերութիւններում:

Ժ դարի կէսերին Հայաստանի պատմութեան մէջ մուտք գործեց մի նոր օտար իշխանատոհմ՝ Ատրպատականի կողմից յայտնուած ազգութեամբ քուրդ Շադդադեանները: Ինչպէս հաղորդում է Մունեջջիմ-բաշիի ժողովածոյի կազմում պահպանուած՝ Գանձակի Շադդադեաններին նուիրուած ոչ մեծ պատմական երկը, նրանց առաջին ներկայացուցիչը Մուհամմադ իբն Շադդադ իբն Կուրտակն էր, ով 951 թ. դարձաւ Դուինի ամիրան: 970 թ. նրա սերունդները կարողացան մուտք գործել աջափնեայ Աղուանք (Առան) եւ հաստատել իրենց իշխանութիւնը Գանձակում (Ալի-Լաշկարի իբն Մուհամմադ)՝ սպանելով այդ քաղաքում Սալարեանների նշանակած ամիրային, որից յետոյ իշխանութիւնը տարածեցին նաեւ Պարտաւ-Բարդա եւ Բայլական քաղաքների վրայ: Լաշկարիի մահից յետոյ իշխանութիւնն անցաւ նրա եղբայր Մարզուբանին, որին մի քանի տարի անց սպանեց եւ Գանձակում տիրակալեց կրտսեր եղբայր Փադլ Ա-ն: Նոյն իրադարձու-

թիւնների մասին գրեթէ չշեղուելով արաբալեզու աղբիւրի տուեալներից եւ ուշագրաւ մանրամասներով՝ յայտնում է նաեւ ԺԳ դ. հայ պատմիչ Վարդան Արեւելցին: Շադդադեանները կարողացան ոչ միայն ամրապնդուել հարթավայրային Գանձակում, այլեւ լուրջ յաւակնութիւններ ներկայացնել հարեւան հայկական եւ վրացական տարածքների նկատմամբ: Սակայն ԺԱ դ. վերջին Սելջուկների քաղաքականութեան փոփոխութեան հետեւանքով տոհմը կորցրեց իշխանութիւնը Գանձակում եւ 1075 թ. վերջնականապէս հեռացաւ Արեւելեան Այսրկովկասի քաղաքական ասպարէզից: Ինչպէս գրում է Մուսեջ-ջիմ-բաշին, «Նրանց իշխանութիւնը տեւեց 128 տարի»:

Շիրուանի հիւսիսային հարեւան Դերբենդի ամիրայութեան մասին եւս ամենից մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Մամմուս ալ-Լակզին: Ըստ նրա եւ այլ մահմեդական աղբիւրների՝ Դերբենդի կամ, ինչպէս աւելի յաճախ այս դարաշրջանում կոչում էին՝ Բաբ ալ-Աբվաբի ամիրաները պատկանում էին Հաշիմեան տոհմին, որը սերում էր արաբական ազնուազարմ Սուլամի կամ Սուլայմ ցեղից: Դերբենդի ամիրայութեան տարածքը համեմատաբար փոքր էր, սակայն նրա ռազմավարական կարեւոր դիրքը՝ մահմեդական աշխարհի եւ հիւսիսկովկասեան տափաստանաբնակ հորդաների միջեւ, մեծ հնարաւորութիւններ էր ստեղծում այդ պետական կազմաւորման բազմակողմանի զարգացման համար: Միեւնոյն ժամանակ, սա մի կռուախնձոր էր ինչպէ՛ս Հարաւի ու Հիւսիսի, այնպէ՛ս էլ Խալիֆայութեան տարածքում ձեւաւորուած կիսանկախ իշխանութիւնների միջեւ, որոնք ձգտում էին օգտագործել Դերբենդի ռազմավարական դիրքը եւ հանդէս գալ հիւսիսային խազարներից մահմեդական աշխարհը պաշտպանողների դերում՝ ամրապնդելով սեփական վարկը: Դա վերաբերում էր ե՛ւ Շիրւանշահերին (ԺԲ դարից՝ Բաքու կենտրոնով), ե՛ւ աջափնեայ Առանի տիրակալներին (Գանձակ), ե՛ւ Ատրպատականի Սաջեան, ապա Սալարեան ամիրաներին:

Գլուխ III. «Թագաւորական իշխանութիւնների հաստատումը Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանքում Թ-Ժ դարերում»: Գլխի առաջին բաժինը կոչւում է. **«Համամ Բարեպաշտ Բագրատունու թագաւորութեան ձեւաւորումը Շաքիում»**: Շաքիի կամ «Արեւելից» իշխան Համամ Բարեպաշտ Բագրատունու ջանքերով Աղուանից թագաւորութեան վերականգնումը ուսումնասիրողները հիմնականում թուագրել են Թ դ. վերջին տասնամեակով՝ չկարողանալով հաստատապէս ճշտել տարին եւ համարելով, որ այն ուղիղ ձեւով նշուած չէ աղբիւրներում: Սակայն Մովսէս Դասխուրանցու ժամանակագրական հերթականութեամբ շարադրուած նշումների ուշադիր քննութեամբ կարելի է նկատել, որ պատմիչի ձեռքի տակ եղած աղբիւրում, այսինքն՝ Մաշտոց Եղիվարդեցու «նորայայտ» երկում Համամի թագաւոր հռչակուելը եղել է ուղիղ թուագրուած, եւ դա եղել է «Հայոց ՅԽԲ» թուականը (342 = 893/894): Մխիթար Այրիվանեցու մի վկայութիւնից յայտնի է, որ Համամ Բարեպաշտը կրել է նաեւ Յովհաննէս անունը՝ «Համամ, որ եւ Յովհաննէս Բագրատունի...» (նոյնն է ՄՄ երկու գրչագրերում):

Ժ դ. Կոստանդին Ծիրանծին կայսեր ներկայացրած՝ Բիւզանդիայի կայսրերի «ալբանական թղթակիցների» երկրացուցակը, որը յաջորդում է «Հայաստանի» եւ «Իբերիայի» երկրացուցակներին, ունի հետեւեալ տեսքը. «Ալբանիայի իշխանին [εἰς τὸν ἄρχοντα Ἀλβανίας]: Կրեւատադէսների [Κρεβατάδων] իշխանին՝ Կրեւատաս կոչուածին: Կէդոնիայի [Κηδωνίας] իշխանին: Ծանարիայի [Τζαναρίας] իշխաններին: Սարւանի [Σαρβάν] իշխանին, որոնք գտնւում են Ալանիայի եւ Ծանարիայի միջեւ: Իշխաններին Ազիայի [Ἀζίας], որի մէջ են գտնւում Կասպից դռները: Խրիւսայի [Χρύσα] իշխանին: Վրեզանի [Βρέζαν] իշխանին: Մոկանի [Μωκᾶν] իշխանին (Մոկանից է սկսւում Մէոտիս լիճը)»: Այս աղբիւրից, ինչպէս եւ ողջ մնացեալ աղբիւրագիտական նիւթից երեւում է, որ Համամ Բագրատունու ստեղծած Ալբանիա-Աղուանք (վրաց աղբիւրներում՝ «Հերէթի», դաղստանցի

պատմաբանների նախընտրած պայմանական եզրոյթով՝ «Երկրորդ Աղուանից») թագաւորութիւնը (Շաքի մայրաքաղաքով) ընդգրկում էր անտիկ եւ վաղ միջնադարեան Բուն Աղուանքի թագաւորութեան լոկ ծայր արեւմտեան մասը: Դա Ալազան եւ Իորի գետերի միջին ու ստորին հովիտներն էին, Կուրից հիւսիս եւ քորեպիսկոպոսական Կախէթի թագաւորութիւնից արեւելք: Բուն Աղուանքում կենտրոնական դիրք զբաղեցնող հին Կապաղակ մայրաքաղաքի շրջանում՝ նոյն «Կաբալա» անուան տակ ձեւաւորուած մահմեդական տիրակալներով (թէեւ՝ առաւելապէս քրիստոնեայ ազգաբնակչութեամբ) պետական կազմաւորումը (թերեւս՝ Ծիրանածնի «Ազիա»-ն, արաբական աղբիւրների Աբսիյա-Անբասիյան) սահմանակցում էր Համամի թագաւորութեանն արեւելքից:

Համամի որդի Ատրներսեհի եւ նրա որդի Իշխանիկի մասին հայկական, վրացական եւ արաբական աղբիւրներում մեծաթիւ տեղեկութիւններ են պահպանուել: Ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ 906 թ. Տաթեւի եկեղեցու օծմանը բազմաթիւ պատուաւոր հիւրերի թւում մասնակցում էին Աղուանից կաթողիկոս Սիմէոնը, Գարդմանի (Փառիսոսի) իշխան Սահակը (Սահակ Սեւադան) եւ «Աղուանից իշխաններ» Գրիգորը (*իմա՛* Խաչէնի իշխանը), Եսային (*իմա՛* Գորոգուի իշխանը) եւ Ատրներսեհը, որին վստահաբար համարում են Շաքի-Հերէթի թագաւորը: 908 կամ 909 թ. Ատրներսեհի երկրում հիւրընկալուեց վտարանդի դարձած Հայոց կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցին, որը դա նշում է այսպէս. «առ թագաւորն նոցունց Ատրներսեհ, որ ըստ արեւելից հիւսիսոյ Կովկասու, զի եւ նոքա ի ժողովրդենէն մերմէ եւ խաշն արաւտի մերոյ էին»: Մի քանի տարի անց (915 թ.), վրացական աղբիւրների հաղորդմամբ՝ Ատրներսեհը (Ադարնասէ) թշնամացել էր հարեւան երկու տիրակալների հետ՝ Ափխազաց եւ Կախէթի, սակայն կարողացաւ մեծ պատերազմից խուսափել՝ նրանց որոշ տարածքներ զիջելով Ալազանի վերնահովտում: Ալ-Մասուդին «Շաքին» անունով երկրի իր օրերի (943 թ.) թագաւոր է նշում «Հումամի որդի Ադզար-Նարսա»-ին: Իսկ արդէն 949 թ. Խաչէն գաւառ այցելած Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին «Աղուանից աշխարհի» «գլխաւորների» թւում յիշատակում է Իշխանակ թագաւորին՝ Ատրներսեհի որդուն, Համամ Բարեպաշտի թոռանը: Շաքի-Հերէթի թագաւոր Իշխանիկին գիտեն նաեւ արաբ եւ վրացի հեղինակները: Իբն Հաուկալը (Ժ դ. երկրորդ կէս) Հիջրէի 344 թուին (27.04.955-14.04.956 թ.) դեյլեմցի ամիրայ (Ատրպատականի ոստիկան) Մարզուբան իբն Մուհամմադ Սալարեանի հարկատուների ցանկում նշում է նրան երկրորդը եւ կոչում. «Շաքքիի տէր Իշխանիքը, որը յայտնի է որպէս Աբու Աբդ ալ-Մալիք»: Վերջին անունն արաբական ընկալմամբ նշանակում է «ալ-Մալիք անունով [աւագ] որդի ունեցողի հայր», եւ նկատի ունենալով, որ «ալ-Մալիք»-ի արաբերէն իմաստն է ոչ միայն «թագաւոր», այլեւ՝ «իշխան», կարելի է մտածել, թէ 950-ական թթ. սկզբին Համամի թոռ Իշխանիկն ունեցել է ոչ միայն որդի, այլեւ արդէն թոռ, ընդ որում՝ կոչուած իր պապի անունով՝ «Իշխան-Իշխանիկ»:

Գլխի երկրորդ բաժինը կոչւում է. **«Փառիսոսի թագաւորութեան ստեղծումը եւ նրա կարգավիճակի խնդիրը»**: Ժ դ. կէսին Բիւզանդիան՝ յանձին Կոստանդին Ծիրանածին կայսեր՝ արդէն լաւ գիտէր նաեւ Խաչէնի իշխանութեան որոշակի չափով անկախ կարգավիճակի մասին (կարծում ենք, որ այդպէս՝ նաեւ գոնէ Փառիսոսի): «Արարողութիւնների մասին» երկի նոյն գլխում Ծիրանածինը Հայաստանին վերաբերող առանձին պարբերութիւնը դնում է Արաբական խալիփայութիւնից յետոյ եւ Իբերիայի, Ալանիայի, Աբազգիայի եւ Ալբանիայի պարբերութիւններից առաջ: Իսկ նրանում «Մեծ Հայքի» ու Վասպուրականի «արխոնտների արխոնտներին» (հայկական աղբիւրների ընկալմամբ՝ թագաւորներին) ուղարկուող նամակներից յետոյ հեղինակը գրում է երկրի կիսանկախ միաւորների տէրերին (ընդամենը՝ 8 կամ 10 «արխոնտի») առանձին ուղարկուող նամակների մասին: Այս շարքում Կոգովիտից (Κοκοβίτ), Տարօնից (Ταρώ), Մոկսից (Μῶεξ),

Անձեւացիքից (Ἀύζαν < *Ἄνζαυ), Սիւնիքից (Συνῆς) ու Վայոց ձորից (Βαϊτζώρ) յետոյ նա հաղորդում է հետեւեալ վերջին երկու անունները. «Խաչէնի [Χατζιένης] իշխանին՝ Հայաստան, Սեւորդեաց, այսինքն՝ Սեւ որդիներ [Σερβοτιῶν] կոչուող երեք իշխաններին»: Ի դէպ, այս հատուածում աղբիւրը չի նշում այդ «արխոնտների» նկատմամբ «Մեծ Հայքի» կենտրոնական իշխանութեան որոշակի գերակայութեան մասին, սակայն նման նշում կայ Իբերիայի պարբերութեան մէջ, եւ դա բաւարար է թւում՝ Հայաստանի վրայ եւս նոյնը տարածելու համար: Ենթադրելի է, որ Հայոց հատուածում նմանատիպ արտայայտութիւնը բաց է թողնուել զուտ հեղինակի շարադրանքի բովում, եւ կոնկրետ պատճառը եղել է՝ հէնց այդ տեղում «Ասպուրականի արխոնտ»-ի՝ իշխանաց իշխանի պատիւ ստանալու վերաբերեալ «լրացուցիչ» նախադասութիւն տեղաւորելու կարիքը: Ծիրանածնի «հայաստանեան» ցուցակն ուշադիր համեմատելով այլ հայկական աղբիւրներից յայտնի նիւթի հետ, իբրեւ ամենից հաւանական վարկած՝ թւում է, թէ կարելի է նաեւ մտածել, որ կայսեր կամ նրա երկի մի ընդօրինակողի մօտ ինչ-որ շփոթութիւն է սպրդել, իսկ իրականում «Սեւ որդիներ» – «Սեւորդիք» են կոչուել բիւզանդացիների «Հայաստանեան թղթակիցներից» ոչ թէ վերջին երեք իշխանութիւնները, այլ այդ երեքից առաւելագոյնը երկուսը, այն է՝ Թ-Ժ դարերում հայ հեղինակներին լաւ յայտնի Տաւուշ–Ձորագետը եւ Գարդման–Փառիսոսը: Ըստ այս վարկածի՝ Ծիրանածնի «երրորդ թղթակցի» տակ հնարաւոր է ենթադրել Գորոգուի իշխանին, որն այդ տարիների իր կարգավիճակով ոչնչով չէր զիջում Խաչէնին, Փառիսոսին եւ Տաւուշ–Սեւորդիքին:

Փառիսոսի թագաւորութեան ստեղծման (Յովհաննէս-Սենեքերիմի թագադրման) մասին պահպանուել է Դասխուրանցու երկի նախավերջին գլխի մանրամասն հաղորդումը («Ձերէց որդին Իշխանաննոյ՝ զՅովհաննէս, որ եւ Սենեքերիմ կոչեցաւ, ընտրեաց աջ Բարձրելոյն՝ կոչելով ի թագաւորութիւն. զվաղնջուց խափանեալ թագաւորութիւնն Տէր ամենակալ ի ձեռն սորա նորոգեաց. զոր թագաւորն Պարսից մեծամեծ զարդուք զարդարեաց զնա, տայ նմա եւ զթագ հաւր իւրոյ եւ զնորին երիվարն. ի նոյն ամի եւ որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանազան եւ ծիրանիս թագաւորական առաքէր ի պատիւ եւ ի գովեստ աստուածայաջող առն այնորիկ. եւ ի ձեռն հայրապետական աջոյն առնոյր զաւծումն թագաւորական»): Այն թոյլ է տալիս տուեալ իրադարձութիւնը թուագրել «Պատմութիւն Աղուանից»-ի շարադրմանը նախորդած ժամանակահատուածով (ըստ առկայ թուերի՝ մինչեւ 982 թ.): Ն. Ադոնցը ենթադրում է, որ Կայսրութեան անունից Յովհաննէս-Սենեքերիմին թագ ուղարկողը Տայքի յայտնի Դաւիթ Կուրապաղատն է եղել (մահ. 1000/1001 թ.), եւ հաշուարկելով՝ վերագրում է այդ իրադարձութիւնը 967-978 թթ. միջակայքին, երբ Դաւիթը Բիւզանդիայից դեռ չէր ստացել կուրապաղատի տիտղոս ու մագիստրոսի կոչում էր կրում: Փառիսոսի իշխանի թագադրման դասխուրանցիական նկարագրութեան մէջ կայ մի ուշագրաւ հանգամանք. աջափնեայ Աղուանքի էթնիկապէս հայկական տարածքում ծնուած ու նախ եւ առաջ այդ տարածաշրջանի հայ աւատական վերնախաւի՝ Ժ դարում մեծապէս կենտրոնախոյս (Անիի Բագրատունիների եւ Հայոց կաթողիկոսութեան հանդէպ) ձգտումներն ու շահերն արտայայտող հայ պատմիչը նախորդ գլխում Համամ Բարեպաշտի թագադրումը (ձախափնեայ Շաքիում, այսինքն՝ առաւելապէս դեռ բուն աղուանական էթնիկական միջավայրում) ներկայացրել էր խիստ բնութագրական, այսպէս ասած՝ «աղուանամէտ» եզրութաբանութեամբ. «որ եւ *Աղուանից* եղեւ *թագաւոր*, նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն *տանն Աղուանից* Համամ նորոգէ, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն. այսք *ի միում ժամանակի* գործեցան»: Իսկ այստեղ՝ երկի վերջերգը պսակող եւ այդ իմաստով իր «գլխաւոր հերոս» Փառիսոսի տիրակալի թագաւորանալու շքեղ նկարագրութեան մէջ Դասխուրանցին ամբողջապէս ձեռնպահ է մնում նմանատիպ եզրութաբանութեան եւ ուղղակի՝ «Աղուանք» անուան կիրառումից:

Եւ դրա պատճառը պէտք է համարել ոչ միայն պետական միաւորումների միջեւ, հաւանաբար, պաշտօնապէս համաձայնեցուող ու «միջազգայնօրէն» պարտադիր՝ կրկնութիւն չհանդուրժող անուանակարգը խախտելու դժուարութիւնը, այլեւ Կուրի աջափնեակի հայ հասարակութեան մէջ էթնոպաշտպանիչ միտումների զուգահեռ գործառութիւնը: Տուեալ դէպքում դա արտայայտուած է նշուած «աղուանամէտ» եզրութաբանութիւնը մինչեւ ինչ-ինչ էթնովտանգաւոր եւ խրտնեցնող սահման չչարաշահելու հասարակական պարտադրանքի մէջ (այդ թւում՝ վերնախաւի կողմից), թեպէտ ինքը՝ Մովսէս Դասխուրանցի պատմագիրը, կարող է դիտուել իբրեւ հէնց «չարաշահողների» շարքերում ամենից աւելի առաջ գնացած անհատներից մէկը:

Փառիսոսի յաջորդ թագաւորների՝ Յովհաննէս-Սենեքերիմի եղբայր Գրիգորի ու նրա որդի Փիլիպպէի մասին տեղեկութիւններ են պահպանել Ասողիկը եւ Վարդան Արեւելցին: Ասողիկի վերջին ժամանակագրական հաղորդման համաձայն՝ Փառիսոսի արքայատոհմն, իբրեւ թէ, սպառուել էր 1003 թ. վախճանուած Գրիգորով, իսկ նրա տարածքը բաժանուել էր Հայոց Գագիկ Ա արքայի եւ Գանձակի Փատլուն ամիրայի միջեւ: Սակայն պատմիչն իր շարադրանքն աւարտել է արդէն յաջորդ տարի (գուցէ եւ՝ քիչ անց վախճանուելով) եւ, հաւանաբար, պարզապէս չի հասցրել տեղեկատուութիւն ստանալ Գրիգորի որդի Փիլիպպէի թագաւորանալու մասին (պարզ է՝ հայրական տիրոյթների միայն մի մասի վրայ), ինչը մեզ յայտնի է Վարդան պատմիչից, երբ նա խօսում է ԺԱ դ. կէսերին նրա իշխանութեան աւարտի մասին:

Գլխի երրորդ բաժինը կոչւում է. **«Գորոզուի եւ Խաչէնի թագաւորութիւնների ստեղծումը»**: Մինչեւ վերջերս հայագիտութեան մէջ համարւում էր, թէ զարգացած միջնադարի Հայոց Արեւելից կողմանքում թագաւորական իշխանութիւն գոյութիւն է ունեցել միայն Փառիսոսում: Նրան հարեւան շրջաններում սկզբնաղբիւրների արձանագրած «թագաւոր» անուանակոչումները պարզապէս անտեսւում էին կամ արժանանում առաւելագոյնը՝ բնագրերի հրատարակիչների կցկտուր ծանօթագրումների: Սակայն 1990-ական թթ. վերջում հարաւային Արցախում մեծ թուով նոր վիմագրեր յայտնաբերուեցին, եւ դրանց պատշաճ արժեւորումը թոյլ տուեց մեզ ընդունել (առաջին անգամ՝ 1998 եւ 1999 թթ.՝ Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերին եւ Գտչավանքի շինարարական արձանագրութեանը նուիրուած յօդուածներում) աւանդական գնահատականների կտրուկ սրբագրման անհրաժեշտութիւնը: Այսօր մենք կարող ենք անվերապահօրէն խօսել Ժ-ԺԱ դդ. սահմանագծին Փառիսոսի թագաւորութեան կողքին Հայոց Արեւելից կողմանց եւս երկու՝ Գորոզուի (հարաւային Արցախում) եւ Խաչէնի (կենտրոնական Արցախում) հաւասարազօր թագաւորութիւնների ի յայտ գալու մասին:

Գորոզուի թագաւորութեան մասին պահպանուել են 997 եւ 1000 թթ. վիմագիր փաստեր: Դրանցից առաջինը Տումի գիւղի մօտ Կարմիր եղցու լուսամուտի ճակատին փորագրուած 5-տողանոց արձանագրութիւնն է, որի հեղինակ «թագաւորի քոյր» Սոփին նշում է. «...Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ Տ[ԵԱՌ]Ն ԳԱԳԻԿԱ[Յ], ՈՐԴ[Ի]Ո[Յ] ՄՈՒՍԷԻ, ԵՍ՝ ՍՈՓԻ, ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ, ՇԻՆԵՑԻ...»: Քանի որ 1000 թուականին Փառիսոսում կամ որեւէ այլ երկրամասում «Մուսէի որդի Գագիկ թագաւոր» չկար, պարզ է, որ յիշատակուած է տեղի՝ թագաւորական տիտղոս կրող տիրակալը: Իսկ Թաղավարդ գիւղի մօտ գտնուող Ջոխտ Պըռաւածառ վանքի՝ ներկայումս կորած երկու խաչքարերից մէկի վրայ Լէօն, Մ. Բարխուդարեանցը եւ Ե. Լալայեանն ընթերցել են Հայոց ՆԽԶ թիւը (=997/998 թ.), որից յետոյ նաեւ՝ «Յամս Աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Յովհաննիսի՝ Ամարասա[յ] եպիսկոպոսին, եւ պետութեան տեառն Գագիկայ՝ Աղուանից իշխանաց իշխանի, ես՝ հայր Կիրակոս...»: Այստեղ նոյն տիրակալը կոչուած է ոչ թէ «թագաւոր», այլ «իշ-

խանաց իշխան» (թէեւ՝ երկու եզրոյթների իմաստն այս դարաշրջանում, ըստ էութեան, նոյնն էր), բայց փոխարէնն ուշագրաւ է նրա երկրի անուանման ձեւը՝ «պետութիւն»:

Համառօտ ամփոփենք, որ Գորոզուի իշխաններից (հետագայում՝ թագաւորներ) աղբիւրներում վկայուած են հետեւեալ անուններով տիրակալները. Ստեփաննոսի որդի Յովսէփ երէցը՝ Մովսէս Դասխուրանցուն (=Մաշտոց Եղիվարդեցուն) եւ արաբ հեղինակներին յայտնի Ստեփաննոս Աբլ Ասադ իշխանի քրոջ ամուսինը; նրա որդի Եսայի Աբու Մուսէն, արաբ հեղինակների մօտ՝ «Իսայ իբն Յուսուֆ իբն ուխտ Իսթիֆանուս»; նրա աւագ որդի Մուսէն, ում շնորհիւ էլ հայրը կոչւում էր «*Աբու* Մուսէ»; 906-ին Տաթեւում յիշուած երեք «Աղուանից իշխաններից» մէկը՝ Եսային (որը, թերեւս, Աբու Մուսէի նոյնանուն թոռն էր); 955 եւ 958 թթ. Իբն Հաուկալի եւ Անանիա Մոկացու մօտ յիշատակուած Վաչագանի հայր Մուսան; ինքը՝ Վաչագանը (արաբական տարբերակով՝ «Վաշական իբն Մուսա»); Մատթէոս Ուռհայեցու աղբիւրի՝ «Վաչագանի որդի ... Գորոզուի Գագիկ»-ը (վերածուած՝ Գոշազգակի); 997/998 եւ 1000/1001 թթ. յիշատակուած Գագիկ թագաւորի եւ Սոփիի հայր Մուսէն; եւ վերջապէս ինքը՝ Գագիկ թագաւորը:

Խաչէնում թագաւորութեան հաստատման մասին աղբիւրների ուղիղ վկայութիւններ չեն պահպանուել: Սակայն կան հարեւան երկու թագաւորութիւնների հետ զուգահեռները եւ Օրբէլեանի անուղղակի տեղեկութիւնները, որ վերաբերում են Սիւնիքի արքայատոհմի խնամիական կապերին: Նրանից գիտենք, որ Բաղք-Կապանի թագաւոր Գրիգոր Ա-ի (1051-1072 թթ.) անունն էր «Աղուանից [այս դէպքում՝ Խաչէնի] թագաւոր» Սեւադան. նա հայրն էր Շահանդուխտ թագուհու («ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի») եւ նրա եղբօր՝ «թագաւորազն մանուկ» Սենեքերիմի, որին անժառանգ Գրիգորից յետոյ վստահուեց Սիւնիքի գահը: Վահանավանքի կրկնայարկ եկեղեցու շինարարական վիմագրում իր հօր՝ թագաւոր լինելու մասին գրում է նաեւ Շահանդուխտը: Համեմատաբար վերջերս Վահանավանքի արքայական գերեզմանատանը Գ. Գրիգորեանը յայտնաբերուել է նաեւ Գրիգոր թագաւորի «զոքանչ» կոչուած՝ «Աղուանից թագուհի» Սոփիի (ըստ այսմ՝ Սեւադայ թագաւորի կնոջ) տապանաքարը: Սոփին (Սոփիան) յիշատակուած է նաեւ իր որդու՝ Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի մի ընծայագրում, որը պահպանել է Ստեփաննոս Օրբէլեանը:

Վերլուծելով առկայ աղբիւրագիտական նիւթը՝ կարելի է նկատել, որ Խաչէնի եւ Գորոզուի իշխանութիւնների վերաճումը թագաւորութիւնների, ըստ ամենայնի, նոյնպէս տեղի է ունեցել Ժ դ. վերջերին: Դա այն դարաշրջանն էր, երբ Բագրատունեաց թագաւոր-շահնշահերն, ըստ էութեան, հաշտուել էին իրենց «Մեծ Հայքի» (այդպիսին էր երկրի պաշտօնական անուանումը) տարածքում փոքր աւատական թագաւորութիւնների ձեւաւորման իրողութեան հետ եւ, ապահովելով դաշնակցային հիմունքներով Անիի գերակայութիւնը, հէնց իրենք էլ հաստատում էին նրանց արքայական լիազօրութիւնները՝ ինվեստիտուրան (աղբիւրները նկարագրում են այդպիսի հաստատումը Լոռու եւ Կարսի թագաւորութիւնների համար): Հաւանաբար, Խաչէնի տիրակալի թագադրումը յաջորդել է Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի շարադրման պահին (982-988 թթ. միջեւ), ուստի եւ չի յիշատակուել այդ երկում:

Գլուխ IV. «Թագաւորութիւնների անկման շրջան»: Գլխի առաջին բաժինը կոչւում է. **«Նոր վիմագիր սկզբնաղբիւրներ հարաւային Արցախից»**: 2000 թ. Յունիսին մեզ յաջողուեց հետազօտել Ղորչուչայ վտակի (նորօրեայ Քաշաթաղում արդեն վերանուանուած Ռախիշի գետակ) վերնահովտում գտնուող Աղբրաձոր (Ղորչուբուլաղ, ԺԹ դարում՝ Կիւրջաբուլաղ) եւ Հայթաղ (Ղորչու, ԺԹ դարում՝ Ղարաչանի) գիւղերի բնակիչների կողմից յայտնաբերուած փոքր չափերի եկեղեցիով պարսպապատ վանքը եւ մօտակայքի հանգստարանը: Եկեղեցու մուտքի առջեւ ընկած են արձանագիր երկու մեծա-

դիր, կոտրուած խաչքարեր, որոնք ԺԱ դարի խաչքարերի լաւագոյն օրինակներից են: Արձանագրութիւնները փորագրուած են խաչքարերի ճակատի ստորին մասում գտնուող վարդեակների երկու կողմերում: Ցաւօք, առաջինի (աւելի փոքր) ձախ ներքեւի կտորը ջարդուած է, եւ կարող ենք ընթերցել միայն աջ կողմում երեւացող տառերը, ուր երկու տողով գրուած է. ԾԺԵ / ԷՐ *[= 1068 թ.]*: Երկրորդ (քիչ աւելի մեծ) խաչքարի վարդեակի երկու կողմերի տառերն էլ պարզ ընթերցւում են, եւ բովանդակութիւնը հետեւեալն է. ԹՎ<u>ԱԿԱՆՆ</u> Հ<u>ԱՅՈՑ</u> / ԾԺԸ / ԷՐ *[= 1069 թ.]*: ԵՍ՝ Գ//ՐԻԳՈՐ՝ / ԻՇԽԱՆ/ԱՑ ԻՇԽ/ԱՆ, ՈՐԴ/Ի ԱՏՐ//{…}: Ակնյայտ է, որ այս Գրիգոր իշխանաց իշխանի հայրանունը կիսատ է (հետեւաբար արձանագրութիւնը շարունակուել է խաչքարի կորած պատուանդանին), բայց պարզ է, որ յստակ ընթերցուող *ԱՏՐ* տառերը «Ատրներսէհ» անուան սկիզբն են: Մենք հնարաւոր ենք համարում ենթադրել, որ Աղբրաձորի այս արձանագրութեան մէջ 1069 թ. իրեն յիշատակել է ո՛չ Խաչէնի, եւ ո՛չ Փառիսոսի կամ Լոռու, այլ Գորոզուի՝ այլ աղբիւրներից մեզ անյայտ «իշխանաց իշխան» Ատրներսէհի որդի Գրիգորը:

Գերեզմանատան ամենամեծ, վիշապանման տապանաքարը խիստ ուշագրաւ արձանագրութիւն է կրում նիստերի վրայ, երկու տող՝ հարաւայինի, մէկ տող՝ հիւսիսայինի: Բնագիրը որոշ սխալներով է, բայց հեշտ ընթերցուող. ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի ՄԵԾԻՆ ՎԱՐԴԿՈ[Յ] / ՄԱՅՐԷՋՐԵՑՈ[Յ], ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻՍԻ, // ՈՐ ՏԱՑԷ Ք<u>ՐԻՍՏՈ</u>Ս ԱՐՔԱ[Յ]ՈՒԹԻՆ: «Մեծն Վարդիկ *[կամ՝* Վարդկոյ*]* Մայրէջրեցու» տապանաքարի յայտնաբերումը Աղբրաձորի վանքի գերեզմանատան եւ գեղանախշ խաչքարերի հարեւանութեամբ թոյլ է տալիս ենթադրել, որ Մայրէջուրը Արցախի հէնց նոյն յայտնի «Մայրեաց ջուրք» տեղանունն է («հանդէպ Գանձակայ»), որտեղից, ըստ Սամուէլ Անեցու՝ Կիլիկիա էր գաղթել Հեթումեանների արքայատոհմի հիմնադիր Օշին իշխանը: Իսկ Անեցու շարադրանքի բովում Գանձակի յիշատակումը (իրական՝ Վայկունիք-Վակունիք գաւառի փոխարէն) մեկնաբանելի է նրանով, որ ԺԲ դ. ժամանակագրի գրաւոր կամ բանաւոր աղբիւրը, հաւանաբար, խօսել է հէնց «Գանձակից» (այսինքն՝ այդ քաղաքում գահակալող Փադլունեաններից կամ նրանց այնտեղից հեռացնել ջանացող սելջուկների ուղարկած պաշտօնեաների կողմից) «մայրեացջուրքցիներին» հասած աղէտների մասին («ի բռնութենէն Տաճկաց»): Բացի այդ՝ կարելի է նաեւ մտածել, որ «հանդէպ Գանձակայ» ասելով՝ Անեցին կամ իր աղբիւրը նկատի ունէին ողջ Հայոց Արեւելից կողմանքը (Առան երկիրը), որի կենտրոն էր ընկալւում արդէն իր զարգացման ամենածաղկուն ժամանակաշրջանը թեւակոխած Գանձակը: Ըստ «Շիրւանի եւ Դերբենդի պատմութեան»՝ Առանի Շադդադեաններին վերաբերող մի տեղեկութեան (նաեւ արաբական այլ աղբիւրների վկայութիւնների)՝ սուլթան Ալփ Արսլանն ի վերջոյ կարողացել էր դադարեցնել Փադլունեանների տիրապետութիւնը Գանձակում, իսկ վերջին ամիրաներ Փադլ Բ-ին ու նոյնանուն որդուն հեռացնելով Առանից՝ պատուաւոր աքսորեալի վիճակում պահել Թալիշի կողմերում. ընդ որում այդ տեղեկութիւնը թուագրւում է Հիջրայի 469, այսինքն՝ 1075 թուականով: Համադրելով դա Անեցու վկայութեան հետ՝ հնարաւոր է ենթադրել, որ Օշին Մայրեջրեցու հեռանալը Գանձակի երկրից դէպի Լամբրոն կապուած է եղել նրա տիրոյթների դէմ ոչ թէ Փադլունեանների (ինչպէս ընդունուած էր), այլ վերջիններիս եւս հալածող սելջուկեան նորանշանակ ամիրաների ճնշումների հետ:

Հինգերորդ գլխի երկրորդ բաժինը կոչւում է. **«Թագաւորութիւնների անկումը ԺԱ դարում»**: Ժ դ. երկրորդ կէսին Շաքի-Հերէթը միացուեց Կախէթ-Ծանարքի թագաւորութեանը, ընդ որում՝ առայժմ մասնագէտների համար անյայտ հանգամանքներում, որի պատճառը աղբիւրագիտական նիւթի բացակայութիւնն է: Փոխարէնը՝ յայտնի է, որ ԺԱ դ. սկզբներին Կախէթ-Հերէթում (վրացական աղբիւրներում հէնց այդպէս էլ կոչուած է՝ «Կախերի եւ հերերի» կամ «Ռաների եւ կախերի թագաւորութիւն»), արքայատոհմի փո-

փոխութիւն է տեղի ունեցել, եւ գահն անցել է Լոռու հայ Բագրատունիներին՝ Դաւիթ Անհողինի որդի եւ Կախէթում փեսայացած Գագիկին: Ուշագրաւ է, որ այդ թագաւորները հայ եւ վրաց աղբիւրներում երբեմն կոչուած են պարզապէս՝ «թագաւոր Աղուանից»:

ԺԱ դ. յայտնի Տիրանուն վարդապետի մի նամակում (հրատ.՝ Ա. Բոզոյեան) իբրեւ նրա թղթակիցներ են նշւում թագաւորներ Փիլիպպէն (Փառիսոսի) եւ Ատրներսեհը, որը կարող է համադրուել Մայրեջրի վանքի՝ վերը նշուած խաչքարի կանգնեցնող «Գրիգոր իշխանաց իշխանի» (թերեւս՝ յիշուած նաեւ Աղին նահատակ մատուռի մի կորսուած վիմագրում) հայր Ատրներսեհի հետ: Տիրանունի մէկ այլ «Պատասխանի» ուղղուած է Սենեքերիմ (Սենեքարիմ, Սինաքերեմ) անունով մի անձի, որը կարող է համարուել թագաւոր եւ, գուցէ, ո՛չ թէ Վասպուրականի (վերջին), այլ, ինչպէս եւ վերը նշուած Փի[լիպ]պէն ու Ատրներսեհը՝ Աղուանից (Հայոց Արեւելից կողմանց) թագաւոր: Նման վարկածով՝ մենք հակուած ենք նրան նոյնացնել ոչ թէ Փառիսոսի թագաւորութեան հիմնադիր Յովհաննէս-Սենեքերիմի (Ժ դ. երկրորդ կէս) կամ էլ նրա ժամանակակից եւ Անանիա Մոկացուն ու Իբն Հաուկալին յայտնի՝ Խաչէնի իշխան Սենեքերիմի հետ, այլ վերջինիս՝ այլուր չյիշատակուած, բայց ենթադրելի նոյնանուն թոռան, որը ժամանակային առումով նաեւ կարող էր լինել վերը նշուած Սեւադայ թագաւորի (ԺԱ դ. առաջին կէս) հայրը:

Ի տարբերութիւն Շաքիի հայ Բագրատունիների կամ «Երկրորդ Աղուանից» թագաւորութեան՝ Հայոց Արեւելից կողմանց երեք թագաւորութիւնները (Փառիսոսի, Խաչէնի եւ Գորոզուի) գոյատեւեցին նաեւ յաջորդ՝ ԺԱ դարում: Ինչ վերաբերում է նրանց անկման ժամանակին, ապա դրա գոնէ սկիզբը, առաւել մեծ հաւանականութեամբ, կարելի է կապել սելջուկ սուլթան Ալփ-Արսլանի՝ 1048 թ. սկսուած աւերիչ արշաւանքի հետ: Ըստ Վարդան պատմիչի՝ Բիւզանդիայի կողմից 1045-ին Անիի գրաւմանը յաջորդած տարիներին Գանձակի ամիրայ Փադլունը (իրականում՝ Աբու-լ-Ասվար իբն Փադլ Շադդադեանը, որն ըստ արաբական աղբիւրների՝ 1022-1049 թթ. իշխել էր Դուինում, իսկ 1049 թ. խլեց Գանձակը մանկահասակ Անուշիրուան իբն Լաշկարիից), անկասկած, սելջուկների հետ համագործակցելով ու դառնալով նրանց առաջապահը Կուրի հովտում, իր տիրապետութիւնն էր հաստատել Փառիսոսում եւ շրջակայ գաւառներում՝ մեծ սպառնալիք դառնալով արդէն Լոռու (Տաշիր-Զորագետի), Կախէթ-Հերէթի եւ Քարթլիի (Ափխազաց եւ Վրաց) թագաւորների համար. բնագիրն է. «Եւ սիրոյ աղագաւ գնացեալ առ նա Փիլիպէ *[Փառիսոսի արքան]*՝ որդի Գրիգորոյ, ըմբռնէ *[Փատլուն Ա-ն]* զնա ի կապանս զկնի մահուան հօրն եւ առնու ի նմանէ զՇաշուաղ եւ զՇօթս: Կոչեցեալ առ ինքն զԳագիկ՝ որդի Համամայ, զտէրն Գանձեաց՝ սպանանէ եւ առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ՝ տիրէ Խաչենոյ եւ Գորոզոյ եւ Սեւորդեացն եւ գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Զորոյ գետին եւ ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից *[Կախէթ-Հերէթի]* եւ ընդ Բագարատայ թագաւորին Վրաց *[1027-1072 թթ.]*»: Հարկ է նկատի ունենալ, որ Վարդանի շարադրանքի բովում նախավերջին թագաւորների անունների պարզ շփոթութիւն է սպրդել, քանի որ Լոռին երբէք Գագիկ թագաւոր չի ունեցել, ուստի պէտք է ուղղակի սրբագրել եւ ընկալել հակառակը. «Կիւրիկէի թագաւորին Զորոյ գետին *[1048-1089 թթ.]* եւ ընդ Գագկայ թագաւորին Աղուանից *[1038-1058 թթ.]*»:

Գլխի երրորդ բաժինը կոչւում է. **«Բուն Աղուանքի արեւելեան հատուածի ամիրայութիւնները ԺԱ-ԺԲ դարերում եւ Դերբենդի հայ թագաւորների խնդիրը»**: Այստեղ անդրադարձել ենք խնդրոյ առարկայ դարաշրջանի աւարտին նախկին Աղուանից մարզպանութեան հիւսիս-արեւելեան հատուածի մահմեդական պետական կազմաւորումների վիճակին եւ Մատթէոս Ուռհայեցու յայտնի հակասական պնդմանն այդ տարածքի հայազգի թագաւորների մասին: Պատմիչի խօսքերով՝ «Էին եւ այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Օզաց եւ Աղուանից *[ի-*

մայ Ալանից*]*, որք էին թագաւորք անարատք եւ սրբակրօնք, ... որք էին անուանք այսոքիկ՝ Վաչագան, եւ Գոշակտակն *[var.* Գոշազգակն*]*՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակտակին, Սեւադա[յ] որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սեւադայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ եւս կենդանի էր՝ մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»:

Շատ ուսումնասիրողներ նկատել են վերեւում բերուած Դարբանդ-Կապան-Աղուանքի մեծ արքայացանկի հակասականութիւնը, բայց, որպէս կանոն, խուսափել են նրա առանձին տարրերի հաւաստիութեան խնդրի քննարկումից: Փոխարէնը՝ մի դէպքում Կ. Թումանովը, միւս դէպքում՝ Ս. Բարխուդարեանը, ինչ-ինչ ձեւերով լուծելով ակնյայտ հակասութիւնները, փորձել են այդ ցուցակն ամբողջութեամբ համարել՝ առաջինը՝ «Դա**բանդ**»-ի (որից էլ՝ իբրեւ թէ > «Դար**բանդ**»), այսինքն՝ Գորոզուի 6 տիրակալների ցանկ, իսկ երկրորդը՝ Դերբենդում գոյատեւած «Հայ-աղուանական թագաւորութեան» գահակալների: Ս. Բարխուդարեանն իբրեւ հիմք է մատնանշում Սամուր գետից հարաւ, հայաբնակ Խաչմաս գիւղի մօտ (Կուդիալչայ գետի ափին, ուր տեղորոշւում է նաեւ հին Մասքթաց թագաւորութեան Արշակունի արքաների կենտրոնատեղի Վատնեան դաշտը) գտնուող գերեզմանատան 3 քարերի վրայ՝ «Այս է տապան Սենեքերիմ արքայի», «Գրիգոր կրեյսար» եւ «Յովհաննէս կրեյսար» հայերէն տապանագրերը, որոնցում յիշուած Սենեքերիմին ու Գրիգորին դեռեւս ԺԹ դարում դրանք տեսած ու ընթերցած երկրագիրները համադրել են Ուռհայեցու ցանկի վերջին երկու արքաների հետ: Տուեալ համադրումն արդարացի է, սակայն աւելի հաւանական է մտածել, որ Խաչմասի տապանագրերում այդ արքայանունների յայտնուելու հիմքն էլ զուտ գրական է: Ենթադրելի է, որ հասարակական ինչ-որ վերելքի պահին տեղի հայութիւնը, հէնց Ուռհայեցի պատմիչի տեղեկութիւնների ոչ բարդ մեկնութեամբ «պարզելով» իր երկրի հին արքաների անունները («թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին»), «վերականգնել» է նրանց տապանաքարերը մի առաւել յարմար, գուցէ՝ հին աւանդութիւնների հետ կապուած վայրում (եթէ վարկածը ճիշտ է, ապա տեղում պիտի լինէին նաեւ Ուռհայեցու ցանկի միւս 4 արքաների կենոտաֆները):

Իրականում Մատթէոս Ուռհայեցու ցանկը ճիշտ է թւում դիտարկել պարզապէս իբրեւ տարբեր, այդ թւում՝ բանաւոր աղբիւրների հիման վրայ հէնց պատմիչի իսկ կողմից ի մի բերուած-մշակուած հաւաքածոյ: Համադրելով պահպանուած սկզբնաղբիւրների նիւթերը եւ փորձելով պարզել իւրաքանչիւր անուան կամ դրանց խմբերի համար Ուռհայեցու ձեռքի տակ եղած հաւանական աղբիւրի գոնէ բնութագրիչները (պարամետրերը), ապա եւ տուեալ անուան հաւաստիութեան աստիճանը՝ արձանագրելի է, որ.

ա) արքայացանկի **առաջին երկու** անունների համար (Վաչագան եւ Գոշա**զգ**ակ) պատմիչին, ամենայն հաւանականութեամբ, հիմք է ծառայել ինչ-որ խիստ հետաքրքրական բնագրական կտոր (բայց գուցէ՝ արդէն խաթարուած), մօտաւորապէս՝ «Վաչագանի որդի եւ իշխան Գո**ր**ոզ{ուոյ} Գա{գի}կ» բովանդակութեամբ; բ) ցանկի **երրորդ** անուան համար հիմք է ծառայել, ամենայն հաւանականութեամբ՝ Յակոբոս Սանահնեցու երկում Փիլիպպէ Աղուանից (Փառիսոսի) թագաւորին յիշատակող մի հատուած, որը վերաբերուել է այդ թագաւորի՝ Յովհաննէս Աղուանից կաթողիկոսի ընկերակցութեամբ, բայց ոչ թէ 961 թուականին, այլ մի քանի տասնամեակ անց տեղի ունեցած ինչ-որ կարեւոր իրադարձութեան առիթով Անի գալուն (գուցէ եւ՝ Գագիկ Ա-ին 1007/1008 թ. թագադրելու-օծելու); գ) ցանկի **չորրորդ** անուան՝ Սեւադայի համար Ուռհայեցուն հիմք է ծառայել, ամենայն հաւանականութեամբ՝ «[Բաղք-] Կապանի» արքայ Սենեքերիմի հօր մասին ինչ-որ մի գրաւոր կամ բանաւոր իրական տեղեկատուութիւն, որում նա ներկայացուած է եղել իբրեւ «Աղուանից թագաւոր»; դ) ցանկի վերջին՝ **հինգերորդ** եւ **վեցերորդ**, իրականում՝ Սիւնեաց (Կապանի) արքաներ Սենեքերիմի ու նրա որդի Գրիգորի անուն-

ների համար հիմք է ծառայել, ինչպէս նշեցինք նախորդ կէտում, Սենեքերիմի՝ «Աղուանից թագաւոր Սեւադայ»-ի որդին լինելու վերաբերեալ լիովին սպասելի ու հաւաստի տեղեկատւութիւնը, որը պատմիչն, իհարկէ, կարող էր ունենալ, գոնէ՝ իբրեւ դէպքերի ժամանակակից (Գրիգոր Բ-ի մասին նա հէնց այդպիսի յատուկ նշում ունի. «որ դեռ եւս կենդանի էր՝ մինչեւ գրէաք զայս մատենագրութիւնս մեր»):

Գլուխ V. «Խաչէնի իշխանատոհմը ԺԲ-ԺԳ դարերում»: Գլխի առաջին բաժինը կոչւում է. **«Խաչէնի իշխանութեան հզօրացումը ԺԲ դարում»**: Արցախի գրեթէ կենտրոնում՝ Խաչէնագետի միջնահովտի աջ (հարաւային) ափին, կաթողիկոսանիստ Գանձասարի դէմ-դիմաց յառնող անտառապատ լեռան ժայռոտ գագաթին բազմած Հայոց Արեւելից կողմերի նշանաւոր ամրոցներից մէկը՝ Խօխանաբերդը, աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական Մեծ Իրանք գաւառի արեւմտեան մասում է: Այստեղից իր երկրամասը կառավարող Խաչէնի արքայական տոհմն, ի տարբերութիւն Փառիսոսի տոհմաճիւղի, այնուամենայնիւ շարունակել է գոյատեւել՝ թէկուզ եւ բաժանուած մանր իշխանութիւնների: Այդ իրողութիւնն է ԺԲ դ. երկրորդ կէսում շեշտում Մխիթար Գօշն իր՝ Խոսրով Գանձակեցու վկայաբանութեան սկզբում, իսկ «Ժամանակագրութեան» մէջ էլ պատմելով դրա մի հետեւանքի՝ իշխան Գրիգոր Վասակեանի սպանութեան մասին: Նրա յիշատակած՝ Խօխանաբերդի «Գրիգոր Մեծ իշխան»-ի (այսպէս է նա կոչուած իր դստեր 1215 թ. վիմագրում) յաջորդի մասին տեղեկութիւնը պահպանուել է Գանձասարում Նրջիս իշխանուհու՝ 1174 թ. կանգնեցրած խաչքարի վրայ («Թիւն ՈԻԳ: էր: Վախտանգ՝ տէր Խաչինո[յ], յերիտասարդ հասակի փոխեցաւ ի Ք<u>ռիստո</u>ս: Ես՝ Նրջիս, դուստր Հասանա[յ], թոռն Աբասա[յ] թագ[ա]վորին, մայր որդոցս, որ Ա<u>ստուծո</u>յ անդունդք կործանեցան, կան/գնեցի...»): Բնագրում հանգուցեալին տրուած՝ «տէր Խաչինո[յ]» եւ «յերիտասարդ հասակի փոխեցաւ» բնութագրումները յուշում են, որ 1174 թ. մահացած Վախտանգը եղել է Գրիգոր Մեծի որդին ու յաջորդը, իսկ Նրջիսը՝ Գրիգորի կինը:

Միասնական Խաչէնի բաժանումն աւելի փոքր իշխանութիւնների (Ներքին ու Վերին Խաչէն, Ծար եւն) կապուած է եղել լոկ 1182 թ. Հասան Մեծի՝ կրօնաւոր դառնալու, այլ ոչ թէ դրան նախորդած ինչ-որ իրողութեան հետ: Հասանն էր, որ կեանքի մայրամուտին, իր իսկ եւ իր կնոջ վկայութեամբ՝ աշխարհիկին նախընտրեց կրօնաւորեալի կենցաղավարութիւնը եւ իր 6 որդիներին բաժանեց իր «գաւառը» («հայրենիքը»), «բերդերը» եւ «հողանիւթը»: Պարզ է, որ դրանց բաժանումով Մեծ կամ Ներքին Խաչէնում (Խօխանաբերդ-Խաչինաբերդ նստոցով ու Գանձասարով) հաստատուել է Թանգիկ Վախտանգը, իսկ Վերին Խաչէնում (իշխանաց իշխանի Հաթերքաբերդ նստոցով ու Դադիվանքով)՝ վերջինիս կրտսեր եւ մօր կողմից խորթ, համանուն եղբայրը: Բայց հայրն ինչո՞ւ էր վերջինիս եւս կնքել նոյն «Վախտանգ» պապանունով. թւում է, թէ այս արտառոց փաստը պէտք է համադրուի Հաթերքի իշխանապետական նոր կենտրոնի ձեւաւորման բազմանշանակ իրողութեան հետ եւ մեկնաբանուի Հասանի երկրորդ ամուսնութեան՝ ոչ այնքան անձնական, որքան «քաղաքական» համատեքստում: Հասան Մեծը կարող է նոյնացուել այն «Հասան Գեռաքարեցի» (ինչպէս իրաւացիօրէն գտնում են՝ Գառնաքար գիւղից, Խօխանաբերդի տակ) խաչէնեան իշխանի հետ, որն, ըստ Ստեփաննոս Օրբէլեանի՝ ամուսնացել էր Բաղաց Գրիգոր Բ թագաւորի «միակ» դուստր Կատայի հետ. երբ իր աներն ու նրա Սմբատ եղբայրը նոյն տարում վախճանուեցին, Հասանը 4 տարի եղաւ Սիւնեաց վերջին թագաւորը, իսկ Բաղաբերդի անկման նախօրէին ընտանիքով մազապուրծ հեռացաւ «ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն»: Յիշենք, որ մի քանի վիմագրերում հէնց Գանձասարի կառուցող Հասան Ջալալն է կոչուած «թոռն Բաղաց թագաւորին»: Հասան Մեծ Կրօնաւորեալը եղել է որդին՝ Հերքանի ճակատամարտում զոհուած Խաչէն-Խօխանաբերդի իշխան Գրիգոր Մեծ Վասակեանի կրտսեր եղբայր Վախ-

տանգի (եւ Շուշիկի), որի բուն կալուածքը Գառնաքար-Գեռաքարում էր: Պատանի հասակում հրաւիրուելով Սիւնիք եւ ամուսնանալով Բաղաց արքայադուստր Կատայի հետ՝ նա շուտով թագադրուել է, ապա 4 տարի անց՝ Բաղաբերդի անկման օրերին, ստիպուած է եղել ընտանիքով հեռանալ հայրենի Խաչէն: Թերեւս, մանկահասակ զաւակներ թողած Գրիգոր հօրեղբօր զոհուելուց յետոյ (1150-1154 թթ. միջեւ) ստանձնել է պապական տոհմի «աւագութիւնը», իսկ ինչ-որ ժամանակ անց՝ նաեւ Խաչէնի իշխանապետութիւնը: Վախտանգ (Տանգիկ) եւ Խաթուն զաւակների մօր՝ Կատա-Թագուհու վաղաժամ մահուանից յետոյ երկրորդ անգամ ամուսնացել է Մածնաբերդի Կիւրիկէ Գ թագաւորի դուստր Մամախաթունի հետ եւ ունեցել եւս 6 որդիներ, որոնցից աւագին կրկին կոչել է հօր անունով՝ Վախտանգ: 1182 թ. սքեմ է հագել ու մտել Դադիվանք՝ իր Գրիգորիս եղբօր եւ Գրիգոր որդու մօտ, իսկ երկիրը բաժանել է միւս 6 որդիներին՝ ներառեալ առաջին կնոջից ունեցած Թանգիկ Վախտանգին, սակայն իշխանապետութեան իրաւունքը փոխանցել է Հաթերքի տէր կրտսեր Վախտանգին (վերջինս 1214 թ. վախճանուեց անժառանգ, եւ Խաչէնի իշխանապետութիւնը վերստին անցաւ Խօխանաբերդի տիրակալին՝ Վախտանգ Թանգիկի որդի Հասան Ջալալին):

Գլխի երկրորդ բաժինը կոչւում է. **«Ծարի իշխանաճիւղը ԺԳ դարում (Դօփեաններ)»**: Հասան Մեծի այս «խճճուած» խնդրի պարզաբանումից յետոյ էական ճշտելիք կայ նաեւ Դօփեան կոչուած Ծարի իշխանութեան ծագման հարցում: Հակառակ ԺԸ-ԺԹ դդ. պատկերացումների՝ Զաքարէ եւ Իւանէ նշանաւոր ամիրսպասալարների քոյր Դօփի ամուսինը եղել է ոչ թէ Հասան Մեծի որդի ոմն «Ղարա-Գրիգոր», այլ Գրիգորի որդի Հասան իշխանը, քանի որ նրանց որդին մի փրկագնուած եւ 1244 թ. խաղարավանքին նուիրաբերուած Աւետարանի վերջում ուղիղ ձեւով յիշատակագրել է այդ մասին: Աղբիւրներում յիշատակուած են Հասանի եւ Դօփի միայն երկու որդիներ՝ Գրիգոր Բ Ծարեցի իշխանը (Ստեփաննոս Օրբէլեանի մօտ կոչուած՝ «Մեծ») եւ Հաղբատի եպիսկոպոս Յովհաննէսը: Վերջինիս՝ Հաղբատի գաւթում, շուրջ չորս տասնեակ տապանաքարերի շարքում պահպանուած գերեզմանաքարի (5-տողանոց տապանագիրը՝ «Զաքարէի եւ Իւանէի քվերորդին՝ Յովհաննէ[ս] եպիսկոպոս տեղոյս») աջ կողքին գտնւում է նաեւ իր մօր շիրիմը՝ «Զաքարէի եւ Իւանէի քոյրն է՝ Դաւփն» երկտող տապանագրով: Գաւթի խիտ թաղումների շարքում այս տապանաքարերի դիրքը՝ կողք կողքի եւ ձախից աջ, թոյլ է տալիս ենթադրել, որ Դօփ իշխանուհին Ծարից Հաղբատ է մեկնել՝ ըստ ամենայնի, վաղամեռիկ եպիսկոպոս-զաւակի յուղարկաւորութեանը մասնակցելու առիթով, ընդ որում, տեղ հասնելուց ոչ շատ ժամանակ անց ինքն էլ է վախճանուել, եւ դա թոյլ է տուել՝ թաղելու նրան որդու շիրիմի անմիջապէս կողքին:

Իշխանուհու անունը հետագայում տրուել է տոհմի նշանաւոր ներկայացուցիչներին, անշուշտ՝ իբրեւ պատուանուն: Այդպէս է կոչուել, օր.՝ ԺԴ դ. սկզբի յայտնի նկարազարդ Աւետարանի պատուիրատու, Ասփայ Օրբելեանի ամուսին Գրիգոր Զինուորը: Բայց մի քանի բնագրեր «Դաւփի որդի» են կոչում ոչ թէ նրան, այլ իր հօրը՝ Հասան Բ «Արիականին» (վերջինիս կինը՝ Մամքանը, դուստրն էր Արագածոտնի յայտնի իշխան Քուրդ Վաչուտեանի): Դա արտացոլուել է նաեւ Խաչատուր Կեչառեցու՝ 1295 թ. գրուած «Ողբ վասն աւերման տանս Արեւելեան» չափածոյ երկում: Շատ աւելի ուշ՝ ԺԴ դ. աւարտին Դօփ էր կոչւում նաեւ Լանկ-Թամուրի արշաւանքին 1387 թ. զոհ գնացած «վերջին» Հասան Մեծը (օր.՝ 1411 թ. Աւետարանի յիշատակարանում եւ Գրիգոր Խլաթեցու մօտ):

Գլխի երրորդ եւ վերջին բաժինը կոչւում է. **«Ներքին Խաչէնի – Խօխանաբերդի իշխանաճիւղը ԺԳ դարում (Հասան-Ջալալեաններ)»**: Գրականութեան մէջ շրջանառուող Սակռեան իշխանատոհմի հիմքում ընկած էր ոչ թէ Հասան Կրօնաւորեալի պապի կամ հօրեղբօր անունը, այլ նրա առաջնեկի՝ Զաքարէի եւ Իւանէի հօրաքոյր Խորի-

շահի հետ ամուսնացած Վախտանգ Խօխանաբերդցու (Ներքին Խաչէնում) երկրորդ որդի եւ Գանձասարի կառուցող Հասան Ջալալ Դօլայի կրտսեր եղբայր՝ Զաքարէ-Նասրադօլայի մականունը (պատուանունը՞): Այն, հաւանաբար, գալիս էր նրա կամ իր պապի՝ Խորիշահի հայր Զաքարէ Ա-ի մի չվկայուած անկանոն անուանակոչման ձեւից (*Զաքառ – Սակառ): Հաւանական է, որ տուեալ մականունը հանդէս է եկել դեռեւս Զաքարէ-Սակռի մայր Խորիշահ Զաքարեան-Երկայնաբազուկի պապի՝ Զաքարէ Ա-ի օրերում, եւ ապա «ուղեկցել» է հէնց Խորիշահին. այս ձեւով է հասկանալի Վարդան պատմիչի կողմից՝ Վախտանգ Տանգիկին «Սակռեան» կոչելու պատճառը: Դա արդէն կարող է հեշտութեամբ կապուել այն իրողութեան հետ, որ վերջինիս կինը ***Սակռեան-Զաքարեան*** էր (հմմ. նոյնպէս կնոջ առիթով՝ Դօփեան տոհմանուան ծագման զուգորդութիւնը):

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Խօխանաբերդը հիմնայատակ աւերուել է մոնղոլների կողմից դեռեւս Հասան Ջալալ իշխանի կենդանութեան օրօք, եւ գրականութեան մէջ աւանդաբար ընդունուած է թուագրել դա մօտաւորապէս 1246-1247 թթ. (Յ. Օրբէլի, Բ. Ուլուբաբեան եւ ուրիշներ): Գանձակեցու նկարագրած աւերիչ «հարկային» արշաւանքից յետոյ (1248 կամ 1249 թ.) որեւէ աղբիւրում այլեւս չի տրւում նշանաւոր ամրոցի Խօխանաբերդ կամ Խաչէնաբերդ անունը: Սակայն, այնուամենայնիւ, աւելի հաւանական է, որ մոնղոլ հարկահանների աւերածութիւնը վերաբերուել է միայն միջնաբերդին, իսկ նրա լանջին գտնուող իշխանական ապարանքի հատուածը շարունակել է գոյատեւել եւ ծառայել իբրեւ Ներքին Խաչէնի Հասան-Ջալալեան տոհմի նստոց:

Աղբիւրագիտական համադիր քննութեամբ, թւում է, թէ յաջողւում է վերհանել 1261 թ. մոնղոլների դաւադիր քաղաքականութեան հերթական շրջապտոյտին զոհ գնացած Հասան-Ջալալի միակ որդի Իւանէ Աթաբակի հետ կապուած որոշ նոր իրողութիւններ: Նա ունեցել է նաեւ մի երրորդ՝ «մոնղոլահնչիւն» անուն՝ Խերխան, որն արձանագրուած է իր աներձագերի՝ Խաչէնի Մամիկոնեանների տիրոյթներում գտնուող Կոշիկ անապատ վանքի վիմագրերում: Նրա եկեղեցիներից մէկի բեմի ճակատի 12-տողանոց վիմագիրը ամբողջապէս հասկանալի է դառնում, երբ բաւականին պարզ բովանդակութեան վերլուծութեան շնորհիւ ճշտում ենք առաջին շարքի կէս քարակտորի տեղը՝ ոչ թէ պակասող քարերի սկզբնամասում (Ս. Բարխուդարեան), այլ վերջում: Նշենք, որ մեր կարծիքով՝ Դսեղի Մամիկոնեան-Համազասպեանների տոհմից է եղել նաեւ Հասան Ջալալ Դօլայի կինը՝ Մամքանը: Վերջերս մեր կողմից վերստին ընթերցուեց Գանձասարից մի քանի կմ արեւելք գտնուող Վաճառի Ս. Ստեփաննոս եկեղեցու միակ՝ հարաւային մուտքի արեւելեան կողի քարերից մէկի վրայ 13 կարճ տողերով գրուած անթուակիր վիմագիրը, որտեղ ասուած է. «Ես՝ Ասլան ո[ւ] Մամաք տվաք :Դ: համադկի տեղ ի Ս<u>ՈՒ</u>բ Ըստեփանոս...» (թերեւս՝ անսովոր չի կարող համարուել, որ իշխանազուն հայրն ուղեկցում էր հարսնացու տարուող դստերը եւ նրա հետ միասին նուիրատուութիւններ թողնում փեսայի երկրի վանքերում): Բնագրում յիշատակուած Մամաք-Մամքանը եղել է դուստրը Դսեղի Մամիկոնեաններից Ասլանբէկի (Լոռու վիմագրերում եւս նաեւ՝ Ասլան), որը Մարծպան Բ-ի առաջնեկն էր, սակայն, ըստ ամենայնի՝ որդի չունենալու պատճառով պակաս յայտնի եղաւ, քան իր կրտսեր եղբայր Գրիգորը: Ասլանն ուղիղ ձեւով Իւանէ Աթաբակի մայր Մամքանի (ըստ երեւոյթին՝ արդէն վախճանուած) հայր է կոչուած Առաջաձորի ժայռի վիմագրում, որն ամենից ուշադիր ընթերցել է Խ. վրդ. Դադեանը (եւ որը, ցաւօք, չենք հասցրել ստուգել տեղում): Ս. Բարխուդարեանը եւս վերծանել է այդ բաւականին քայքայուած արձանագրութիւնը, սակայն արել է դա հապճեպ եւ այդ պահին ձեռքին ունենալով միայն Մ. Բարխուդարեանցի անյաջող ընթերցումը (թէպէտ «Դիւանում» յղում է տալիս նաեւ Խ. Դադեանի յօդուածին): Այդ պատճառով

նրա վերծանած «ավան պարոն հայր Միրանայ»-ի փոխարէն առայժմ պիտի գերադասելի համարուի «Ասլան պարոն՝ հայր Մամքանայ» բնագիրը:

Եզրակացութիւններում ամփոփուած են ատենախօսութեան մէջ կատարուած աշխատանքի գլխաւոր արդիւնքները, ըստ որոնց կարելի է յանգել հետեւեալ հիմնական եզրայանգումների.

ա) Կուրի ձախափնեակում բնակուող լեզգիալեզու բուն աղուանական ցեղերը (ըստ Ստրաբոնի՝ 26) միայն Ք. ա. Ա դ. սկզբներին են միաւորուել միասնական թագաւորութեան մէջ: Նրա արքայական տոհմն, ամենայն հաւանականութեամբ, էթնիկապէս հէնց բուն աղուանական էր: Իսկ աջափնեակի (հետագայ Արցախ – Ուտիքի) բազմացեղ, բայց առաւելապէս՝ հնդեւրոպական (նախահայալեզու), բնակչութիւնը մասնակցել էր հայ էթնոսի կազմաւորման հէնց հիմնական փուլին (Բիահինական-Ուրարտական պետութեան մէջ ընթացած՝ էթնոմիքսացիայի տարբերակով էթնոհամախմբմանը), որը թուագրւում է Ք. ա. Է դարի առաջին կէսով:

բ) Անտիկ շրջանի աւարտին (Ք. յ. Գ դարի առաջին կէսում) Աղուանից թագաւորութիւնից անջատուել էր նրա արեւելեան, ծովափնեայ կէսը, որտեղ ձեւաւորուել էին Մասքթաց եւ Բաղասականի թագաւորութիւնները: Քանի որ դրանից յետոյ աղբիւրները դադարում են այդ հատուածի բնակչութեանը կոչել «աղուաններ», կարող ենք եզրակացնել, որ միասնական թագաւորութեան մէջ միաւորուած բուն աղուանական ցեղերի էթնոհամախմբման գործընթացը դեռեւս չէր աւարտուել միասնական էթնոսի կազմաւորմամբ, իսկ «աղուաններ» ցեղանունը շարունակում էր մնալ հաւաքական՝ բնութագրելով «Աղուանք» կոչուող տուեալ վարչատարածքի բնակիչներին միաւորող մետաէթնիկ ընդհանրութիւնը որպէս արտանուն (էքզոէթնոնիմ):

գ) Գ դ. վերջերին (թերեւս՝ 298 թ.) Աղուանից թագաւորութեան մէջ տեղի ունեցաւ արքայատոհմի փոփոխութիւն, եւ հին՝ բուն աղուանական ցեղերից մէկից սերող արքայատոհմի փոխարէն իշխանութեան անցան Արշակունիները (Վաչագան Ա Քաջ), որոնք, գուցէ, ազգակից էին հարեւան Մասքթաց Արշակունիներին:

դ) 428 թ. Սասանեան արքայ Բահրամ (Վռամ) Գուրը վերացրեց Արշակունեաց թագաւորութիւնը Մեծ Հայքում: Փոխարէնը ստեղծուած մարզպանութիւնից այդ պահին կտրելով նրա հիւսիս-արեւելեան սահմանային Ուտիք, իսկ քիչ անց նաեւ Արցախ նահանգը (450-451-ին)՝ Սասանեանները դրանք մտցրեցին հարեւան Աղուանք-Առան նորաստեղծ մարզպանութեան մէջ: Մինչեւ դարավերջ նոր երկրանուններն ընդունուեցին աջափնեակի հայ բնակչութեան կողմից, որը նաեւ փորձ արեց դրանց ստուգաբանութիւնը կատարել հայկական լեզուա-մշակութային յենքի վրայ (Մովսէս Խորենացու մօտ): Դրանից կարելի է նաեւ եզրակացնել, որ ձախափնեակի բուն աղուանական մետաէթնոսի համախմբումն այդ պահին էլ դեռ չէր աւարտուել միասնական էթնոսի կազմաւորումով եւ «Աղուանք» ցեղանունը դեռ շարունակում էր մնալ հաւաքական եւ լոկ արտանուն: Մաշտոցի եւ Բենիամին աղուան վարդապետի ստեղծած աղուաներէն գիրը պիտի նպաստէր այդ մետաէթնիկ ընդհանրութեան համախմբմանը, սակայն, ըստ երեւոյթին, նոր գրի զարգացումը պակաս յաջող ընթացաւ, քան հարեւան Հայաստանում եւ Վիրքում:

ե) Զ դ. սկզբներին Աղուանից մարզպանութեան վարչական եւ հոգեւոր կենտրոնների տեղափոխումը էթնիկապէս հայկական աջափնեակ (դարասկզբին Կաւատ արքայի հրամանով կառուցուած Պարտաւ) պայմանաւորեց այդ «երկրի» հետագայ զարգացումը գերազանցապէս հայկական էթնո-քաղաքական եւ լեզուա-մշակութային աւանդների յենքի վրայ: Է դ. սկզբներին հիմնուած (թերեւս՝ 616 թ. «Պարսից ժողովում») «իշխան Աղուանից»-ի հաստատութիւնն անցաւ աջափնեայ Գարդմանացի հայկական իշխանա-

տոհմի ձեռքը (հետագայում կոչուած՝ «Միհրանեաններ»), ապա Թ դարում՝ կենտրոնական Արցախի – Խաչէնի «Առանշահիկներին», որ սերում էին վաղմիջնադարեան Ծաւդէացի հայկական իշխանատոհմից (աւանդական Առանի միւս յետնորդից): Վերջիններիս նոր անուանումը, թերեւս, ստեղծուել էր գրական հողի վրայ՝ Բուն Աղուանքի վերջին Արշակունեաց թագաւոր Վաչագան Բարեպաշտի պետութեան մոռացուած իրանական պաշտօնական անունը («Առանշահր») խորենացիական Հայկեան Առան նախահօր անուան հետ համադրելով:

զ) Աւատական մասնատուածութեան շրջանում թագաւորութիւնների կարգավիճակ էին ձեռք բերել ոչ միայն Շաքիի (Բուն Աղուանքում) եւ Փառիսոսի (նախկին՝ Գարդմանացիք երկրամասում), այլեւ Գորոզուի (հարաւային Արցախում, հետագայում՝ Դիզակ) եւ Խաչէնի իշխանութիւնները: Դրանցից առաջինը տեղի Բագրատունեաց հայկական արքայատոհմի գլխաւորութեամբ հիմնադրուել էր, ըստ Մաշտոց Եղիվարդեցու «Պատմութեան» վերականգնուած բնագրի՝ 894 թ., իսկ վերջին երեքը՝ Ժ դարի երկրորդ կէսում: Ընդ որում, եթէ Շաքի-Հերէթի կամ «Երկրորդ Աղուանից» թագաւորութիւնը վերացաւ (միացուեց Կախէթի թագաւորութեանը) Ժ դարի վերջերին, ապա միւսները գոյատեւեցին մինչեւ յաջորդ դարի երկրորդ կէսը եւ կործանուեցին սելջուկների հարուածներից: Ընդ սմին, կարելի է վերջնականապէս յաղթահարուած համարել Շաքիի Բագրատունեաց արքայատոհմի եւ Կուրի աջափնեակի Առանշահիկների ազգակցական կապի մասին նախկին վրիպեալ պատկերացումները, քանի որ 838 եւ 853 թթ. յիշատակուած «Աղուանից իշխան» Յովհաննէսը եղել է ոչ թէ Սահլ Սմբատեանի որդին (Սահլի միակ որդին Ատրներսեհն էր, որին արաբները կոչում էին Մուաւիա), այլ, ամենայն հաւանականութեամբ՝ Շաքիի թագաւորութեան հիմնադիր Համամ-Յովհաննէս Բագրատունու նոյնանուն պապը:

է) Ներքին ու Վերին Խաչէնի իշխանութիւնների բաժանումն անհրաժեշտ է կապել երկու անգամ ամուսնացած Հասան Մեծ Կրօնաւորեալի (որը նոյն՝ Բաղք-Սիւնիքի վերջին թագաւոր Հասան Գեռաքարեցին կամ Խաչէնցին էր) նոյնանուն որդիների՝ Վախտանգ Խօխանաբերդցու եւ Վախտանգ Հաթերքցու հետ: Նրանց մայրերը դուստրերն էին, համապատասխանաբար՝ Բաղաց նախավերջին թագաւորի (Կատան) եւ Տաւուշի Կիւրիկեան վերջին արքաներից մէկի (Մամախաթունը):

ը) Դօփեանների արեւմտախաչէնեան իշխանատոհմի հիմքում նոյն Հասան Կրօնաւորեալի միւս որդին էր՝ Գրիգոր Ա Ծարեցին, ում որդի Հասան Ա-ի հետ էր ամուսնացել Զաքարէ եւ Իւանէ նշանաւոր ամիրսպասալարների քոյր Դօփ իշխանուհին (հայրը՝ Սարգիս Զաքարեան)՝ Գրիգոր Բ Ծարեցու մայրը:

թ) Գրականութեան մէջ շրջանառուող Սակռեան իշխանատոհմի հիմքում ընկած էր ոչ թէ Հասան Կրօնաւորեալի պապի կամ հօրեղբօր անունը, այլ նրա առաջնեկի՝ Զաքարէի եւ Իւանէի հօրաքոյր Խորիշահի հետ ամուսնացած Վախտանգ Խօխանաբերդցու (Ներքին Խաչէնում) երկրորդ որդի եւ Գանձասարի կառուցող Հասան Ջալալ Դօլայի կրտսեր եղբայր՝ Զաքարէ-Նասրադօլայի մականունը: Այն, հաւանաբար, գալիս էր նրա կամ իր պապի՝ Խորիշահի հայր Զաքարէ Ա-ի մի չվկայուած անկանոն անուանակոչման ձեւից (*Զաքառ – Սակառ):

ժ) Հասան Ջալալ Դօլայի եւ Մամքանի (ով, ըստ նորայայտ փաստերի, դուստրն էր Դսեղի Մամիկոնեաններից Ասլանբէկ Մարծպանեանի) որդի Իւանէ Աթաբակն ունեցել է նաեւ մի երրորդ՝ «մոնղոլահնչիւն» անուն՝ Խերխան, որն արձանագրուած է նրա աներձագերի՝ Խաչէնի Մամիկոնեանների տիրոյթներում գտնուող Կոշիկ անապատ վանքի վիմագրերում:

Ատենախօսութեան հիմնական դրոյթներն արտացոլուած են հեղինակի հետեւեալ հրապարակումներում

1. Աբրահամ Աղբաթանեցի, Թուղթք, Գիտա-քննական բնագիրը՝ Պ. Մուրադեանի, Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 3-20:
2. Աբրահամ Աղբաթանեցի, Պատասխանի ի Հայոց թղթոյն Մխիթարա Ամարասա եպիսկոպոսի, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Անթիլիաս, 2005, էջ 21-37:
3. Անանուն (Է դար), Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր Ա. Յակոբեանի, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԷ տարի, Վիեննա-Եր., 2013, սն. 35-194:
4. Անանուն Կաղանկատուացի, Պատմութիւն յաղագս յարուցման ազգաց բարբարոսաց եւ պէսպէս անցից տիեզերահեծ տագնապին, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 369-414:
5. Անանուն, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Ձ դար, Անթիլիաս, 2004, էջ 51-112:
6. Անանուն, 684 թուականի պատմութիւն, Առաջաբանը եւ գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 795-895:
7. Գիւտ Արահեզացի, Թուղթ առ սուրբն Վաչէ, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 1075-1089:
8. Հակոբյան Ա. Հ., Եղիա Արճիշեցի կաթողիկոսի նորահայտ թուղթը, – ՊԲՀ, 1981, հ^{մր} 4, էջ 140-152:
9. Հակոբյան Ա. Հ., Գարգարացիները ըստ անտիկ եւ հայկական սկզբնաղբյուրների, – ՊԲՀ, 1982, հ^{մր} 4, էջ 116-130:
10. Հակոբյան Ա. Հ., Կասպերի եւ Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրութեան մասին, – ԼՀԳ, 1983, հ^{մր} 1, էջ 87-99:
11. Հակոբյան Ա., Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմության» ձեռագրերը, – «Բանբեր Մատենադարանի», 15, Եր., 1986, էջ 110-143:
12. Հակոբյան Ա., Աղուանք, – Հայաստանի հարակից երկրների պատմություն, հտ. I, Եր., 2013, էջ 514-529:
13. Հակոբյան Ա. Հ., Սիմոնյան Հ. Ե., Դադիվանքի նորահայտ արձանագրությունը եւ Տպէլի տեղադրության հարցը, – ՊԲՀ, 1998, հ^{մր} 1-2, էջ 227-232:
14. Յակոբեան Ա., Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԲ տարի, Վիեննա, 1998, սն. 269-324:
15. Յակոբեան Ա., Գտչավանքի շինարարական արձանագրութիւնը եւ հարաւային Արցախի եպիսկոպոսութեան սահմանները, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԳ տարի, Վիեննա, 1999, սն. 247-300:
16. Յակոբեան Ա., Ծիծեռնավանքի եկեղեցու անուանումը, նահատակի գերեզմանը եւ շինարարական փուլերը, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԴ տարի, Վիեննա, 2000, սն. 135-196:
17. Յակոբեան Ա., «Վաչագանի վէպ»-ը եւ Արշակունեաց թագաւորութեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, – «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Եր., 2003, սն. 45-142:

18. Յակոբեան Ա., Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է դարի վերջին – Ը դարի սկզբին, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԸ տարի, Վիեննա-Եր., 2004, սն. 267-292:
19. Յակոբեան Ա., Հայ-բիւզանդական յարաբերութիւնները Է դարի կէսերին եւ Զուարթնոցի կառուցման ժամանակը, – ՄՄԱԵԺ, հտ. XXIV, Եր., 2005, էջ 366-426:
20. Յակոբեան Ա., Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Եր., 2005, սն. 213-270:
21. Յակոբեան Ա., Յովհաննէս Օձնեցու նորայայտ տօնացոյցային երկը՝ «Նախահաւաքումն պատմութեան այսմ բանից՝ Յովհաննու Վերծանաւղի», – «Հանդէս ամսօրեայ», ՃԻ տարի, Վիեննա-Եր., 2006, սն. 91-130:
22. Յակոբեան Ա., Մաշտոցի երկրորդ հիւսիսային ուղեւորութեան ժամանակը եւ խնդիրները, – Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին (Երեւան, 12-17 Սեպտեմբերի, 2005 թ.), Զեկուցումների ժողովածո, Եր., 2006, էջ 122-131:
23. Յակոբեան Ա., Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԱ տարի, Վիեննա-Եր., 2007, սն. 213-256:
24. Յակոբեան Ա., Կենտրոնական Արցախի Հարջլանք եւ Պիանք գաւառների տեղադրութիւնն ըստ «Աշխարհացոյց»-ի, – Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան, Եր., 2007, էջ 44-52:
25. Յակոբեան Ա., Սիսական-ի Կոտակ եւ Արցախի հարաւային միւս գաւառների տեղորոշումն ըստ «Աշխարհացոյց»-ի, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԲ տարի, Վիեննա-Եր., 2008, սն. 91-148:
26. Յակոբեան Ա., Աղուանքում Արշակունեաց թագաւորութեան անկման ժամանակի մասին, – ՄՄԱԵԺ, հտ. XXVI, Եր., 2007, էջ 72-88:
27. Յակոբեան Ա., Հակարիի վերնահովտի նորայայտ վիմագրերը. Բ, – ՄՄԱԵԺ, հտ. XXVII, Եր., 2009, էջ 224-245:
28. Յակոբեան Ա., Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Եր., 2009, 476 էջ:
29. Յակոբեան Ա., Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ-ԺԳ դարերում, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԴ տարի, Վիեննա-Եր., 2010, սն. 71-170:
30. Յակոբեան Ա. Յ., Բունիաթովականների «յայտնագործութիւնները» հայ միջնադարեան պատմութեան մէջ (Շաքիի տեղորոշման օրինակով) որպէս Ադրբեջանի հակահայկական քաղաքականութեան դրսեւորում, – Ադրբեջանի պետական ահաբեկչությունը եւ էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ (2010 թ. Ստեփանակերտում եւ Շուշիում կայացած միջազգային գիտա-գործնական կոնֆերանսի զեկուցումներ. «Կաճառ» ԳԿ տարեգիրք, 4), Շուշի, 2010, էջ 172-187:
31. Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց». Հետազօտութիւն եւ բնագիր, – ՄՄԱԵԺ, հտ. XXVIII, Եր., 2011, էջ 27-66:
32. Յակոբեան Ա., Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԵ տարի, Վիեննա-Եր., 2011, սն. 67-119:

33. Յակոբեան Ա., Եղիա Արճիշեցի կաթողիկոսի թղթերը, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԶ տարի, Վիեննա-Եր., 2012, սն. 1-24:
34. Յակոբեան Ա., «Գահնամակ ազատաց եւ տանուտէրանց Հայոց» եւ «Զաւրանամակ». Հետազօտութիւն եւ բնագրեր, – «Բազմավէպ», 2011, հ^{մր} 3-4, էջ 485-550:
35. Յակոբեան Ա., Հայ ժողովրդի էթնոհամախմբման գործընթացի պատմա-մշակութային առանձնայատկութիւնները, – «Վէմ» համահայկական հանդէս, Ե(ԺԱ) տարի, Եր., 2013, թիւ 1 (41), էջ 34-69:
36. Յակոբեան Ա., Հայկական լեռնաշխարհում բիացիների եւ խորենացիական Հայկեանների տարածման ուղիների համադրութեան փորձ, – «Հայկազունիներ», Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2013, էջ 181-205:
37. Յակոբեան Ա., Մատթէոս Ուռհայեցու վկայութիւնը 961 թուականին Անիին մայրաքաղաք հռչակելու մասին (նոր աղբիւրագիտական քննութիւն), – ՄՄԱԵԺ, հտ. XXIX, Եր., 2014, էջ 309-331:
38. Յակոբեան Ա., Մաշտոց Եղիվարդեցի կաթողիկոս, Պատմութիւն. Ուսումնասիրութիւն եւ Թ դարի բնագրի վերականգնման փորձ, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԸ տարի, Վիեննա-Եր., 2014, սն. 1-54:
39. Յովհան Օձնեցի, Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԳ տարի, Վիեննա-Եր., 2009, էջ 85-136:
40. Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 971-1126:
41. Յովհաննէս Գաբեղենացի, Թուղթ առ Վրթանէս Սիւնեաց եպիսկոպոսն, Թուղթ առ Տէր Աբաս՝ Աղուանից կաթողիկոս, Գիտա-քննական բնագրերը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 445-452:
42. Յովսէփ Բրտիայրեցի (Անապատական), Յիշատակագրութիւն, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 579-585:
43. Ներսէս Գ կաթողիկոս Տայեցի, Կանոն Դըլնայ սուրբ ժողովոյն, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 569-578:
44. Սահակ Բ կաթողիկոս Ուղկացի, Կանոնք ժողովոյն Կարնոյ, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Զ դար, Անթիլիաս, 2004, էջ 373-383:
45. Սարգսեան Գ., Յակոբեան Ա., Նորայայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում, - «Վարձք», 2012, թիւ 5, Եր., էջ 43-59:
46. Սմբատ Բագրատունի, Թուղթք, Գիտա-քննական բնագրերը կազմեցին՝ Պ. Մուրադեան, Ա. Յակոբեան, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 335-342:
47. Վաչագան Աղուանից արքայ, Սահմանադրութիւն կանոնական՝ եդեալ ի ժողովոյն, որ յԱղուէնն եղեւ, Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Գ, Անթիլիաս, 2004, էջ 127-140:

48. Վիրոյ Աղուանից կաթողիկոս, Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն եւ գերութեանն..., Գիտա-քննական բնագիրը՝ Ա. Յակոբեանի, - «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 363-367:

49. Փիլոն Տիրակացի, Ժամանակագրութիւն, Գիտա-քննական բնագիրը Ա. Յակոբեանի, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ-Ե, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 897-969:

50. Акопян А. А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ер., 1987, 304 с.

51. Акопян А истории Кавказской Албании (по поводу книги Ф. Мамедовой “Политическая история и историческая география Кавказской Албании”), – ИФЖ, 1987, № 3, с. 169-189.

52. Акопян А., “История Армении” Фавста Бузанда как источник “Повести о Вачагане” (Снова о первом и втором дпрутюнах Фавста Бузанда), – “Кавказ и Византия”, вып. 5, Ер., 1987, с. 72-81.

53. Акопян А., О хронологии последних событий в “Истории 684 года”, – “Кавказ и Византия”, вып. 6, Ер., 1988, с. 24-36.

54. Акопян А. А., К постановке вопроса об этноконсолидации Кавказской Албании в период ослабления Арабского Халифата – “Caucasica”, т. 2, Москва, 2013, с. 34-51.

55. Akopyan A., Galstyan A., Concerning the study of ethnic processes in the Caucasian Albania (Antiquity and Early Middle Ages), – 12th International Congress of Anthropological and Ethnological Sciences (Zagreb, 1988): USSR Academy of Sciences, N. N. Mikloukho-Maklay Institute of Ethnography, Moscow-Zagreb, 1988, p. 1-10 (վերահրատ.՝ Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., Եր., 2002, էջ 147-157):

56. Hakobian A., La litérature canonique arménienne des Ve-XIIe siècles, – Arménie. La magie de l’écrit. Sous la direction de Cl. Mutafian. Marselle, 2007, p. 158-159.

57. Hakobian A., Les rédactions et les groupes des manuscrits du “Livre des canons arméniens” et le nouvel texte scientifique de Hovhannes Odznetsi, – 11me Conférence Générale de l’Association Internationale des Études Arméniennes (Paris, 10-12 Septembre 2008): Résumés des communications, Paris, 2008, p. 14-19.

58. Hakobian A., Gorozou, capitale du royaume méridional de Dizak, – Les douze capitales d'Arménie, Paris-Marseille, 2010, p. 272-276.

59. Hakobian A., Khatchen, capitale du royaume central, – Les douze capitales d'Arménie, Paris-Marseille, 2010, p. 277-282.

АКОПЯН АЛЕКСАН АКОПОВИЧ

КНЯЖЕСКИЕ И ЦАРСКИЕ РОДЫ СОБСТВЕННО АЛБАНИИ И ВОСТОЧНЫХ КРАЕВ АРМЕНИИ В IX-XIII ВЕКАХ (ИСТОРИКО-ИСТОЧНИКОВЕДЧЕСКИЙ АНАЛИЗ)

Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 16 сентября 2014 г., в 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Обобщая проделанную в диссертации работу по рассмотрению проблем княжеских и царских родов Собственно Албании и Восточных краев Армении в IX-XIII веках, можно прийти к следующим основным заключениям:

а) Собственно албанские лезгиноязычные племена, проживавшие на территории левобережья реки Кура (согласно Страбону – 26), создали единое царство лишь в самом начале I в. до н. э. Его правящий род, по всей видимости, был этнически именно собственно албанским. Что касается разноплеменного, но главным образом индоевропейского (протоармяноязычного) населения правобережья Куры, то оно приняло участие в основной стадии образования – этноконсолидации армянского этноса (произошедшей путем этномиксации в пределах Биайнийского-Урартского государства), которая датируется первой половиной VII в. до н. э.

б) В конце античного периода (в нач. III в. н. э.) от Албанского царства отделилась его восточная, приморская половина, и там образовались царства Маскутов и Баласакан. После этого источники перестают называть насельников этих областей “албанцами”, из чего можно заключить, что процесс консолидации объединившихся в едином царстве собственно албанских племен еще не завершился образованием единого этноса под самоназванием (эндоэтнонимом) “албанцы”, и это название продолжало оставаться собирательным, характеризуя лишь метаэтническую общность, объединявшую всё население данной административно-территориальной единицы, как иноназвание (экзоэтноним).

в) В конце III в. (вероятно, в 298 г.) в Албанском царстве произошла смена царской династии, и вместо древней династии, восходящей к одному из собственно албанских племен, на престол воссели представители парфянского царского рода Аршакидов (Вачаган I Храбрый), которые, возможно, были родственны соседним Маскутским Аршакидам.

г) В 428 г. шаханшах Ирана Бахрам Гур упразднил царство Аршакидов в Великой Армении, и из образованного тогда на его месте марзпанства Сасаниды отделили северо-восточную провинцию Утик, а вскоре и Арцах (в 450-451-м), включив их в состав соседнего новообразованного марзпанства Албания-Аран. К концу столетия новые названия этой страны были приняты армянским населением правобережья Куры, в среде которого даже появились попытки представить семантику этих названий на армянской культурно-языковой почве (легенда о Сисаке и Аране Хайкидах у Мовсэса Хоренаци). Из этого можно за-

ключить, что также и к этому моменту процесс консолидации собственно албанской метаэтнической общности еще не завершился образованием единого этноса под этнонимом “албанцы”, а это его иноназвание продолжало оставаться лишь собирательным. Завершению албанской этноконсолидации могло способствовать создание Маштоцем и иереем-албанцем Бениамином письмен для албанского языка, однако развитие новой письменности прошло, по-видимому, менее удачно, чем в соседней Армении и Иверии (Грузии).

д) В начале VI в. административный и церковный центры Албанского марзпанства были перенесены из левобережья Куры на этнически армянское правобережье (во вновь построенную по приказу шаханшаха Кавада столицу Партав), и это обусловило дальнейшее развитие этой “страны” преимущественно на базе армянских этно-политических и культурно-языковых традиций. Утверждённый в нач. VII в. (по всей видимости, на т. н. “Персидском соборе” 616 г.) институт “князя Албании” оказался в руках правобережного армянского княжеского рода Гардманцев (впоследствии названных “Михранидами”), а в начале IX в. он перешёл к “Араншахикам” центрального Арцаха (Хачен), которые восходили к раннесредневековому армянскому княжескому роду Цавдейцев (другой ветви потомков легендарного Арана Хайкида). Новое родовое название (“Араншахик”) было создано в результате ассоциированного сопоставления забытого официального иранского названия государства последнего Аршакидского царя Албании Вачагана Благочестивого (“Араншahр”) с именем эпонима Арана Хайкида по Мовсэсу Хоренаци.

е) В период феодальной раздробленности статус царств получили княжества не только Шаки (в Собственно Албании) и Парисоса (в раннесредневековом крае Гардманацик‘, на правом берегу Куры), но и Горозу (в южном Арцахе, впоследствии – Дизак) и Хачена. Первое царство во главе с местным армянским царским родом Багратидов было основано (согласно восстановленному оригиналу “Истории” Маштоца Еливардеци) в 894 году, а последние три – во второй пол. X века. При этом, если царство Шаки-Эрети или “Второе Албанское” царство перестало существовать к концу X в. (в следствие присоединения к царству Кахети), то три царства на правобережье Куры просуществовали до второй пол. следующего века и пали под натиском сульджуков. Можно считать, что уже преодолено бытовавшее в литературе ошибочное допущение о родственной связи между царским родом Багратидов в Шаки и Араншахиками правобережья Куры, поскольку “князь Албании” Йовhаннэс, упомянутый в 838 и 853 гг., был не сыном Сахла Смбатяна (его единственного сына Атрнерсеха арабы звали Муавией), а, вероятнее всего, одноимённым дедом Хамама-Йовhаннэса Багратида, основателя царства Шаки.

ё) Разделение княжеств Нижнего и Верхнего Хачена необходимо связать с двумя одноимёнными старшими сыновьями Хасана Отшельника Великого (он же – Хасан Геракарский или Хаченский, последний царь Балк‘а-Сюник‘а), который женился дважды и обоих своих первенцев назвал именем своего отца (Вахтанг Хоханабердский и Вахтанг hАтерк‘ский). Их матери были дочерьми, соответственно, предпоследнего царя Балк'а (Ката) и одного из последних царей Кюрикидов Тавуша (Мамахатун).

ж) Основателем западнохаченского княжеского рода Доп‘янов был другой сын того же Хасана Отшельника – Григор I Ц‘арский, за сына которого Хасана I вышла замуж княгиня Доп‘, сестра знаменитых амирспасаларов Зак‘арэ и Иванэ (сыновей амирспасалара Саргиса Зак‘аряна) и мать Григора II Ц‘арского.

з) Название княжеского рода Сакрянц, фигурирующего в литературе (но не в источниках), обязано своим возникновением имени не деда или дяди Хасана Отшельника, а его внука Зак‘арэ-Насрадолы, который был младшим братом знаменитого строителя Гандза-

сарского храма Хасан-Джалала. Отец последних – Вахтанг Хоханабердский (старший сын Хасана Отшельника), был женат на Хоришах, сестре амирспасалара Саргиса Зак'аряна (сына Зак'арэ I), и третье имя (прозвище) младшего Зак'арэ, видимо, было связано с незасвидетельствованной в имеющихся источниках нестандартной формой его имени или имени его деда по матери (*Закар – Сакар).

и) Иванэ-Атабек, сын Хасан-Джалала Долы и Мамк'ан (которая, видимо, была дочерью Асланбека, сына Марц'пана из Дсехских Мамиконидов), имел ещё и третье, “монголозвучное” имя – Херхан, засвидетельствованное в лапидарных надписях монастыря Кошик-анапат, который находился во владениях его шуринов – Хаченских Мамиконидов.

HAKOBYAN ALEKSAN

THE PRINCELY AND ROYAL FAMILIES OF PROPER ALBANIA AND EASTERN REGIONS OF ARMENIA IN 9TH-13TH CENTURIES (HISTORICAL AND SOURCE STUDY EXAMINATION)

The defense of the dissertation will take place at 15:00, on the 16th of September, 2014 at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA.
Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Sciences in the Field of "World History" 07.00.02.

SUMMARY

The work described in this thesis can be summarized in following conclusions:

1) Proper Albanian lezgian-speaking tribes (according to Strabo – 26 of them) living on the territory of the left bank of the Kura River created a united kingdom at the very beginning of the 1st century BC. Apparently, its governing family line was actually ethnically proper Albanian. As for the mingled, but mostly Indo-European (protoarmenian-speaking) population of the right bank of the Kura river, it participated in the primary stage of formation, i.e. ethnoconsolidation of the Armenian ethnos (which occurred through the ethnomixation of the Biaina-Urartian kingdom), which is dated by the first half of the 7th century BC.

2) The eastern, coastal half of the Albanian kingdom separated from it at the end of the ancient period (at the beginning of the 3rd century A.D.), where the kingdoms of Masquths and Balasakan were formed. Thereafter, the sources stop calling the inhabitants of these areas as "Albanians", which leads us to the conclusion that the process of consolidation of proper Albanian tribes united to a single kingdom (it should have ended with the formation of a single ethnic group within an endoethnonym "Albanians") was not yet completed and "Albanians" continued to be a collective name, describing only metaethnical community, which united the entire population of this administrative-territorial unit as an exonym (exoethnonim).

3) A change of the royal dynasty took place in the Albanian kingdom at the end of the 3rd century (probably in 298). As a result, the ancient dynasty which was originated from one of the proper Albanian tribes was replaced by representatives of Parthian royal lineage of Arsacides (Vachagan 1st the Brave) who, probably, were akin to the neighboring Masquth Arsacides.

4) In 428 A.D. shahanshah of Iran Bahram Gur abolished Arsacides kingdom in the Great Armenia, and formed a new marzpanate instead. The Sassanids then separated the northeastern province of Utiq and later Artsakh (in 450-451) to include them in the newly formed neighboring marzpanate of Albania–Aran. By the end of the century new names of that kingdom were accepted by the Armenian population on the right bank of the Kura, who even attempted to represent the semantics of the names on the Armenian linguistic and cultural grounds (the legend of Sisak and Aran Haykids per Movsēs Khorenatsy). It leads us to the conclusion that at this point the process of consolidation of proper Albanian metaethnical population was still not completed with the formation of a single ethnic group within endoethnonym "Albanians" and its exonym continued to remain collective. The creation of the Albanian language alphabet by Mashtots and Albanian priest Beniamin could facilitate the completion of Albanian ethnoconsolidation. However, the development of the new alphabet has passed apparently less successful than in neighboring Armenia and Iberia (Georgia).

5) At the beginning of the 6th century the administrative and ecclesiastical center of the Albanian marzpanate have been moved from the left bank of the Kura River to the ethnically Armenian right bank (to the capital city Partaw, which was newly rebuilt by shahanshah Kavad). This led to a further development of this "country" primarily on the basis of the Armenian ethno-political, cultural and linguistic traditions. The Institute of the "Albanian prince", established in the beginning of the 7th century (apparently, on the so-called "Persian Council" in 616), was in the hands of the right-bank Armenian princely family Gardmanatsi (subsequently called "Mihranids"). In the beginning of the 9th century the title moved to the "Aranshahiks" from central Artsakh (Khachen), who derived from the early medieval Armenian princely family Tsavdeatsi (another branch of the descendants of the legendary Aran Haykid). The new family name ("Aranshahiks") was created as a result of the associated matching of the forgotten official Iranian name of the state of the last Arsacid Albanian king Vachagan the Pious ("Aranshahr") with the name of the eponym for Aran Haykid per Movsēs Khorenatsi.

6) In the period of feudal fragmentation a kingdom status was given not only to the Duchies Shaqi (in Propter Albania) and P'arisos (early medieval region Gardmanatsik', on the right bank of the Kura), but also to Gorozu (in southern Artsakh, later – Dizak) and Khachen. The first kingdom led by a local Armenian royal family Bagratids was founded (according to the restored original of "The History" by Mashtots Ełivardetsi) in 894, and the last three were founded in the second half of the 10th century. Whereas the kingdom of Shaqi-Erethi or "The Second Albanian" kingdom ceased to exist by the end of the 10th century (as a consequence of accession to the kingdom of Kakhethi), the three kingdoms on the right bank of the Kura lasted until the second half of the next century, and fell under the onslaught of saljuks. Thus, we can conclude that the existed erroneous assumption of kinship between the royal family Bagratids born in Shaqi and Aranshahiks from the right bank of the Kura in the literature has already been overcome, as "Albanian prince" Yovhannēs mentioned in 838 and 853 was not the son of Sahl Smbatean (his only son Atrnerseh was called Mu'awiya by the Arabs), and, most likely, he was the homonym grandfather of Hamam-Yovhannēs Bagratid, the founder of the Shaqi kingdom.

7) The separation of Duchies of Lower and Upper Khachen should be associated with the two elder homonym sons of Hassan Great the Hermit (aka – Hassan from Gerakar or from Khachen, the last king of Balq-Siuniq), who married twice and named both his firstborns after his father (Vakhtang from Khokhanaberd and Vakhtang from Hatherq). Their mothers were daughters of, respectively, the penultimate king of Balq (Kata) and one of the last kings of Kiurikids from Tavush (Mamakhathun).

8) The founder of the West Khachen princely family of Dopheans was another son of the same Hassan the Hermit – Grigor I from Tsar, whose son Hassan I married Princess Doph – the sister of famous amirspasalars Zaqarē and Ivanē (amirspasalar Sargis Zaqaryan's sons) and the mother of Gregory II from Tsar.

9) The title of princely family Sakreants appearing in the literature (but not in the sources) owes its origins not to the name of Hassan the Hermit's grandfather or uncle, but his grandson Zaqarē-Nasradola who was the younger brother of Hasan-Jalal – the famous builder of the Gandzasar temple. The father of the latters – Vakhtang from Khokhanaberd (Hasan the Hermit's eldest son), was married to Khorishah, amirspasalar Sargis Zaqaryan's sister (son of Zaqarē I), and the third name (nickname) of junior Zaqarē was apparently related to the unattested non-standard form of his name or his maternal grandfather (*Zak'ar – Sakar).

10) Ivanē-Atabek, son of Hasan-Jalal Dola and Mamqan (who, apparently, was the daughter of Aslanbek son of Martspan Mamikonean from Dseł), also had the third, "mongolian sounding" name – Kherkhan, attested in lapidary inscriptions in Kōshik-Anapat monastery, which was in the possessions of his brothers-in-law Khachen Mamikonids.